րեր. և գնաց գտաւ զփա՛հլու՛ն 'ի շու-
կայն՝ և ասաց. ո՛ւր է միսն. զե՛նչ արիր.
| Եւ փա՛հլու՛ն. 'ի քո տու՛նն տարի.

| Եւ մարդն այն. արի՛ ցոյց զեմ տու՛նն.
| Եւ փա՛հլու՛ն չէտու զայն մարդն՝ ու
գնաց 'ի հողվարքն. Եւ ասաց այն մարդն.
այս է իմ տու՛նն. | Եւ փա՛հլու՛ն. հա այս
է քո տու՛նն. այն տու՛նն՝ որ հիմի կու կե-
նաս՝ այն չէ՛ մնացական. զի յետոյ 'ի
հոս ալիտի գաս.

Եւ ասաց զհաաքս զայս.

| Զխարհիս սահմանքն է հանց, կեա՛հ
կու լցո՛ւի կեա՛հ թերանայ. կու թեթև
ցընէ զիւր բեռն, թէ հիւ շարկել որ կա-
րենայ. | Ըտիկ հիւսանին արէք, որ թա-
պուլ թ որոցք շինէ նա. մէկըն գայ մէկըն
գընայ. իւր բանըն պաթալ չքմնայ.

○ արմացաւ այն մարդն ընդ փա՛հլու՛-
նին խօսքն թէ՛ մէք զդա յիմար գի-
տէաք, նա մեզ վարդապետ եղև.

Եւ ունէր սովորուի փա՛հլու՛ն՝ որ կեր-
թայր 'ի հողվարքն կու կենար. և շատն 'ի
հոն կու պառկէր. () ր մի 'ի դուրս էր
ելէր խալիֆայն շատ հեծելովք. ու դէպ
'ի հողվարքն կանցնէր. և տեսաւ զփա՛հ-

լուսն, և ասաց փահլուսնն թէ՛ հոտ ի՞նչ
կանես: Եւ ասէ փահլուսն. ե՛ տիեզե-
րակալ խալիֆայ. զայս ամէն մեռեալքս
կու նզովեմ: Եւ ասէ խալիֆայն. յէր
կու նզովես:

Եւ ասաց զհաֆսս զայս:

Թէ շատ թէ քիչ զըրկէ մարդ, նա հետ
իւր տանիչ չըկարէ. մարդըն պիտի
հանց ջանայ, որ՛ի յայն կեանքն չամաչէ:
Որ՛ի հոս տայ հոն առնու, հոս զըրկէ նա
հոն վըճարէ. այն կեանքըն ճարակ չըկայ,
որ փողով իւր պարտքն խալիսէ:

Սարմաղաւ խալիֆայն և ասաց. փառք
այ կենդանւոյն՝ որ կայ և մնայ յա-
ւիտեան. թէ խուճարն այնչափ խելօք
խօսք կու խօսի: Եւ ասաց թէ այս մար-
դըս խելօք է, և վն մեղաց զայն կառնէ.
զի թէ դա խուճար էր՝ նա հանց բան չա-
սէր. և դարձաւ խալիֆայն ի քաղաքն.
Եւ օր մի այլ հեծեալ էր խալիֆայն, և
անցանէր դէպ ՚ի հողվարքն, զի ճանա-
պարհն ընդ այն էր. և տեսաւ զփահլուսն
ու ասէ. զի՛նչ կառնուս՛ի հողվարքն: Եւ
ասէ փահլուսն. բազում աւուրք ասա
կամ և կու չտիեմ զիմ գերեզմանն ու
զքոյն, նա խկի քցն աւելի չէ քան զիմն.

դու խալիֆայ ես, և ես աղքատ մուրա-
ցիկ եմ. և քո հողն և իմն մէկ չափով է.
Եւստաց շէաֆաա զայս:

Մարդ մի զհոգիդ դատեր, ու զմար-
մինդ առնէր սիրելի. դարձիր ի մեղաց
ճանփէն, որ չլինիս ողորմ ու լալի: Տանա
ու բարի գործէ, զի քեզմանն քեզ կու
նայի. յայս հողոյս դու հանց գընա,
որ հոգիդ հըրոյն չըլնի:

Եւստաց խալիֆայն ընդ իւր մեծա-
մեծքն, տեսէք, ինչ իմաստուն է դո-
րա խօսքն. և համարձակապէս խօսքն կու
տայ. չէ պարտ որ զդա՛նի մեղանից ի զատ
թողումք. և ապա հրամայեց կոչել զնա
ի յիւր դարպասն: Եւ օր մի խալիֆայն ի
յաթոռոյն ելեր գնացեր էր, և գնաց փահ-
լուլն նստաւ ի յաթոռն խալիֆային:

Եւ եկին ճորտերն՝ սկսան ծեծել զնա, և
նա ճչեց պինտ: Ասեց խալիֆայն՝ երեկ
է՛նի սիրտ ելաւ ծառանուէն, և ասէ. է
փահլուլ՝ յէ՛ր կու ծեծեն զքեզ: Ասաց
փահլուլն. է՛ տիեզերակալ խալիֆայ.
երբ զիս այս մէկ պահ նըստելուս համար
հանց կու ծեծեն. ապա ի. քեզ զի՛նչ պի-
տի անեն դատաստանին:

Եւստաց շէաֆաա զայս:

Մարդեք մի ծեծէք դուք զիս, չեմ ցանկար փառացդ ակժողոյ, զիմ ընթակեցի շեղայ, ու չունիմ սրտիկ շինելոյ: Իմ կեանքս իմ աչացն ելեր, այլ չունիմ տեղեր խընդալոյ. դբրի զիմ մարմնս'ի մահ, զի չունիմ հոգի տանջելոյ: Ի՛մարդ որ փառացդ հասար, տէր յերկրի՝ եղար ճաթոռոյ. դու հանց շեփացար 'ի քեզ, որ չըդնես դու մոհալ մարդոյ: Ե՛հ մահ ունէ չունիս, ոչ ճարես պաշար գնալոյ. Ծիս փառքն այլոց թողուս, կու լինիս դու ափ մի հողոյ:

Սեց խալիֆայն զայն իմաստուն բանաբըն, և հարցանէր շատ բանս փահլուլին, և նա հնարիւք տալոյ զպատասխանին: Եւ յայլ 'ի մէկ օր մի հարցաւ խալիֆայն ընդ փահլուլն և ասէ. փահլուլ՝ ասանձ, այսօր ի՞նչ կանէ անձ: Եւ փահլուլն. այդ դիժար հարցմունք է. այսօր համբերեա՛ն ինձ, վաղիւն ասեմ: Եւ եկ վաղիւն, և հեծել էր 'ի սեյէ մի: Եւ ասէ խալիֆայն. ասանձ, ի՞նչ կանէ անձ: Եւ փահլուլն. հրամայէ, որ ամէն ծառայքդ 'ի դուրս ելանեն, և ես տամ զպատասխանին: Եւ հրամայեաց խալիֆայն ծառայիցն ելանել 'ի դուրս. և մնաց ինքն

փահճլուռն մէն : Եւ ասէ խալիֆայն . ինչ
 կու առնէ ամ'ի յայս ժամն : Եւ փահ-
 ճլուռն . է խալիֆայն՝ արի պահ մի նիստ 'ի
 յիմէշս , և ես'ի քո յաթուղ նստիմ . նա
 ասեմ . քեզ , թէ ինչ կանէ ամ : Եւ հայե-
 ցաւ խալիֆայն՝ որ մարդ չէր երեւեր 'ի
 բոլորն , ելաւ նստաւ 'ի յէշն , և փահճլուռն
 'ի խալիֆային աթուռն նստաւ , և ոչ խօ-
 սեր : Եւ խալիֆայն . յէր չես խօսիր ,
 ինչ կանէ ամ : Եւ փահճլուռն . ինչ խօ-
 սիմ , չես գիտեր ինչ կանէ . դու որ խա-
 լիֆայ ես , 'ի յէշս իմ նըստցուց , ես որ
 փահճլուռ եմ , նա'ի քո աթուղ նստցուց .
 ասա զայս արար 'ի ժամուս յայսմիկ . և
 խալիֆայն զարմացուաւ , և ոչ կարէր խօսիլ :
 Եւ ասաց փահճլուռն զհաճառ զայս :

Դու զանբըննին յէր քըննես , երբ որ
 միտքըդ իւրեան չհասնի . զամ ակա-
 րէ տեսնուլ , կամ իմանալ զնա մարդ կեն-
 դանի : Երբ չես քո կենացըդ տէր , կու
 մընաս դու յերկուց շնչի . այլ տէր հալ-
 րենեացս է նա , որ երկինք ճերկիր կու
 տանի :

Օ իծաղեցաւ խալիֆայն և ասէ . փառք
 Խոյ կենդանւոյն և բարձրելոյն յաւի-
 տեան . զի այս ցեղ խեւ զարմանալի պա-
 տաս

տասխանս կուտայ. բայց թողի ինձ, թե
 չէ՛ դա խել, այլ խելօք է. և զնաց փահ-
 լուլն: Լաւանցաւ օր մի քանի ՚ի վր. և
 հրամայեաց խալիֆայն կոչել զնա: Լաւնա
 նստաւ ՚ի յէշմի, և եկաւ առ խալիֆայն:
 Թիծաղեցւ խալիֆայն և ասէ. փառք այ
 կենդանւոյն և բարձրելոյն յաւիտեանս:
 Լաւ ասէ խալիֆայն. իբր մի կամիմ հար-
 ցանել ՚ի քեզ, և դու զըզորդն ասա: Լաւ
 նա ասէ՝ հրամայեա՛ խալիֆայ: Եւ խա-
 լիֆայն. քանի աստղ կայ ՚ի յերկինքն:
 Եւ ասէ փահլուլն. ես աղէկ գիտեմ, զամէնն
 համրեր եմ ասէ. որչափ իշուս վերայ մազ
 կայ՝ նա այնչափ աստղ կայ ՚ի յերկինքն.
 Թե չես աւտար՝ իջեր դու համրէ. Լաւ է
 ջաւ խալիֆայն յաթողոյն, և սկսաւ համ-
 րել զիշուն մազն. Եւ ասէ փահլուլն. յառաջ
 զագին համրէ: Լաւ սկսաւ խալիֆայն այն-
 պէս առնել, և ոչ կարէր, թիծաղեցաւ
 խալիֆայն.

Լաւ ասաց փահլուլն զիսկառ զայս.

Եւ յերբ չըգիտես հիմայ, թե գըլխոյդ
 մազըն քանի է. զետ զիս փահլուլ յեր-
 կինիս, թե յերկնից աստղըն քանի է:
 Օ ինչ որ աստ գործել լինի, ամէնին հա-
 մար տալոց է. որչափ զըրկէ գանձ ժող-
 վէ.

վէ, հոս թողու տանիլ չկարէ :
 Դմաչեց խալիֆայն, և եթող զիշուն ա-
 գին 'ի համբելոյն, և ելաւ նստաւ 'ի յա-
 թոռն : Եւ ասէ փառք օրն՝ որ այսպէս
 գիտուէ՝ պատուէ զսիրելիս իւր և տայ
 զինաստուի ումոր կամի. զոր ոչ որ կարէ
 տալ նմա պատասխան 'ի բանս և 'ի հարց-
 մունս իւր : Եւ այսիսի վարուք կեցեալ
 փահլուլն՝ և երանելի կենօք փոխեցաւ
 յանվախճան թագաւորութիւնն 'ի
 Ք. Ծ. Ծ. 'ի Տ. Ծ. մեր :
 Արում վայելէ փառք իշխանութիւն և
 պատիւ : Եւ ժամ միշտ և
 յաւիտեանս
 Եւ մէն :





Խրատք և նասիհէլէ օգտաւար :



ՍԵՆՍԵՆ, ՕՆՐԱՄԵ

Նազան թագաւորին՝ որ նուշ
բաւան ասեն :

Սա ասեն թագ մի ունէր ոսկի և պատ-
ուհական անկերով . և շինած էր ի քան
կիւնով . և ամէն անկիւն՝ այս նասիհէթ-
ներա գրած էր . և յորժամէնէր ի դուրս՝
կարդայր առաջի զօրացն , և ասէր թէ՝
ի միտ առէք . և ապա դներ ի գլուխն :
Եւ թագն էր եախուծ և զմրուխտ ա-
կամբ և արմատով և լաճիվարդ քարով
յօրինեալ :

Եւ

Սանճնաճաճ մարդն՝ յիսնէ՝ ի զատ պա-
հէցէք : Եւ ժամնաւորաց՝ իմ գանձէն

բաժին տոճէք : Բանգէտ մարդկանց
դէմ՝ անպատեհ խօսք մի խօսիք : Օ ան-
դրտանելին՝ մի՛ փնտրուէք : Ի բանին մի
արտորայք : Օ բանն՝ ժամէ ՚ի ժամ մի
ձգէք :

Ի

Ի բանին՝ սկիզբն և ՚ի կատարածն հայե-
ցարո՞ւք : Զոր տուն որ մըտանէք՝ յառաջ
դէլն իմացարո՞ւք : Օ ամէն բան կամ կը
տաւ՝ Ժ տարւոյ չափեցէք, և ապա՝ կտրե-
ցէք : Օ փորձածն՝ մի՛ փորձէք : Օ փոր-
ձածն՝ անփորձի մի՛ տայք : Օ մարդն՝ որ
չէք փորձեր՝ նորա մի՛ վստահանայք :
Օ խոստովմն որ ՚ի ձեզ է՝ մինչև ՚ի ձեր
անձն մի՛ խնայէք : Սակաւ խոստացէք՝
և աւելի՛ կատարեցէք :

Ի

Ի նոճանի և խոնարհ տրոճեաւ ուսիք :
Օ ճշմարտութի՛ սիրեցէք : Օ կարող-
ղութե՛ հարկիքն՝ գիտացէք : Օ համբե-
րօղ մարդն՝ ճանաչեցէք : Օ այս կեանքս՝
մի՛ օր գիտազէք : Օ առողջութե՛ հարկիքն՝
գիտացէք : Օ ձեր կեանքն՝ անգիտութե՛
մի՛ անցնէք : Ի յայլոց տրամո՞ւթի՛ մի՛
խնդայք : Ի նդ կոտորածն՝ ընդ գնացածն՝
ընդ թափածն՝ ընդ այրածն՝ մի՛ տրամիր :

Ի մեծամեծաց յորոգայթն՝ կոծեցա-
րուք: Սարդկանց՝ ամենայն իրաց համ-
բերեցէք: Ի տեղի ուր համբերել պիտի՝
մի՛ ըշտապիք: Ի հետ ամէն մարդոյ՝ ռես-
կալ մի լինիք: Ըմէն մարդ՝ զիւր չափն
թող իմանայ: Օ՛ ձեր զոտն՝ քան զձեր
անկողինն աւելի մի՛ մեկնէք: Ի պատե-
րողմէ՝ երես մի դարձնէք: Օ՛ այլոց
կռիւն՝ ի ձեր յանձն մի առնոյք:

Ի իւր թէ հանդիպի ի ձեր մէջն, միջակ
արարէք, բայց շուտ հաշտեցարուք:
Ի սրտներդ՝ նախանձ մի պահէք:
Օ՛ ամէն բան՝ համբերելով արարէք:
Սկիզբն նոր տընկելով արարէք՝ և ապա
զհինն խլեցէք: Օ՛ երևելի զգայարանք
ձեր՝ պատրաստ պահեցէք: Ընդատե-
բաներուն՝ ի զստ կացէք: Ի մէջ մարդ-
կանց՝ վատ անուն մի լինիք:

Ի գողունեաց ընչից՝ մի շահիք: Ի յէ-
ղեր թագաւորի՝ տուն մի շինէք: Օ՛ ձեր
բնակուածի՝ մօտ ի խանութ մի շինէք:
Ի պիղծ մահալէից՝ ի զստ կացէք:
Արք տնխրատք են՝ իշխանաւորի թող ծա-

ուայրու թի չանեն : Ի նրնկեր՝ ի ճանապարհ
մի երթայք : Ի նարժանից՝ մի՛ խոնարհեք :
Ի հետ չար կամաց՝ մի՛ դատիք : Ի յո-
տար հող՝ ծառ մի տընկեք :

Ի

Ի յաղահատ տեղիք՝ սերմ մի՛ ցանեք :

Ի հետ ամէն ազգ մարդոց՝ մի՛ փո-
թըթոճիք : Ի նոր քսակ մարդոճէ՝ փոխ
մի՛ առնոյք : Ի հետ անարժան մարդկանց՝
մի՛ նըստիք : Ի հետ անհարկից՝ սէր մի՛
դնէք : Ի սմոս մարդկանց՝ մի՛ հաւատայք :
Եւ ի հետ նց՝ աղուհաց մի՛ ուտեք : Ի հետ
ծառայի մի՛ կռճիք՝ որ չամաչեք իւր տի-
րոջէն : Եւ իւր աղայէն ի զատ կացեք :
Չտեսած մարդոց հետ՝ սիրելու թի մի՛
առնեք :

Բ

Տղայն որ ի մօրէն ցաւոտ ծնանի՝ իւրն
դեղ մի՛ առնեք , զիրա ֆայտա չունի :
Ի նշահ մարդոցն և խելառին՝ հարբած ին
խրատ մի՛ տայք : Ի ուր զձեզ՝ մեծ մի
տեսնոյք : Ի լեզուանի կնոջէ՝ պատրաստ
կացեք : Ո՛վ որ զխրատն սիրէ՝ այնոր
տոճէք : Օ ուտելն և զխմելն՝ մինակ մի՛
սիրեք : Չէր հնազանդելոցն՝ կիւճ մի՛
անեք : Օ ձեզ սիրողն՝ մի՛ տտեք : Ո՛վ որ ի

Դ

ձեր հետ սեր ունի՝ զնա անտես մի՛ առնէք : Ընպատեհ՝ պատճառէ՝ զծառայն ձեր մի՛ ծեծէք : Ի յայլոց հացն աչք մի՛ ձգէք :

Եւ

Օ ձեր հացն՝ յայլոց սեղանն մի՛ դնէք , Եւրբ զձեր հացն ուտէք՝ զձեր զրոյցն տեսէք : Տղայոց և ճահիլեց հետ՝ թէպտիր և մուշավէրէ մի՛ անէք : () Թար կին և պառաւ՝ ՚ի ձեր տունն մի՛ թողոյք : Ի չար կնոջ խիլաթէ՝ պատրանստ կացէք : Օ ձեր հոգին՝ ձեր մարմնոյն ծառայ մի՛ անէք : Ի ձեր որդւոց և դստերաց՝ մահն մի՛ տրտմէք : Ի յօտար բան՝ մի՛ վըստա հանայք զերդ փորձած :

Եւ

Օ այգին ձեր ՚ի պահ օտարի՝ մի՛ տայք : Ի յայլոց ապրանք իբրև ըզտէրն իւր՝ մի՛ վստահանայք : Ի յօտար մարդոց տունն՝ տանուտէրուի մի՛ առնէք : () Օտարն որ չէք ճանաչեր՝ ՚ի ձեր տունն անուտէր մի՛ դնէք : Ըն մարդիքն որ զայս կեանքս խիստ կու սիրեն՝ դուք զնս մի՛ սիրէք : Ըն և կնոջ՝ ծառայի և պարօնի շառ մի՛ ձգէք :

Եւ

Ըն թագաւորն ահարկիւ և պատրանստ Եւ

կացէք : Թաղաւորն թէպէտ խոնարհի՝
 դուք մի՛ համարձակիք : Իշխանաւորն
 սակաւ սիրեցէք՝ բայց՝ ի ղէյպեթն ղենկին
 մեծ սիրեցէք : Բնակալ մարդկանց՝ ի
 զօտ կացէք : Օտմէն մարդոյ՝ հարկիքն
 իմացէք : Բնդ բախտաւորն և ընդ տօլլա
 թաւոյն՝ մի՛ նախանձիք : Բնդ իմաս
 տունսն՝ մի՛ դէմառնէք և քամահէք : Ղե
 նդրաւ աէր են դըջի և իմաստուէ : Բնդ
 որք գիտուէք են՝ զնն թեթեւ մի՛ աեսնոյք :
 Թէպէտ դուք իմաստուէ էք՝ այլ քան
 զձեզ աւագն մի՛ համարէք : Բնդ հանձա
 րեղեն՝ մի՛ վարիք : Բնդ որ ծերք են՝
 պատուէցէք և գաւազան լերուք նց :
 Ի բանստեղծ մարդկանց՝ ի զաւտ կացէք :
 Դուք ղմրդն՝ ծաղը և տընաղ մի՛ առնէք :

ԺԲ

Օծերքն՝ հարկօք սիրեցէք : Օմեծն՝
 մեծ սիրեցէք : Օխաբուսիկն կըտ
 րեցէք ի միջոյ՝ որ անհոգ կենայք : Ի հեռ
 Ժլատի և ոչ ինչ մարդկանց՝ մի՛ դատիք :
 Օհօր և զմօր՝ և զազգի հարկիքն՝ մեծ
 տեսէք : Ի ձեր մօտ ազգէն՝ մի՛ կըտրիք :
 Ի մեկ հեռ մրդոյ՝ մի՛ տայք զձեզ կլանել :
 Օերդումն և զպայմանն՝ որ է ահթ ու
 ամանն՝ մի՛ կոխէք : Բնկոչ՝ ի պատիւ մի՛
 երթայք :

ԺԻ

3 Թամաւուրս ձեր՝ խրատիւն և իմաստութիւն կացէք։ Թէպէտ և դուք չար լինիք՝ զաղէկն սիրեցէք։ Իսկ թէ աղէկ լինիք՝ զչարն մի՛ բամբասէք։ Այստ մարդկանց սրտին՝ մի՛ օգնէք։ Ի սիրելւոյ և՛ի զարմէ՝ զգուծ մի՛ վերցնէք։ Ի հետ պիղծ մեռելի՝ զձեր մեռելն մի՛ դնէք։ Աստուծոյ և խելք ուսիք։ Ի խրատէ մի՛ ամուլէք։ Ի մէջ մարդկանց՝ քան զբարին այլ բան մի՛ խօսիք։

ԺԻ

11 Վ քան զձեզ աղէկ է և գիտուն՝ զինքն մեծ տեսէք։ Իսկ այլ իրաց՝ քան իմաստութեց բանից, այլ բանի խնդրօղ մի՛ լինիք։ Թէ իմաստունքն հեռի են՝ դուք գնացէք իւրեանց մօտն։ Օ անցեալ ժամանակն՝ հեշտ մի՛ համարիք։ Օ ինչ որ յՍո չունիք՝ ի մարդունէ մի՛ խնդրէք և մի՛ քընքըշէք։ Թէ կուզէք որ անհոգ մը նայք՝ աղէկ արուեստ ուսիք։ Իսկ մի որ ի պահ առնուք՝ ի տրն հասուցէք։ Փոխ որ առնուք՝ վճարեցէք։

ԺԻ

12 Խօսք որ ի խելաց չէ՝ մի՛ խօսիք։ Խօսք որ ասելու չէ՝ մի՛ ասէք։ Օ չեղուն ձեր՝ ի

չար ասելն մի' սովորեցընէք : Եւսպատե՛հ խօսից՝ մտիկ մի' դնէք : Պիղծ խօսից՝ պատասխան մի' տունէք : Թադաւորաց՝ յոյս մի' դնէք : Լմէն որ՝ Թող իւր արուեստն մժղլի : Սինչ որ լէք զպատասխանին՝ սարսեցէք : Օ բանն որ չգիտենայք՝ մի' ասէք : Օ ինչ բան որ ՚ի ձեր սիրտն չկայ՝ զայն լեղո՛ւաւ մի' խօսիք :

Ժ.Օ.

Լմենայն մարդոյ խօսաց՝ մի' վըստահանայք : Օ բարի խօսքն՝ յամէն մարդոյ ընդունեցէք : Ոչ իրաւ և ոչ սուտ՝ մի' երգո՛ւիք : Օ այն կեանքն՝ ընդ այս կենցաղոյս մի' փոխէք : Լմէն մարդոյ զայն կամեցարո՛ւք՝ զինչ որ ձեր անձինն կուղէք : Որբերոյ իրք՝ մի' խնայէք : Երկայն ճանապարհի՝ պաշար պատրաստեցէք : Ելրեաց՝ հանապազ ողորմեցէք : Կըտրճուէ ժամանակն՝ զձեր ուին ՚ի միտ բերէք : Օ ծերուէ բանն՝ ՚ի կըտրճուէ ժամանակն հոգայցէք :

Ժ.Բ.

Ի ժլատուէ փախիք : Եւատուէ արու՛եստ ուսիք : Սկիզբն առատուէ՝ ՚ի ձեր հալալ արդեանցն արարէք : Օ մարդ կուէ կերպն՝ ճանաչեցէք : Ի հեռ հարկեորաց՝ սէք դըրէք : Ի ցածէն և յան

գիտէն՝ խնդիր մի՛ խնդրէք։ Ի՛հետ ամէն
մարդոյ՝ սէր և հարկեւորութիւն ըստ ժամա-
նակին արէք։ Օ պատուականն՝ պի՛նդ-
բւոնէք։

ԺԲ

Չմուսն զտխիրան՝ յամառն հոգացէք։
Օ այս աւուր բանն՝ ՚ի վաղն մի՛ ձգէք։
Բանն՝ որ եղած չէ՝ զէտ եղած մի՛ ձեւէք։
Օ դեղն՝ յառողջութե՛ն ժամն խմեցէք։
Օ հաճամաթն՝ ՚ի յատենն սուէք։ Եւթ-
ծեր լինէք՝ կըտրճութե՛ն մի՛ ցանկայք։
Օ բանդէտ մարդն՝ ՚ի վր՛ բանի դրէք։
Օ ճահիլն և զերկչոտն՝ ՚ի վր՛ մեծութե՛ն
մի՛ դնէք։ Եւթք որ ոխս պահեն՝ փախե-
լուք ՚ի նցնէ։ Լ՛մէն իրաց՝ շուտ մի՛ հա-
ւատայք։ Օ ձեր ընտանիքն՝ սիրեցէք։

ԺԺ

Ի՛նդ հետ ուղղորդ սիրելէց՝ քիթի վեր
մի՛ կենայք։ Օ աղգականս ձեր՝ մի՛
վերաւորէք։ Եւթ թողուք զձերայինսն՝ և
՚ի յօտարն շփանայք։ Օ ձեր հին սիրելին՝
մի՛ մոռանայք։ Օ ձեր թշնամին՝ խիստ
մի՛ արհամարհէք։ Իմաստուն թշնամւոյ՝
խիստ մի՛ վախնայք։ Օ անդէտ սիրելին՝
մեծ մի՛ գիտնայք։ Ի՛ թշնամութե՛ն սիրոյ
տեղի պահեցէք։ Ի՛ սիրելուէ ժամն՝ ըղ

Թշնամութի յիշեցէք: յուրումն արուեստ՝
մի՛ ուսանիք: Օ՛ ձեր սիրելին՝ յաղքա-
տութե՛ ժամն փընտուեցէք:

Ի

Մէն գիշաւորին՝ մի՛ դիշանայք: Մէն
մարդ՝ թող զիւր չափն վայելէ: Չխոր
հըս՝ ձեզ խաղաղ թող չթուի: Օ՛ հոգւոյ
բաժինն ՚ի մարմնաւորս՝ մի՛ մոռանայք:
Օ՛ տղայն ձեր՝ հնաւորութե՛ արուեստ ու-
սուցէք: Օ՛ ձեր կերպս: ասնն՝ ՚ի սիրելեաց
և ՚ի թշնամեաց ծածո՛ւկ պահեցէք: Օ՛ ձեր
խորհուրդն՝ ամէն մարդոյ մի՛ տսէք:
Ի տեղի ուրուք՝ ահանջ մի՛ դնէք:

ԻԼ

Օ՛ ձեր խորհրդակիցն՝ ՚ի ժամանակի
բարկութե՛ փորձեցէք: Օ՛ կին և զորդիս՝
՚ի ժամանակի աղքատութե՛ մի՛ ուրանայք:
Լու մեծամեծքն՝ աչք ՚ի բաց կացէք:
Մէն իրաց՝ զչափն սիրեցէք: Օ՛ հպար-
տութի՛ քան ըզմահն այլ դառն իմացէք:
Օ՛ անհոգութի՛ ՚ի ձեզ՝ անկենդանութի՛
գիտացէք: Բնկեր զայն սիրեցէք՝ որ
իւրմէն իւր միշտ հիւսնէք:

ԻԲ

Մի՛ ժամանակի անհոգութե՛ քան ՚ի նե-
ղութե՛ ժամանակն այլ խիստ պատրաստ

կացէք : Օ սմէն բան՝ ՚ի յառատութե
 ժամն հոգացէք : ՚ի յաժնութե՝ զթան
 կուծին յիշեցէք : Լորբ առողջ կենայք՝
 զհիւանդութիւն ՚ի միտածէք : Օ սողիկն
 կամ գլին՝ ՚ի ճանաչ տեղաց առէք :
 Օ մարդ մէկ հեղ տեսնելով՝ մի փա-
 թըթո՛ւնէք : Ընշահ սիրելեաց՝ ՚ի զատ
 կացէք :

Եւ Ք. Ծի մարդասիրին՝ փառք յաւի-
 տեսնս յաւիտենից
 Ըմէն :



Խրատք պիտանիք և օգտակարք • շոք ատա-
 ցեալէ Խեկարայ Իմաստնոյ :



Ս ԽԻԿԸՐ Ս ԳՊԻՐ
 էի սնէքերիմայ արքացին ասո-
 րեստանեսայց • և արարի է կինս •
 և շինեցի է սպարանս • և ես խի-
 կարս եղէ է ամաց, և ոչ եղև ինձ որդի :
 Յայնժամ մօտի առ կուռքն բաղում ըն-
 ծայիւք • և վառեցի հուր, և արկի խուռ-
 կրս անուշահոտս՝ ի վրնր • մատուցի զմն-
 ծայս, և զոհեցի զոհս վս ծննդեսն : Եւ

աղաչեցի ասելով, որ մտեարք իմ և չորս
 իմ բեւեռիմ և շահմիմ, հրամայեցէք և տուք
 ինձ արու զաւակ. քանզի ահա խիկարս
 կենդանի մեռանի: Եւ զինչ ասեն մար-
 դիք, թէ խիկար իմաստուն էր և ճար-
 տար. մեռաւ և ոչ կայր նր որդի, որ թա-
 ղէր զնա. և ոչ դուստր՝ որ լայր զնա.
 զինչ ասեմ, չունիմ ժառանգ յետ մահ-
 ուն իմոյ: Եւ եթէ որդին իմ յօրն ժ-
 քանքարս ծախեսցէ, ոչ կարէ սպառել
 զինչս իմ. այլ զի միայն արկցէ հող ձե-
 ոօք իւրովք ի վր իմ. և զի մի՛ մնացայց
 անյիշատակ:

Յայնժամ ձայն եղև ՚ի չորսոցն իմոց և
 ասէ. խիկար, ոչ հրամայեալ է լինիլ քեզ
 զաւակ. բայց թէ առցես զնաթան քեռ
 որդին քոյ, և սնուցես զնա որդի քեզ, և
 նա հատուցէ քեզ զանուն քո:

Եւ ապա առի զնաթան քեռ որդին իմ
 առիս, որ էր ՚ի մի ամի. և հագուցի նմա
 բեհեզս և ծիրանիս. և եդի մանեակ ու-
 կի՛ի պարանոց նր ուն որդի թագաւորի.
 դեղաշուք զարդարեցի զնա. և արքուցի
 նմա կաթն և մեղր, և ննջեցուցանէի զնա
 ՚ի վր արծուոց և աղաւնեաց իմոց, մինչև
 եղև է ամաց: Եւ ապա սկսայ ուսուցա-

նել նմա զդպրուի և զիմաստուի և զհան-
ճարագիտուի, և զպատասխանիս հրովար-
տակաց, և զդարձոճածս հակառակ խօ-
սից. և ՚ի տոճէ և ՚ի գիշերի ոչ դադարէի
ուսուցանելոյ. և յագեցուցի զնա ուս-
մամբ իբր հացիւ և ջրով:

Ի պա ասէ արքայն առ իս՝ դըպիր և իմաս-
տուն խիկար. գիտեմ, զի ծերացեալ ես.
և յետ վախճանի քոյ ով է, որ կատարէ
ճարտարութիւն և իմաստութիւն զդործս ար-
քունեաց մերոց. և ես հանապուղ տրտում
եմ վս. այդ խորհրդիդ:

Պատասխանի ետու նմա և ասացի.

Ընքայն՝ յաւիտեան կաց. է իմ օրդի՝
որ առաւել հանճարեղ և իմաստուն է
քան զիս: Ըսէ թագաւորն. աճ՝ դայ ա-
ռիս՝ զի տեսից զնա: Եւ իբրեւ աճի զնա՝
կացուցի զնա ամբի թիւորին: Յորժամ
ետես թագաւորն, ուրախ եղև և ասէ.
այս օրս օրհնեալ եղիցի. քանզի խիկար ՚ի
կենդանուէ իւրում է աճ և կացոյց զոր-
դին իւր առաջի իմ, և ինքն ՚ի հանդըս-
տեան եղիցի: Եւ ես երկրպագի ար-
քային իմոյ, և առեալ տարայ զնա թան-
յապարանս իմ. և այսպէս ասէի ՚ի խրա-
տելն իմում:

Խորատ Խիկարաց՝ զսր Էփուր սրտ-ոյն Է-րոյ
նախնայ :

Ա՛րդեակ՝ Եթէ լսես խօսք ՚ի դուռն
Թագաւորաց և իշխանաց և մեծամե-
ծաց, պտհեա՛ և մեռ-ո՛ղնա՛ ՚ի սրտի քու մ.
և մի՛ ասեր մարդոյ , մինչև այլքն ասին
՚ի քեզ :

Ա՛րդեակ՝ զմարդոյ կապտծ և մօհրածն
մի՛ արձակեր . և զարձակեալն մի՛ կապեր :

Ա՛րդեակ՝ լա՛ւ է իմաստուն մարդոյն հետ
քոր կրելն քան զանգեալին հետ ուտել
և խմելն :

Ա՛րդեակ՝ մի՛ լիցի . զե առաքեսցին զքեզ
՚ի բան, և դու ոչ իմանաս զբանն՝ և եր-
թաս . յետոյ այլ ոք ուղարկեն՝ որ երթայ
՚ի բանն , և դու ծաղը լինիս :

Ա՛րդեակ՝ մի՛ այնպէս սներ՝ որ երթաս
՚ի տեղ մի , չ՛ի քեզանէ մեծ մարդոյն ՚ի
վեր նստիս . որ չասեն , Եթէ եկա՛ ՚ի վայր ,
որ յամօթ լինիս . ՚ի վայր նիստ՝ որ ասեն՝
Եթէ եկա՛ ՚ի վեր :

Ա՛րդեակ՝ Եթէ ընկերն քո հիւանդ է , մի՛
ասեր ՚ի միտք , Եթէ առնծ կամ խնծ որ
զըտնու մ , և ապա երթամ ՚ի տես . երթ
ոտիւք՝ և տես աջօք . զի զհիւանդն դա-
տարկ տեսանել շատ լաւ է՝ քան զբա-

զուժ կամակս ուտելոյ :

Ո՛րդեակ՝ մի՛ հեղուր զարիւն մարդոյ ,
զի մի՛ այլքն հեղձցեն զարիւնքո :

Ո՛րդեակ՝ մի՛ շնար ընդ այլոց կանանց ,
զի մի՛ այլք շնասցեն ընդ կնոջ քո :

Ո՛րդեկ՝ լաւ է ծառային միամտութեամբ տալ
պատասխանի տն իւրում , քան զոր խրա-
տելով խօսի , և ածէ ՚ի բարկութի :

Ո՛րդեակ՝ մի՛ տար ընկերի կոխել զոտս
քո , զի մի՛ համարձակեսցի և կոխեսցէ
զպարանոց քո :

Ո՛րդեկ՝ մի՛ լինիր քաղցր որ կլանեն զքեզ ,
և մի՛ լինիր լեղի որ թքանեն զքեզ :

Ո՛րդեակ՝ լաւ է կոյր աչօք՝ քան կոյր մը
տօք . զի կոյրն՝ արագ տեսանէ զերթ և
եկն անսպասարհին , և մտօք կոյրն՝ հա-
նապազ գնաց կամակոր :

Ո՛րդեակ՝ լաւ է աղջիկ՝ որ ծնանի և
շուտ մեռանի , քան թէ ապրի , և աղգին
իւրոյ սե երեսանք բերէ :

Ո՛րդեակ՝ լաւ է կողմ ՚ի ձեռին քում ,
քան թէ չարիք ՚ի յայլոց ձեռքն :

Ո՛րդեակ՝ լաւ է ուլ մի ՚ի ձեր տանն զե-
նած , քան թէ եզ մի ՚ի տունս այլոց :

Ո՛րդեակ՝ ՚ի յապարանս թագաւորաց մի՛
մտաներ , և ը կնոջ դատաւորի մի՛ խօսիր :

Ա՛րդեակ՝ աչք մարդոյ ագահէ, ոչ կըշ
տանայ գանձով՝ մինչև լցնի հողով:

Ա՛րդեակ՝ ընդ մարդոյ կնոջ մի՛ խնամախօ
սիր. զի թէ գէշ լինի՝ անիծանեն զքեզ.
Եւ թէ աղէկ լինի՝ ոչ յիշեն զքեզ:

Ա՛րդեակ՝ յորժամ դատաւտան երթաս,
մի՛ շատախօս լինիր. և մի՛ ծռռ գրռ
ցեր, զի մի՛ սուտ հանցն զքեզ՝ և մըտ
նուս ՚ի զընտան:

Ա՛րդեակ՝ յառաջ զխօսքն ՚ի միտքդ խոր
հիր. թէ սուտ ես՝ մեղայ ասա. զի մի
դատաւորն արկցէ ՚ի բանտ, և թալանէ
զինչս քո:

Ա՛րդեակ՝ զմարդն որ ՚ի կախել տանին՝ մի
յառաջ նր ընթանայր, զի մի՛ մատնէ
զքեզ և ասէ, թէ սա այլ իմ ընկեր է:

Ա՛րդեակ՝ յորժամ երթաս ՚ի հարսանիս
կամ ՚ի մահատուն՝ յառջ հաց կեր՚ի տու
նըդ, և ապա գնա. զի թէ հարսանիս է՝ ՚ի
շատ խնդուէն հոգ չանեն զքեզ, և թէ
մահատուն է՝ ՚ի շատ տրտմուէն մոռա
նան զքեզ, և դու մնաս անօթի:

Ա՛րդեակ՝ կամուրջ մի հեռի գնալ անցա
նել լաւ է, քան մըտնուլ ՚ի ջուր մօտիկ:

Ա՛րդեակ՝ նոր դատաւտան մի՛ սահմաներ
անիրաւութեւ. թէպէտ և իշխան լինիս՝ ՚ի

ստճմանէ 'ի դուռս մի ելնուր :

Ա'րդեակ՝ մի բանար զաչս քո և տեսաներ
զկին գեղեցիկ , զի գեղեալ է զերեսն՝ և
ծորուրեւ է զաչսն , և թէ վատնես զամ
ինչս քո 'ի սէր նր՝ ոչ ինչ առաւել դատ
նես՝ քան զկրնով քոյ . բայց միայն ըզ
մեղքն և զսև երեսութիւն :

Ա'րդեակ՝ թէ տեսանես զերիտասարդ
մարդն թռուցեալ յօթս՝ մի հաւատար
գործոց նր . զի բան ծերոց հաստատ է .
բայց երիտասարդ որդւոյն՝ ոչ ահա օրի
նակ սորա ասոցեալ է , թէ իբր բերան
առիւծու՝ որ զերծուցանէ զնա :

Ա'րդեակ՝ թէպէտ և որդին քո իմաս
տուն է՝ յառաջագոյն փորձեա՛ զնա , և
ապա տուր զինչս քո 'ի ձեռն նր :

Ա'րդեակ՝ 'ի կնոջէ յօտարէ և 'ի հարս
նաւրնէ՝ քան զընկերսն յառաջ ել և գը
նա՛ , և այլ մի դառնայր՝ որ հարկեւոր լի
նիս . ապա թէ դառնաս՝ փոխարէն հար
կացդ առնուս անարգուի :

Ա'րդեակ՝ ո՛վ որ քան զքեզ պինդ երես
է , մի հակառակիր ընդ նմա :

Ա'րդեակ՝ թէ բարձր է տան շէմն քո ա
ռաւել քան թէ կանգունս այլ՝ որ մտա
նես խոնարհեցո՛ զգլուխ քո :

Ո՛րդեակ՝ մի՛ առնուր կշռով մեծ՝ և ծախսեր փոքր, և ասեր ՚ի սրտի քու մթէ շահեցայ. և ոչ գիտես՝ որ փոխանակ ՚ի յայն փոքր շահուն, բարկանայ անծ. և զոր ունիս՝ առնուր ՚ի ձեռաց քոց, և տայ այլոց:

Ո՛րդեակ՝ մի՛ երդուի՛ր և մի՛ ասեր սուտ. զի սուտ երդումն և սուտ ասելն՝ զմարդոյ կենաց պակասութիւն բերէ:

Ո՛րդեակ՝ եթէ կամիս խնդրել բանս ինչ յայ՝ ՚ի կամաց նր՝ մի՛ հեռանար. և զոր խնդրես՝ տացէ՛ քեզ:

Ո՛րդեակ՝ քեզ զինչ բան որ չա՛ր թուի՝ ընկերին քում մի՛ աներ. և զոր ինչ բարին է կատարէ. և արասցես քեզ բարեկամ. և դու յամցանց բարի գտցես:

Ո՛րդեակ՝ յորժամ լինիս ՚ի մէջ մարդկան՝ մի՛ յայտներ զպարտքդ և զպակասութիւնդ. զի ՚ի նոցանէ շահ ոչ լինի քեզ. և դու արհամարհիս ՚ի մէջ նոցա:

Ո՛րդեակ՝ սիրեա՛ն զկին քո, զի մարմին քո է. և աշխատանօք անուցանէ զորդիսն քո, և կցորդ կենաց քոց է:

Ո՛րդեակ՝ սիրեա՛ն զեղբայր քո հաւասար ընդ քեզ. զի ՚ի հասանիլ որդւոց քոց՝ խնդասցես:

Ո՛րդեակ՝ ուսո՛ւ զորդին քո ՚ի քաղց և ՚ի

Ժառաւ , զի ուսանիցին համբերել նեղու-
թի . և յորժամ հանդիպի ժամանակ սո-
վոյ՝ կարեսցեն ժողովալել :

Արդեակ՝ մարդոց գործք՝ որ ոչ է բարի՝
և չղենի անուան բարի չի , լաւ է մարդն
այն մեռած՝ քան թէ կենդանի :

Արդեակ՝ յորժամ լինիս այլոց տան հիւր՝
եթէ օձ և կարիճ բերին առաջի քոյ մի՝
քալեջլանս , և մի՝ գանկատիր :

Արդեակ՝ մի՝ ասեր չար բարեկամին քոյ .
այլ ծիծաղեալ ընդ երես նր . և դու ու-
րախ լինիս ՚ի մէջ ընկերաց քոց :

Արդեակ՝ զամբարուկի կնոջ քոյ արա .
բայց զխորհուրդ սրտի քոյ մի՝ յայտներ .
զի կինն բնուի տկար է , և ոչ կարէ պահել
զբանքո . այլ յայտնէ դրացեց քոյ , և դու
անկանիս ՚ի փորձանս և ՚ի նեղուկի :

Արդեակ՝ մին ապրանք՝ որ քո չէ , մի՝
առնուր և տար այլոց :

Արդեակ՝ խորհեալ զբանն ՚ի սիրտդ .
ընտրեալ զպիտանին , և ապա բեր ՚ի լե-
զուդ և խօսիր . և թէ զինչ գայ ՚ի բե-
րանդ խօսիս՝ նա ծաղը լինիս :

Արդեակ՝ երկու մարդ ընդ կռուիլն և
ընդ ծեծուիլն՝ ՚ի մէջ նց մի՝ անկանիր ,
զի մի՝ ՚ի զուր մեռանիցիս :

Ո՛րդեակ՝ մի՛ դատարկաբանուի՝ խօսիր և
ծիծաղեր . զի մարդն՝ի նոճաղելոյն կուիճ
լինի . և՛ի կուճոյն ըսպաննուի՝ :

Ո՛րդեակ՝ թէ կամիս իմաստուն լինի՝
պահեա՛ զլեզուդ քո՝ի չար խօսից :

Ո՛րդեակ՝ թէ կանչելով մարդ տուն շինէր՝
նա էշն օրն ու թն դարպաս կու շինէր . և
թէ՛ի սաստիկ զօրուէ՛ եզին վարի լուծն՝
նա՛ ՚ի պարսնոցէն ճչելանէր :

Ո՛րդեակ՝ թէ աղքատ ես , յամաւուրս
պատարագաց նոյ մի՛ հեռանար :

Ո՛րդեակ՝ մի՛ տացես ասորանք առանց գնի
և վկայի . զի բազում խօսք , լինի և՛ի
բուն բարեկամէն քակտիս :

Ո՛րդեակ՝ պատուեա՛ զհայր քո և զմայր .
զի՛ ՚ի հասանիլ յորդուոց քոց՝ առցես և
դու զնոյն :

Ո՛րդեակ՝ չալկեցի արձիճ և երկաթ , չէ՛ր
ծանր քան զպարտքն . թէպէտ ուտէի և
ըմպէի՝ ճչկարէի հանգչիլ մինչև վճարէի :

Ո՛րդեակ՝ մեծատան որդին թէ օճ ու
տէ՛ կասեն թէ վն բժշկուէ՛ կերաւ . և
թէ աղքատն ուտէ՛ կասեն թէ սովալլուկ
մեռանելոյն կերաւ :

Ո՛րդեակ՝ լա՛ւ է գողոց տալ զամինչս քո ,
քան թէ գտանեն մէկ գողուի՛ ՚ի վր քո :

Ո՛րդեակ՝ ընդ թշնամւոյն կորըստեան մի՛
խընդար • զի սոււաջի.քո մահ կայ :

Ո՛րդեակ՝ յորժամ տեսանես զծերն ,
յոտն կայ և պատուհեա՛ զնա • զի և այլք
զնոյն արասցեն քեզ :

Ո՛րդեակ՝ թէ դադարի գետնի՛ գնացիցն ,
կամ քաղցրանայ ուն զմեղու , և կամ սպի-
տակի ագուսւն ուն զաղաւնի՛ նա այնպս
թողու անզգամն զանզգամութի՛ իւր •
կամ անմիտն՝ լինիլ զգայուն :

Ո՛րդեակ՝ մի՛ յաճախեր՛ի տուն բարեկա-
մին.քոյ , զի մի՛ յագեալ ատիցեն զքեզ :

Ո՛րդեակ՝ օրինաց նոյն կնիւր լեր • զի պատ-
ուիրանն նոյն ամուր պարիսպ է մարդոյ :

Ո՛րդեակ՝ սովորեցո՛ զլեզուդ.քո՝ զբարին
խօսիլ ՚ի մէջ ընկերաց քոց :

Ո՛րդեակ՝ թէ խրատ բարի գտցես , դու
իմաստուն կոչիս • զի չարն՝ հանապազ ՚ի
չար մարդէն ծնանի :

Ո՛րդեակ՝ թէ կամիս զգործս ինչ բարիս
գործել՝ յառջ մի՛ պարծիր • լինի թէ չլի-
նի , կամ չկարենաս գործել , և ծաղը լինիս :

Ո՛րդեակ՝ մի՛ ցանկանար մարդոյ արեան •
և մի՛ սիրեր զկռիւն • այլ սիրեա՛ զխօսք կա-
կուղ • և խօսք՝ որ շնջուցանէ զհրաբորբոք
դազանացեալ սիրտ մարդոյ :

Ա՛րդեակ՝ յորժամ խմես դինի՝ մի շատու-
խօս լինիր • զի՛իշատ խօսից կռիւն լինի և
յետոյ խռովուի և սպանուի :

Ա՛րդեակ՝ խաղաղուին մայր է ամբ բնա-
կան ողջունի խոնարհութե :

Ա՛րդեակ՝ մինչ կօշկկդ՛ի յտքդ է՝ կոխեա՛
զփուշն • և արա՛ ճանապարհ ընկերի
քում, որ ընդ քեզ է գալոց :

Ա՛րդեակ՝ ջանա՛ և շահի՛ր անուն բարի •
զի լաւ է մարդոյն անուն բարի, քան թէ
զգեզ գովելի • զի գեղեցկուին հիւան-
դութե և մահո՛ւամբ ապականի • և ա-
նուն բարի յաւիտեան մնայ :

Ա՛րդեակ՝ թէ հանդիպիս կնոջ անզգամի՛
հնազանդի՛ր նմա, և կամ փախի՛ր՝ նմանէ :

Ա՛րդեակ՝ ի լեզուէ քումմէ վախցիր քան
զօտար թշնամւոյ • զի այլ ոք ոչ կարէ
հարկանել զքեզ՝ եթէ ոչ զնա :

Ա՛րդեակ՝ լաւագոյն է քեզ թշնամութի
ընդ առն իմաստնոյ, քան թէ սիրելութի
ընդ առն անմաի :

Ա՛րդեակ՝ զայր անմիտ և արբեցող ի բան
մի զրկեր • և թէ կուզես որ բազում չա-
րիս ածէ՛ի վերայ քո՝ ուղարկեա :

Ա՛րդեակ՝ անմիտ մարդոյ խորատ տալն
այնոյն է, ոնց թէ ոք փռչի ցանէ՛ի գնաց-
ման գետոյ :

Ո՛րդեակ՝ զչար և զանմիտ և զլեզու-
նին և զամամբարհաւաճ մարդն , ՚ի բո-
տուենն մի՛ մըցնէր • զի ՚ի գործոց նր
ամօթով գտանիա :

Ո՛րդեակ՝ թէ լինիս տէր Տի , զմահ քո
մի՛ մոռանար :

Ո՛րդեակ՝ ա՛ծ զգինի վն ուրախուէ . բայց
տես՝ մի՛ լինի թէ ըմպէ գինին զքեզ :

Ո՛րդեակ՝ փառաւոր առնէ երբեմն գլ-
նին զմարդն • և երբեմն յամօթալից և
ծաղը առնէ :

Ո՛րդեակ՝ լաւ է կռուիլ քեզ ընդ մարդոց
զինուորի , քան թէ կնոջ անզգամի :

Ո՛րդեակ՝ մարդ չարաբարոց և ամբար-
տաւան՝ յորժամ տեսանէ զկռուութի
ընկերի իւրոց , ցնծայ և ուրախ լինի • և
կարծէ ՚ի մտի իւրում թէ , փառս ինչ
յաւելլաւ ՚ի նմա :

Ո՛րդեակ՝ յորժամ քաղցրանայ աչք ւայ
՚ի վր քո՝ առաւել երկնչիր ՚ի նմանէ • զի
յետե մեղսդրես յանձին քում :

Ո՛րդեակ՝ յորժամ տեսանես զքեզ առ
աչս ւնն ւայ քո՝ թագաւորաց փառաւո-
րելի եղեր , և ամ մարդ սիրէ զքեզ • և
յորժամ արհամարհիս յայ՝ յայնժամ
թագաւորք և իշխանք և ամ սիրելիք քո
ատեն զքեզ :

Ո՛րդեակ՝ մի՛ ասեր ողբատին , թէ դու
ինձ չար ոչ կարես ամենել , տէս , զի բազում
չարիք և անարդանք յոչինչ մարդկանէ ե-
լանին , և յոչ պատուական մարդկանց :

Ո՛րդեակ՝ կին օտար որ սիրէ զքեզ , և
ասէ թէ դու լուես քան զիմ այրն՝ մի
հաւատար նմա . զի կին պոռնիկ նման է
չան՝ որ խառնակի ընդ ամշանց :

Ո՛րդեակ՝ մի՛ վախցուցաներ զսիրտդ քո
ի հետ նոր բռնած սիրելւոյդ՝ մինչև
քանի մի ինչ անգամ փորձես զնա չարեօք
և բարեօք :

Ո՛րդեակ՝ կին պոռնիկ նմանէ գերեզմանի
բռելոյ , ՚ի ներքս լի է գարշահոտութի :

Ո՛րդեակ՝ մի՛ լրբալեզու լինիր ՚ի մէջ ըն-
կերացդ , և կարծեր թէ սիրելի ես նց .
այլ յորժամ յանդիմանն զքեզ՝ լինի
բան քո ամօթալից :

Ո՛րդեակ՝ որ պայծառ է մտօք՝ իբրև զա-
րեգակն լուսաւոր է , և որ պիղծ է սըռ-
տիւն և նենգ է մտօք և խաւար է խոր-
հրդովն , կամ սպառն մտօք՝ այնպիսի
մարդն թէպէտ և ունի ինչս բազումն ,
ուսացն է և կենդանի մեռեալ :

Ո՛րդեակ՝ յաւուր զոհից քոց առատ
բռնէ զձեռքդ , որ աչք մարդոյն ՚ի ձեռն

քո չմնայ • քանզի ոչ համարի ամ • և դու
'ի մարդկանէ անարդիս •

Արդեակ՝ մին ձի՝ որ քո չէ՝ մի հեծնոյր •
և կամ յոյժ քաղցեալ իցես՝ հաց՝ որ քո
չէ՝ մի ուտեր •

Արդեակ՝ յայտնեա՛ զխորհուրդ քո բա-
րեկամին քոյ • և յետ քանի մի Եւուրց փոր
ձեա՛ զնա, և սակաւ մի կըռռիւր ընդ նը-
մա • թէ որ տահէ զբան քո 'ի սրտի իւ-
րում, և ոչ յայտնէ՝ նա սիրելի բարեկամ
քո է, զնա սիրեա՛ յոյժ • և թէ ընդ կըռ-
ռիւրն յայտնէ զբան քո՝ նա տոյնախին չէ՝
սիրելի և բարեկամ, փախիւր 'ի նմանէ •

Արդեակ՝ ազատհոլին մայր է ամ չարեաց
և ծնուցիչ ամ մեղաց • բայց ողորմուի
ձեռնաստու է ամ բարեաց •

Արդեակ՝ որ սիրես զխաղաղութի՛ն, 'ի դա-
տաստանէ պատրաստ կաց • և որ հանա-
պազ յօժարի 'ի դատաստան՝ նա մայր է
ամ մեղաց և չարեաց • յիմարեալ է և
ոչ գիտէ զինչ տունէ •

Արդեակ՝ զչարախօսութի՛ն զումեքէ մի
ասեր և մի լսեր • զի կարի խոցէ զսիրտ
մարդոյն • և տալականէ զփառք մար-
դոյն, զի մեծ նախաստինք է •

Արդեակ՝ թէ կամիս մարդոյ զինչս տալ՝

յառաջ մի պարծենար և մի խոստանար .
և թէ պարծենաս և չտաս հետ բարեկա-
մին թշնամի լինիս :

Ո՛րդեակ՝ ամբարտաւան մարդն հեռի է
և օտար յընտանեաց և՛ի բարեկամաց իւ-
րոց . և թէ բազում անգամ ջանայ սիրով
նա առնու անարգանս անձին իւրոյ . և
հեռանայ յընկերացն :

Ո՛րդեակ՝ լաւ է ստանալ ձի սըմակել և
էշ ըստ վարուք , քան թէ ծառայ փախ-
չօղ և սըտասաց :

Ո՛րդեակ՝ մի երաշխաւոր լինիր բարեկա-
մին քո . զի բազում վիշտ կրես մինչև
վճարես զպարտս նր՝ :

Ո՛րդեակ՝ մարդ-չարախորհուրդ և նախան-
ձոտ , ոչ թէ միայն ատելեացն սուռնէ զչա-
րուի . այլ բնուի ամբողջ հակառակ կայ :

Ո՛րդեակ՝ լերինք շտեմարանք սառաց են .
և նենգաւորք բնակարան չարեաց են :

Ո՛րդեակ՝ մի այլոց կանանց կատարեր ըզ-
ցանկութի քո . զի օտար կինն նման է աղի
ջրի . որ որքան խմես՝ առաւելագոյն ծա-
րաւիս . և զանուն վատ ժառանգես :

Ո՛րդեակ՝ զի որ իմաստունն է՝ նման է ուն
հուր ՚ի լոյս և՛ի սապոյ բորբոքի . և ուն
արեգակն ՚ի ճառագայթից երևի և լու-

սաւորէ զարարածս . և կամ ուն յառիւծն
որ ուժեղու թիւն գովի . և ուն բազայն ի
սրբն թաց առ ի շաչելոյ թւոցն գովի , ևս
առաւել մեծարի ի յաչս թագաւորաց
և մեծամեծաց :

Արդեակ՝ առն խոզամտի ոչ գոյ սիրելի
երբէք . զի ասէ ի սրտի իւրում թէ՝ կենքս
ոչ անցանի , և ըւզակս ոչ պակասի . և ոչ
գիտէ թէ ամ տայ այնպիսեաց մահ . և
զինչս նր պլոց տայ . և չունենայ անուն
բարի՝ որ յիշեն զնա :

Արդեակ՝ սյր անմիտ յորժամ արբենայ ,
յօժարի ի կռիւ . և կարծէ ի միտս իւր
թէ , չկայ մեծադոյն քան զնա . և ոչ գի-
տէ , թէ յորժամ հանդիպի առ ոմն քաջ՝
սպանանէ զինքն :

Արդեակ՝ ուն հողն մայր է ամ տրնկոց ,
նոյնպէս և արբեցու թիւն մայր է ամե-
նայն չարեաց :

Արդեակ՝ թէ իշխան ես ըի և մարդ-
կոն՝ պահեա՛ զանձնքո՛ր զեղխուէ . վն զի
ի քեզ են հոգք երկրաւորաց ամ :

Արդեակ՝ տեսի զգազան կառաղեալ՝ որ
արձակեցաւ ի վր իմ՝ և ոչ վախեցայ ի ն
մանէ . հանդիպեցայ թշնամւոյ իմոյ՝ յոր
յաղթեաց զնա . հանդիպեցայ կն չեցաւ

ոճանւոյ՝ և յաղթեցայ ՚ի նմանէ :

Ա՛րդեակ՝ մի լինիր փոյթ իբրև զնշնի՝ որ
յառաջ ծաղկի և աղա ուտվի , այլ լէր
Քաղանդ՝ և պաղաբերեա՛ն զհեզուր :

Ա՛րդեակ՝ անկանի անօրէնն վասն չար
գործոց իւրոց , և կանգնի արդարն վն
բարի գործոց իւրոց :

Ա՛րդեակ իմ՝ նախան՝ զայս նմ՝ զոր ուսու
ցի. քեզ՝ ՚ի միա ան և կատարեա՛ն զնմ . և
լինիս իմաստուն ՚ի մէջ ընկերաց քոց . և ՚ի
յաջս թագաւորաց երևելի լինիս :

Ե՛ւ յա է խրատն՝ զոր ուսուցի որդւոյն
իմոյ նախանայ . և ես խիկարս գիտէի
թէ՛ զնմ խրատս իմ՝ պահէր ՚ի սրտի իւ
րում . այլ նա ոմ զփոշի ըսուս ՚ի վր ել
ման գետոյ և կորնչի՝ այնպէս արար ըզ
խրատս իմ : Յառաջ ասուի զտունս իմ
նր , և զծառայքս իմ . զինչս և զապարանս
և զիշխանութիս իմ . և արարի ատենադպիր
սենեքերիմ արքային իմոյ : Եւ նա մուտ
ցաւ վաղվաղակի զխրատս իմ . և սկսաւ
չարիս գործել և ասուել անիրաւութիս .
զծառայքս իմ ոչ խնայէր , և զինչս իմ
ստէր . և զբաղում խրատս իմ անտես
արար :

Հո՛ւր
արեգս խիկարս յորժամ տեսի զչարութի
նա

նաթանայ՝ գնացի առ թագաւորն իմսե-
նէքերիմ, և պատմեցի նմա մի ըստ միովէ
զչարուի նաթանայ, և խնդրեցի թուղթ
ի թագաւորէն, զի մի իշխեսցէ նաթան
մերձենալ ընչեց իմոց: Աւհրամայեաց
թագաւորն՝ որ բերին զնաթան, և ե-
տուր պատուէր նմա ոչ մերձենալ ըն-
չեց իմոց: Աւհա խիկարս ելեալ գնացի
ի տունս իմ:

Աւհրամայեաց մտօք չարիս գործել
վսինձ՝ի դուռն թագաւորին, և խոր-
հեալ շինեաց մօհր մի՝ ըստ նմանուէ իմ
մօհրին, քանզի յառջագոյն գիտէր զկերպ
մօհրին իմոց, և փորեաց զիմանուհա, և
կոխեաց ի թղթի միոց, և գրեալ յիմբե-
րանէ առ փարաւօն արքայն եգիպտա-
ցոց, որ չարկամէր ընդ հետ իմ թա-
գաւորին սենէքերիմայ:

Ահա գրեալ այսպէս:

Խիկար իմաստնասիրէ ողջոյն ընդ քեզ
փարաւօն արքայ, յորժամ գիրս առ-
քեզ հասանի՝ փութով ժողովէ զզօրքդ,
և եկ՝ի դաշտն արծրունեաց, որ ի հրօտից
տմնոյն ինէ լինի, և առցես զսենէքերիմ
թագաւորն առնց պատերազմի: Աւհր-
ամ գրեաց նաթան այսպէս՝ խորհեցաւ

Լ գրեաց թուղթ մի այլ նման սորա՝ իմ
թագաւորին բերնէն առիա :

Եւ էր Գրեալ այսպէս :

|| Ենէքերիմ արքայք ողջոյն ընդ քեզ սի
րելի և իմաստուն իմ խիկար . յորժամ
գիրս առ քեզ հասանի՝ փութով ժողովե
ղզօրքդ բազում, և եկ'ի դաշտն արծրու
նեաց, որ 'ի հրօտից ամսոյն ի ե լինի . զե
պատերազմեացն ընդ հետ զօրօք փարա
ւօնի . քանզի դեսպանք փարաւօնի ե
կեալ են առիա : Եւ յորժամ գրեաց այս
պէս՝ գաղտնաբար տարեալ ետուր հաւա
տարիմ մարդոյ, որ բերեալ հասուցէ 'ի
ձեռս իմ խիկարայ : Եւ ես խիկարս յոր
ժամ առի ղթուղթն՝ բացի և կարդացի՝
զոր գրեալն էր . և վաղվաղակի ժողովեցի
զօրք . և կատարեցի զհրամայեալն 'ի թու
գաւորէն անմեղութ և ոչ դիտացի զչարսի
նաթանայ՝ որ առիա : Եւ զմեւս թուղթն՝
զոր գրեալ էր իմ բերօնէն առ փարաւօն
արքայն, զոյն կնքեալ և տարեալ ձգեաց
գաղտնաբար 'ի դուռն դարպասի թագա
ւորին : Եւ գաեալ մի ոմն 'ի ծառայից ըղ
թուղթն՝ տարեալ ետուր 'ի ձեռն սննէքե
րիմ արքային իմոյ : Եւ իբրեւ բացել կար
դացին ղթուղթն առաջի թագաւորին՝

զահիհարեալ լի եղև արամու թիւ, և ոչ
գիտէր, զինչ առնէր խիկարիս :

Յայնժամ նախնիս որ դպիր էր թագա-
ւորին՝ եմուտ առ թագաւորն և երկրպա-
գեաց և ասէ : Ո՛ղջ լեր արքայ և տէր իմ.
զի հայր իմ խիկար ոչ գիտաց զերախտիքս
քո, և կսմի խափանել զթագաւորուի քո.
և եթէ ոչ հաւատաս թանիս՝ կացցուք մին-
չև որ կատարի թիւն ՚ի հրոտից ի է. և
էլցուք և գնասցուք ՚ի դաշտն արծրու-
նեաց. և տեսցուք աչօք մերովք զերախ-
տամուռացուի խիկարայ՝ որ առ քեզ :

Յայնժամ սննէքերիմ թագաւորն երկ-
մըտեալ կայր արամու թիւ՝ մինչև եղև
՚ի հրոտից ամսոյն ի է : Եւ ես խիկարս
արարի զզօրս իմ. և եկեալ բնակեցայ ՚ի
դաշտն արծրունեաց : Եւ ելեալ թագա-
ւորն սննէքերիմ՝ գայր ՚ի դաշտն արծրու-
նեաց փորձել զիս : Եւ ես խիկարս յոր-
ժամ տեսի զզօրքն սննէքերիմայ՝ խաղմ
արարել խաղացի և մէջ դաշտին, դէմ յան
դիման զօրօք նց՝ պատերազմիլ. քանզի
կարծէի, թէ զօրք փարաւօնի է :

Յայնժամ տեսեալ սննէքերիմաց զզօրքն
իմ, փախստական եղև. և ես գնացի
զօրօք փոքր ինչ յետև նի՝ և ոչ գտի.

Դարձայ և եկի՝ ի յօթևոնս իմ. և ուրա
 խացեալ մտօք իմովք՝ թէ փախուցի զփա
 րաւօն զօրօք իւրովք: Եւ յորժամ գնաց
 սենեքերիմ փախստական՝ ի դարպասն իւր
 խելագարեալ լի՝ տրամուք, և ոչ գիտէր
 զինչ գործէր խիկարիս՝ որ ըմբռնէր:
 Յայնժամ եմուտ նաթան առ թագա
 ւորն՝ ողջունեաց և ասէ. « ասա տեսար
 աչօքդ զերախտամուռացուի խիկարաց. »
 այժմ մի տրամիր, զի ես ամեմ գհայրն
 իմ խիկար տուաջիքո: Եւ ասէ սենեքե
 լիմ ցնաթան, թէ գու բերես զխիկար,
 և տաս ի ձեռս իմ, զոր ինչ խնդրեսցես՝
 ասց. քեզ: Եւ երկրպագեալ նաթան՝ ել
 արտաքս և գնաց: Եւ գրեաց թուղթ մի
 ի թագաւորին բերնէն, և ետուր ցհա
 ւատարիմ մարդ մի ասելով թէ՝ տարեալ
 տացես զայս ի ձեռն խիկարաց, զոր էր
 գրեալ այսպէս:

Սենեքերիմ արքայէ ողջոյն ընդ քեզ սի
 րելի և իմաստուն իմ խիկար. քանզի
 յոյժ հաճոյ թոճեցաւ թագաւորիս սե
 նեքերիմաց զերախտիրն քո, և զի փա
 խեան զօրք փարաւօնի յերեսաց քոց,
 այժմ առեք հրաման զօրաց քոց գնալ
 խաղաղութի տունս իւրեանց, և գու ել

Լ էկ, զի ուրախ եղէց ընդ քեզ:

Եւ ես խիկարս յորժամ կորդացի՝ ուրախ եղէ յոյժ. և տո՛ւի հրամանն զօրաց ի մոց գնալ ՚ի յօթեւանս իւրեանց: **Եւ** ես ելեալ գնացի տեսանել, և ուրախ լինիլ ընդ թագաւորին իմոյ: **Եւ** յորժամ հասի միամտութիւն գուռն թագաւորին. տեսեալ զիս զինուորացն՝ ըմբռնեալ տարանս ածինս առաջի թագաւորին:

Եւ յորժամ ետես թագաւորն զիս՝ լի եղև տրտմութիւն, և հրամայեաց որ ետուն զայն թուղթն ՚ի ձեռս իմ: **Եւ** ես երբ բացեալ կարդացի՝ նոյն յայնժամ կապեցու լեզուս, և գնաց իմաստութիւն, և ոչ գիտէի, զի՞նչ պատասխանեմ սենեքէ իմայ: **Եւ** ողորանօք ասացի՝ անբայ և տէր իմ, մի՞ ՚ի զուր դատեր զիս, զի չունիմ խապարի յայս բանէս, այլ՝ անպարտեմ: **Եւ** ոչ եղ ունկն աղաջանաց իմոց. այլ հրամայեաց սպառնանել զիս:

Յայնժամ նախն քեռ որդին իմ կապեաց զձեռս ՚ի յետս փոխանակ բարի խըրատոյն իմոյ՝ զոր յառաջն տո՛ւի. թէ՛ որդեակ՝ զարձակեալն մի կապեացես. նոյն յառաջ զիս կապեաց: **Եւ** ես դարձեալ աղաչեցի թագաւորին իմոյ թէ՛ տո՛ւր զիս ՚ի

'ի ձեռն արժուամայրայ զօրապետին . և նա
 տարել զինս 'ի տունս իմ' . և 'ի վր' շէմանց
 իմոց կատարէ զհրամանս քո, և զին գլխա
 տէ . և զգլուխն իմ' ճկագուն հեռի թա
 դէ 'ի մարմնոյս : Եւ հրամայեաց թագա
 ւորն արժուամայրայ կատարել այսպէս՝
 զոր խնդրեցի : Եւ կալեալ զին արժու
 մայրայ տանիլ 'ի յսպանումն . և ես խի
 կարս զըկեցի գաղտնաբար խապար առ
 տբեստան կինն իմ, թէ պատրաստէ՛ ռ
 աղջիկս, և արա՛ կերակուրս աղդի աղդի .
 և յորժամ եկեսցին 'ի յսպանումն իմ, ա
 րա՛ ընթրիս, և բեր՝ զայն ռկոյս աղջկունս,
 որ լայցեն զմահն իմ . և կինն իմ վաղվա
 ղակի կատարեաց զհրամանս իմ : Եւ յոր
 ժամ գնացաք հասաք 'ի տունս իմ, խընդ
 րեցի աղաչանօք յարժուամայրայ զօրապե
 տէն և ասացի, Տո՛ւք ինձ զհրամանս, որ
 առնուցու՞մ ընթրիս առ սիրելիս և առ
 բարեկամսն իմ՝ փոքր ինչ . քանզի այլ ոչ
 մնամ կենդանի : Եւ ասաց տբուամայր՝ ա
 րա՛ որո՞ւ և կասիս . և արարի ընթրիս մեծ
 սիրելեաց իմոց, որք եկել էին 'ի սպանումն
 իմ . և բերի կերակուրս զանազան, և ըզ
 գինիս անապակս, և առ զհաղար աղջկուն
 սըն՝ որք լայցեն առաջի նց զմահն իմ :

Լա նորա ՚ի սասառիկ տրամուկ թէն և ար-
 բեալ ՚ի դինւոյն՝ արբեցան ամենեքեան,
 և անկեալ քնեցան: Լա ես խիկարս կայի
 կապեալ երկաթեօք • և գնացեալ զար-
 թուցի զաբուամաք զօրապետն, և ողո-
 գանօք ասացի նմա: «Իտէս եղբայր՝ զի
 այն ժամանակն որ երբ բարկացաւ թա-
 գաւորն ՚ի վր քո, և ետ ՚ի ձեռս իմ, թէ
 տար սպան զաբուամաք, և ես առել տա-
 րայ զքեզ, և ոչ սպանի, այլ՝ տահեցի
 դադու • և եկեալ ասացի թագաւորին թէ՝
 սպանի զաբուամաքն: Լա յորժամ անցաւ
 փոքր ժամանակ ՚ի վր, գնաց բարկութի
 թագաւորին, և փոշիման եղև սպանանելն
 զքեզ: Լա ասաց՝ աւաղ քեզ աբուամաք,
 զի դու կենդանի պիտեիր: Լա ես երբ
 լուայ զայս ՚ի թագաւորէն՝ եկեալ հանի
 զքեզ, և տարայ առաջի թագաւորին, և
 բազում պարգևս առի: Եւ ժամ աղաչեմ
 զքեզ, արասցես փոխադէն տուխ • և կայ
 ՚ի ներքև շէմանց իմոց հոր մի մեծ • ձգեալ
 զիս ՚ի հորն դադունաբար • և ես ունիմ ծա-
 ւայ մի մահապարտ • քանզի է մարդաս-
 որան • և ահա կապեալ կայ ՚ի բանտն • և
 ունի զնմանութիս իմ • հագն նմա զհան-
 դերձս իմ, և զարթն զժողովուրդ իմ:

Եւ շուտով կտրեա՛ն զգլուխն . Եւ տար թաղէ
զգլուխն Զ՝ կանգու՛ն հեռի՛ի մարմնոյն :
Եւ եղև ունկնդիր աբուսամար խնդրու՛ա
ծաց խիկարիա , Եւ արար ցնայէս . Եւ գնաց
առ թագաւորն թէ՛ սպանեցի զխիկար .
Եւ յոյժ ուրախացաւ թագաւորն ՚ի սպա
նումն իմ :

Եւ ապա գնաց նախն խընդրել ՚ի թա
գաւորէն հովուէլոյ զստացու՛ածս իմ .
Եւ թագաւորն հրամայեց տալ նախնայ
զնմինչս իմ : Եւ գայր նախն ՚ի տունն
իմ հանապազ . ուտէր Եւ ըմպէր Եւ աղտե
ղէր զծառցքս իմ Եւ զսղտխնէայքս իմ . Եւ
կամէր չարիս գործել ընդ հետ կնոջ ի
մոյ . Եւ կինն իմ ոչ չնազանդէր կամաց նր :
Եւ ես զնմն լսէի ականջօք իմովք . Ըզ
ձայնն գուսանաց . Եւ զպագշտիլն ընդ
կնոջ իմոյ . Եւ խընդրէի օր նմա , Եւ ոչ գը
տանէի : Եւ յորժամ՝ անցաւ ժամանակ
մի՝ լսեց փարաւօն արքայն եգիպտացւոց ,
Եւ թէ սենէքերիմ արքայն սպանեց զխի
կար , յոյժ ուրախացաւ : Եւ առաքեաց
փարաւօն գիր առ սենէքերիմ :

Եւ էր Գրեալ այսպէս :

Փարաւօն արքայէ ողջունիւ ծանիր սէ
նէքերիմ թագաւոր . քանզի կամիմ

շինել դարպաս մի ՚ի յօդս երկնից անսխան
 և անդերան . ղըկէ՛ ինձ ճարտար մէյմար
 մի , որ եկել շուտով կատարէ զհրամանս
 իմ . և թէ ոչ ղըկես՝ գամ բազում հեծե-
 լօք , և աւերածեմ զերկիրդ . և առնում
 ՚իքէն հարկ : Եւ յորժամ բերեալ էտուն
 զթուղթն ՚ի ձեռն սննէքերիմայ՝ բացեալ
 կարդաց զնա . և իսկոյն զարհուրեցաւ
 բոլոր անձն նր ՚ի բանից փարաւօնի :
 Եւ կոչեալ զմեծամեծս և զիմաստունս
 և զդպիրս և ասէ՝ քանզի սպանեցաք զխի
 կար , այլ ով կարէ տալ պատասխանի փա-
 րաւօնի : Եւ ասացին մեծամեծքն՝ արքայ
 յուխտեան կաց , քանզի ասա կայ յոր-
 դէգիր խիկարայ նաթան՝ որ առաւել
 հանձարեղ և իմաստուն է քան ղխիկար ,
 և նա կարէ տալ պատասխանի գրոյս :
 Եւ հրամայեաց թագաւորն կոչել զնա
 թան . և իբրեւ եկն՝ էտուն զթուղթն ՚ի
 ձեռն և կարդաց : Եւ թագաւորն՝ կա-
 րօղ էս տալ պատասխանի փարաւօնի . և
 ասէ նաթան՝ այս անհնարին է ՚ի մարդ-
 կանէ : Եւ յայնժամ տարակուսեալ սննէքե-
 րիմ կոծէր զանձն իւր ասելով՝ աւան-
 քեզ խիկար իմաստուն իմ , զի սպանեցաք
 զքեզ . այժմ ոչ կարեմք տալ պատասխանի ,

և կրեմք վիշտ բազում՝ ի նմանէ։ Աւել
թէ ոք բերէ զքեզ կենդանի առաջի իմ,
խիկար՝ տաց նմա կշռանօք քո ոսկի։

Աւ լուեալ աբուսամբ՝ երկիրեպագ թալ
դաւորին և տսէ՝ հոջ լեր տղբայ իմ, զի
թէպէտ կոծաս՝ ի վր սպանման խիկարայ,
այլ եթէ ոք բերէ զխիկար կենդանի ա-
ռաջի քո՝ փոխանակ նր սպանանէս զնա։

Աւ տսէ թագաւորն՝ հչ սպանանեմ զնա,
այլ՝ տամ սպորգ ևս ազննս նմա։ Աւ եր-
կրրպագեալ աբուսամբ թագաւորին՝ ե-
կեալ վաղվաղակի եհան զիս ի հորէն, և
տարեալ կացոյց առաջի սենեքերիմայ։

Աւ յորժամ ետես թագաւորն զիս կեն-
դանի՝ յարեաւ յաթոռոյն, և անկաւ ըզ
պարանոցսւս իմով, և համբուրեաց զիս
և ասաց. հվ խիկար՝ մեռեալ էիր և կեն-
դանացար։ Աւ յոյժ ուրախ եղև թագա-
ւորն, և ետուր ոսորգ ևս մեծամեծս ա-
բուսամբայ զօրապետին, և հրամայեաց
պատռել զիս աւուրս իս, և յետ լրման
իս աւուրց՝ հրամայեաց թագաւորն բե-
րել զիս առաջի իւրն, և ետուր կարդալ
ինձ զթուղթն փարսածնի։ Աւ յորժամ
կարդացի ես խիկարս՝ ասացի առ թագա-
ւորն՝ մի տրամիր և մի կոծար, զի ես եր-

Թամ և տամ պատասխանիս փարաւօնի ,
և տունում հարկս 'ի նմանէ և գամ : Եւ
իբրեւ լուաւ Թագաւորն իմ , յոյժ ու
րախ եղև 'ի բանից իմոց :

Եւ ապա ես խիկարս՝ առաքեցի պատ
ուէր առ աբեստան կին իմ , Թէ բռնէ
ք ձագս արծուոյ . և մանել տուր պարան
մի երկայն . և բերել տուր ք ծծկեր ար
ղայ . և ք կին որ պահէն զտղայքն : Եւ
ուսի տղայոցն կանչել՝ կաւ ծեփ աղիւս
բերէք . և ամէն օր կապէ զերկու տղայքն
'ի վր արծուոյ ձագին , և Թուո'ի յօդն պա
րանաւն , և իջո'ի վայր , մինչև կատարեալ
ուսանին զելանելն և զիջանելն և զբար
բառելն : Եւ կինն իմ իմաստուն էր , և
փուլթով կատարեաց զհրամայեալն իմ :
Եւ ես առի հրաման 'ի Թագաւորէն իմոյ .
և ելեալ գնացի 'ի տունս իմ : Եւ առի
զերկու տղայքն և զձագ արծուներոյն՝
և եդի 'ի սնտուկ մի , և ելեալ գնացի առ
փարաւօն արքայն : Եւ յորժամ հասայ
յեգիպտոս՝ իջեանեցայ 'ի տուն մի , և Թու
ղի անդ զսնտուկն 'ի տանն , յոր իջեա
լեալ էի . և ես գնացի առաջի փարաւօնի
և երկրպագի նմա : Եւ ասէ ցիս փարա
ւօն . ի՞նչ մարդ ես դու . կամ ուստի՞
գաս :

Լ՛Է ես ասացի, արքայ յաւիտեան կայ.
 ասա ծառայ քո է, որ պապեաց սենե-
 քերիմ' արքայն կատարել զհրամանս քո.
 և բերեալ եմ ընդ իմ ճարտար մէյմար,
 որ շինէ դարպաս ՚ի յօդս: Լ՛Է ասաց փա-
 րաւօն. զինչ է անուռ. քո: Լ՛Է ես ասեմ,
 ասրակայ է իմ անուռն: Լ՛Է հարցեալ ցիս
 փարաւօն թէ՛ զինչ պէտք է մէյմարացդ
 ՚ի պէտս դարպասին. Լ՛Է ես ասացի ցնա՝
 բերել տուր կաւ ծեփ աղիւս: Լ՛Է հրա-
 մայեաց թիւորն՝ որ բերին վաղվաղակի:
 Լ՛Է ես խիկարս գնացի կապեցի զերկու
 տղայքն ՚ի յերկու արծուոց ձագին. և
 թռուցի դէպ ՚ի յօդս: Լ՛Է տղայքն ա-
 ղաղակէին կտնչելով, կաւ ծեփ աղիւս
 բերէք, որ շինեմք զդարպասն: Լ՛Է ոչ որ
 կարէր հանել ինչ ՚ի վեր: Լ՛Է ես ասեմ,
 հանեցէք, զի մի դատարկ մնան: Լ՛Է տե-
 սեալ զայս զօրքն փարաւօնի՝ փախեան և
 անկան ՚ի դապասն. և պատմեցին փարա-
 ւօնի զսքանչելիսն նմ: Լ՛Է ելեալ փարա-
 ւօն ՚ի տես և աղաղակ տղայոցն ՚ի յօդն.
 և զարմացաւ յոյժ, և ասաց ՚ի մտի իւրում
 թէ՛ սա շատ իմաստուք լաւ է քան զխի-
 կաք. և ոչ գիտէր թէ՛ ես եմ խիկարն:
 Լ՛Է մտայ առ թագաւորն, և երկրպագի
 նմն:

Լաւ ասէ ցիս փարաւօն • երդմնեցուցա-
 նեմ՝ զքեզ, զի ասեա ինձ զսացդն • ո՛վ ես
 դու : Լաւ ասացի ցնա, ես եմ խիկարն :
 Լաւ ասէ փարաւօն՝ ո՛վ Թշուռառական,
 կենդանացմբ : Լաւ դարձեալ ասէ • ո՛վ
 իմաստուն խիկար մեկնեա ինձ զսոց Թէ՛
 զինչ է սիւնն այն՝ ի վր սնի • մայրք երկու
 տասան ի վր մայրեաց • անունք լ' ի վր ա-
 նունից • սուրհանդակք թ' մինն սև և
 միւսն սպիտակ :

Պատասխանեցի և ասացի • սիւնն՝ տա-
 րին է • մայրք երկուտասան՝ ամիսք տար-
 ւոյն է • անունք լ' աւուրք ամսոյն է •
 սուրհանդակք թ' տիւն և դիշերն է :
 Լաւ դարձեալ ասէ փարաւօն • ո՛վ խիկար
 մանէ ինձ պարսն աւաղէ : Լաւ ես Գնացի
 Ժակի յորմն պատի միոյ դեմ յարեւելս •
 և ի Ժադեւ արևուն, անկաւ շողն ի ներս •
 և ես առի աւաղ և փռչի թ' ամիս, և տայի
 դեմ արեգական, որ տանէր ոլոր ոլոր Ժա-
 կէն ի ներս • և ես կանչէի՝ կծեցէք զպա-
 րան շուտով : Լաւ զոհի հարեալ փարաւօն
 սոյուզ մնաց • և կոչեալ զիս առ ինքն՝ ե-
 տուր ինձ պարգևս ազինս և հարկս Թա-
 գաւորին իմոյ, և շնորհակալ եղև ի նր
 մանէ : Լաւ ես խիկարս ելել եկի առ սե-

նէքերիմ թագաւորն իմ, և անկեալ համ-
բուրեցի զոտս նր . և պատմեցի մի ըստ
մի՝ զպատասխանիսն փարաւօնի . այլև
զառաջի գրոյն զանմեղուին իմ : Եւ յոր-
ժամ լուաւ զայս անձ, յայնժամ յոյժ
ուրախ եղև սննէքերիմ ասելով . խիկար
իմաստուն իմ, այժմ ցնծուիք ուրախ եմ
ի կենդանութի քո . և զոր ինչ խնդրես
յինէն՝ տաց քեզ :

Եւ ես խիկարս շնորհակալ եղէ յար-
քայէս իմմէ և ասացի . ոչ է պիտոյ ինձ
գանձս կամ պատիւս բայց միայն զայս
ինչ խնդրեմ՝ ի քէն . զի զնաթան քեռ
որդին իմ՝ որ է որդեգիր ինձ և աշա-
կերտ՝ հրամանաւ քո տացես ինձ . զի ու-
սումն այլ կայ պակաս, զայն ևս ուսու-
ցանեմ՝ որ լինի կատարեալ : Եւ հրա-
մայեց թագաւորն տալ զնաթան ի ձեռս
իմ . և ասէ, զոր ինչ կամիս՝ արա՛ դմա :
Եւ ես կալայ զնաթան, և տարայ ի տունս
իմ, և սկսայ ասել ցնաւայսպէս : Ո՛րդեակ
իմ՝ նաթան՝ զառաջին խրատն՝ զոր տո՛ւի
քաղցրութիւն՝ ոչ պահեցեր ի սրտի քում
և կորուսեր, արդ՝ այժմ ուսուցանեմ
դառնութիւն : Եւ կապեցի զնա երկաթի
կապանօք, և եղ ի՛ի պարանոց նր ե՛ճ լիոր
եր

երկաթ , և յանձնեցի զնա բելիսը ծա-
ռային իմոյ . և հրամայեցի առնուլ թուղթ
և թանաք'ի ձեռին իւրում , զի'ի մտանէն
և յելանէն իմ' զոր ինչ առնիցեմ նաթա-
նայ' գրեացէ : Եւ ետու ապառուէր նմա ,
զի զհաց և զջուր չափով տացէ . այնքան
որ ոչ մեռանի և ոչ զոճարթանայ :

Եւ նախ և յառաջ զարկի բիր 'ի թի-
կունս նորա և ասացի :

Ո'րդեակ իմ' նաթան' մարդոյ ականջքն
եթէ ոչ լսէ , զթիկունսն ծեծելով լսե-
ցուցանեն :

Ո'րդեակ իմ' նաթան' յաթու փառաց
նստուցի զքեզ . այլ դու յաթուոյ իմոյ
ընկեցեր զնա և կործանեցեր :

Խօսեցաւ ընդ-իս նաթան և ասէ . զի
ա՛րդ ուրացար զքեռ որդին քոյ :

Եւ ես ասացի . որո՞ւ ոչ ուրացայց :

Ո'րդեակ' զի եղեր ինձ ոնկ կարճ'ն այն'
որ եհար զասեղն , որ ասեղին ծայրն չար
էր քան զիւրն . և դարձել' իւրեւ զայն' որ
եհար զտից ըղտուն , և նա հարէլ զթա-
թըն 'ի վր' կարճին' սատակեաց զնա :

Ո'րդեակ' զի եղեր ինձ ոնկ վայրենացեալ
եմն . որ էարկ զտոճ'ն , և անկաւ վարոցն ,
և վիրաւորեցաւ իւր ոտքն :

|| րդեակ՝ զի եղեր ինձ որպէս այն՝ որ
ուտէր զտորոնն . և . ասէր՝ ես՝ի կենդանու
իմում՝ ուտեմ զքեզ . թող յետոյ հանեն
զքո քօքն , և ներկեն զմորթին իմ :

|| րդեակ՝ զի եղեր ինձ որպէս այն՝ որ
ձգեաց նետ դէպ՝ի յերկինս . թէպէտ ոչ
կարաց հասուցանել , այլ՝ զանօրէնուին
շահեցու , և դարձաւ նետն ՚ի գլուխն
իւր . նոյնպէս և դու կամեցար սպանանել
զիս , այլ անմեղուիս իմ ապրեցոյց զիս :

|| րդեակ՝ զի թէ ագի խողին ութն կտն
գուռն երկայն լինի՝ ՚ի տեղի ձիուռն ոչ
կարէ լինիլ :

|| րդեակ՝ զի եղեր ինձ որպէս արջն այն՝ որ
հանդիպեցաւ իշոյ միոյ , և ասաց ողջոյն ը
քեզ . և ասէ էշն՝ այդ ողջոյնդ՝ իմ տիրոջս
պարանոցն լինի՝ որ արձակեաց զիս՝ի մը
րէն , որ եկի և հանդիպեցայ քեզ , և տե
սի զքո գէշ երեսդ չար :

|| րդեակ՝ զի եղեր ինձ որպէս որոգայթն
այն՝ որ թաղեալ կայր ՚ի յաղճն . և եկեալ
ճընճղուկ մի ասէ . զինչ կայցես տատ . ա
սէ տկնատն՝ աղօթս առնեմ տու անձ . ասէ
ճընճղուկն՝ զինչ է այդ ՚ի բերանդ . ասէ
տկնատն՝ քաղցեաց հաց , և վաղեաց ճընճ
ղուկն առնուլ զհացն ՚ի յակնատէն . և

տակնատն անկաւ'ի վիզն ճընճըղկին . և ասէ
ճընճըղկն՝ Թէ այդ է քաղցեւոց հացն .
ապա և անձ այսպէս լսէ աղօթից քոց :
Ա'րդեակ՝ զի եղեր ինձ որոյ շունն այն՝ որ
դողայր'ի ցրտոյն , և մտաւ'ի հնոց բրտին .
և յորժամ տաքացաւ՝ սկսաւ հաջել ընդ
երես բրտին :

Ա'րդեակ՝ զի եղեր ինձ որոյ շունն այն ա-
գահ , որ ունէր հաց մի 'ի բերանն , և եր-
թայր յեղեր գետոյն . և տեսեալ շուն մի
այլ 'ի մէջ ջրին՝ և հաց մի 'ի բերան նր՝
ձգեալ զիւր հացն 'ի բերնէն , և անկաւ'ի
ջուրն , զի առցէ զայնու հացն . և իբրեւ
հասաւ 'ի մէջ գետոյն , ոչ զշունն եգիտ
և ոչ զհացն . այլ խեղդեցաւ շունն՝ և
զըկեցաւ յիւր հացէն . նոյնպէս և դու
զհացն իմ խելէ կամեցար՝ և զըկեցար 'ի
քո հացէն :

Եւ դարձեալ նախն աղաչանօք ասէ ա-
ռիս՝ մեղայ քեզ հայր՝ այլ չգործեմ ,
զոր ինչ գործեցի . մի չարաչար տանջեր
զես : Եւ ես ասացի՝ ահա տամ քեզ օ-
րինակ մի . զի ույ ծառն այն՝ որ բուսեալ
էր յեզր գետի միոյ . և մարդ մի ծառայէր
նմա . և յորժամ հասանէր ուրուղն՝ Թա-
փէր 'ի գետն և կորնչէր և երբ գայր
տէրն՝

տէրն՝ ոչ գտանէր զպտուղն . և աշխատե-
ցաւ այրն այն ք և ք տարի . այլ ՚ի հասա-
նիլ պտղոյն թափէր ՚ի ջուրն , և ոչ շահէր
ի նմանէ . և ապա կտրեաց զծառն , և ձը
գեաց ՚ի ջուրն ասելով . այսքան աշխատե-
ցայ , զի՞նչ շահեցայ , որ այսուհետեւ գը
տանեմ : Եւ այնպէս և դու եղեր ինձ . զի
յառաջագոյն այսչափ խրատս տուի քեզ
և ոչ լսեցիր . այժմ զի՞նչ պիտի լինիս .
տրժանի ես յայդ չարչարանացդ՝ մինչև
մեռանիս : Եւ սպանի զնա , և բարձաւ չարն
ի միջոյ , և եղև խաղաղութի : Եւ դ՛ զի՞նչ
մարդ՝ որ բարւոյն չար հատուցանէ , իբ-
րև . զնաթան կորնչելոց է : Յորմէ փրկես-
ցէ զմեզ քս նա՞մեր . և նմա՞ :



Պատմութիւն Լճիկան և Սանկան .
Եւ հարցումն նոցա ընդ միմեանս :



ՅԲ ՄԻ ԻՐ ՄԵՆԵ
տուն և իշխան ՚ի քաղաքի մի .
և ունէր անչափ գանձ : Ոսկի
և մարգարիտ անգին . և պատ-
ուհական ակոճեր , որ չկայր յայն աշխարհ
քան

քան զնա մեծատուն : Եւ ինքն ծերացել
 էր՝ և զսուակն ոչ ունէր . և հանապազ ա-
 ղացէր զնա վն զսուակի : Եւ նա ետ նը-
 մա որդի աննման և գեղեցիկ : Եւ բն-
 ծացաւ տղայն՝ ետ զնա հայրն յուսումն
 իմաստասիրուէ : Եւ նա ուսաւ զնա ի-
 մաստասիրական բանս . և էր պատերազ-
 մող անյաղթ : Եւ այց յետոյ ուտել և խմել
 անկաւ . և հաւոյց՝ զգանձ հօրն և մօրն .
 և հայրն ու մայրն մնացին դատարկ , որ
 այլ իսկի թնու իրք չմնաց : Եւ այց որդին
 ընդ հօրն և մօրն . կամիք , որ հեռանամք
 յայս երկրէս , և երթամք հանց երկիր՝ որ
 չճանաչին զմեզ . և զհպարտութիւն յետ դը-
 նեմք , ու մուրամք և ասլրիմք . ոչ մէք
 տրտմիմք , և ոչ մէք չար կամն ուրախանայ
 ՚ի վր մեր : Եւ սացին ծնողքն , դու գիտես
 որդեակ : Եւ առ մանուկն զհայրն և ըզ-
 մայրն , և գնաց ՚ի հռոմ քաղաք : Եւ կայր
 ՚ի քաղաքին յայնմիկ թագաւոր մի բարի
 և իմաստուն . մտան ՚ի քաղաքն՝ և իջան ՚ի
 տուն մի : Եւ այն թագաւորն յորս էր ե-
 լեր . և երբ եկաւ թագաւորն ՚ի յորսուն՝
 նա մտաւ մանուկն առ թագաւորն , եղ-
 ծունր և կանգնեցաւ : Եւ սկսաւ թա-
 գաւորն խօսիլ ընդ մանկանն և ասաց .

զի՛նչ խնդրեալ յինէն, որ պարգւեմ՝ քեզ:
 Լսէ մանուկն. թագաւոր՝ յաւիտեան
 կաց. ես թժառայ ունիմ ծախսու այր և
 կին. խնդրեմ, զի գնեա զնա: Լսէ թագա
 ւորն. բեր, և ես գընեմ: Եւ ընաց մանուկն
 առ հայրն և մայրն. և ասաց լը ծնողացն
 թէ՛ ինչ որ պատեհ է ինձ՝ կամիմ հանց
 բան առնել՝ որ դուք այլ ապրիք, և ես այլ:
 Լսացին ծնողքն, դու գիտես որդեակ:
 Լսաց մանուկն. կամիմ ծախել զձեզ՝ ի
 յայս թագաւորիս, որ հասնիք բարու. և
 ձեր գնովն ինձ բարի լինի, և ես ջանամ
 շուտով աղատել զձեզ. դուք ի՛նչ կու
 հրամայէք: Լսացին ծնողքն, դու գիտես
 որդեակ: Եւ էտու մանուկն զհայրն և
 զմայրն, և գնաց առ թագաւորն: Լսաց
 թագաւորն մանկանն թէ՛ քանի՛ ծախես:
 Լսէ մանուկն առ թագաւորն, տո՛ւր ինձ
 այս կին ծառայիս գին՝ աղէկ ձի և սլէհ
 իւր ասրօքն: Եւ այր մարդոյն գին՝ տո՛ւր
 ինձ աղէկ հալաւ և զգեստ պատուական:
 Հրամայեաց թագաւորն՝ զինչ որ մա
 նուկն խնդրեաց իւր ծառայիցն գին,
 որ լիակատար ետուն զամէնն. և թուր
 մի ոսկի գօտւով: Եւ էտու մանուկն
 զամի՛ զոր պարգւեաց նմա թագաւորն:

Լայա ասէ թագաւորն մանկանն . այլ
ինչ կուզես յինէն՝ խնդրեա՛ , որ տամ
քեզ : Լսէ մանուկն . Ճ ֆլօրի այլ խորճ
լըխ տուր Հրամայեաց թագաւորն և
տոճին : Գարձեալ ասէ թագաւորն . այլ
ինչ կուզես յինէն : Լսէ մանուկն . Հրա-
ման տուր ինձ , որ խօսիմ ընդ քո ծա-
ռայիցն՝ որ յիսնէ գնեցեր , որ զեւ-
րեանց օրհնութիւն առնում :

Հրամայեաց թագաւորն . գնա՛ և խօ-
սեաց : Եւ իմացաւ թագաւորն , որ իւր
ծնողքն էին : Գնաց մանուկն , և անկաւ
ի յոսս ծնողացն և ասէ . մի՛ հոգայք , թէ
աճ կամենայ , զձեզ շուտով կազատեմ :

Եւ ծնողքն օրհնեցին զզաւակն իւրեանց :

Եւ մանուկն յիշեաց զաճ , և մեկնեցաւ
ի ծնողացն լալով . և գնաց զօր և զ
գիշեր՝ ի մեծ դաշտ մի : Եւ ի գնալն՝ հան-
դիպեցաւ ընտիր մանուկ մի . բարեւեցին
զմիմեանս , և ընկերեցան ի ճոնադարհին :
Եւ երբ որ ընկերեցան՝ նա միւս մանուկն
իմացաւ զայս մանկան խօսքն , որ ըզ
հայրն և զմայրն ծախեր էր : Եւ ասաց
նմա . գիտացիր Եղբայր՝ որ իմ թագաւորն
զիս խիստ կու սիրէր . և թուղթ աւե-
տեաց ետ , որ տանիմ առ կղզեաց թագա-

ւորն , և առնում պարգևս մեծամեծս .
 այլ տեսանեմ գլեղ , զի դու խելօք մո-
 նուկ ես , և լաւ ձիաւոր քան զիս . առ ըզ-
 թղթերդ , և դու տար այն թաղաւորին .
 զեքեղ շատ բարիք կու պարգևէ . զինչ
 որ ան ինձ նասիպ արերէ՝ քեզ վնի . և
 ես յայս դաշտս կու կենամ , մինչև որ դու
 գոս առիս : Նառ մեծուկն զայն թղթերն ,
 և ՚ի սեկէքէսան եղիր , և գնաց ՚ի ճանա-
 պարհն իւր ՚ի մեծ դաշտ մի : Եւ յանկար-
 ծակի յիշեաց զհայրն ու զմայրն , և շատ
 ելաց . և ՚ի շատ հոգոցն ննջեաց ՚ի վր-
 ձիոյն , և ձին ՚ի ճանապարհէն ելաւ , և կո-
 րոյս ՚ի քնոյն զճանապարհն : Եւ յանկար-
 ծակի դարթեաւ ՚ի քնոյն , և էր ծարաւել
 ինքն և ձին . և ջուր իջ կայր . այլ՝ մոլորել
 ՚ի ջուրջ գայր : Եւ գտաւ ջրհոր մի հին
 ժամանակաց . և ՚ի ծարաւոյն կամէր ՚ի
 ջրհորն անկանիլ . ապա էհան զսեկէքէ-
 սան՝ որ զթղթերն ՚ի մէջն էր գրեր , և կա-
 պեաց պարան , և եհան ջուր . խմեց ինքն ,
 և խմցոյց իւր ձիոյն , և պահ մի հանգեաւ ,
 Եւ ապա ասաց ՚ի միտս իւր թէ՝ կարդամ
 զայս թղթերս , և սկսաւ կարդալ .

Եւ էր գրած առաջէս :

Եւ անուռն կողեաց թաղաւորի ողջոյն

սիրոյ • գիտացիր էղբայր, որ այդ թղթա-
բերդ անհաւատ մարդ է, և մեզ նենգա-
ւոր • դա՛ մեծ էր սու մեզ • և ամ գանձի
հատցնող • դա՛ ելաւ սու դուստր իմ, ու
վնաս գործեաց • և ես կամեցայ զինքն կո-
րուսանել • այլ՝ պատրաստեցի քեզ, որ
մարդ զմեր խախքուին չիմանայ • և առա-
քեցի սու քեզ, որ կորուսանես զինքն,
թէ զմեր սէրն կուղես :

Իարդաց և իմացաւ մանուկն, որ ՚ի վր-
իւր գալոց էր մահն • պատահեաց զթրդ
թերն, և գոհացաւ զայ • և օրհեաց զիւր
ծնողքն, որ զինքն ուսուցնապէս արա-
րին, զի գիտուէն իւր ապրեցաւ • և ա-
ղաչեաց զմեծ, որ ղճանապարհն գտանէր •
Եւ մոլորեալ շուրջ գայր զտիւ՛ և զգի-
շեր • և հարցանէր զանուն թագաւորին,
և զայն քաղաքն՝ որ գնալոց էր • և գտաւ
ու մտաւ ՚ի քաղաքն • Եւ էր այն քաղաքին
թագաւորն մեծ, և քաղաքն բարեւի •
Եւ իջաւ մանուկն ՚ի տուն պառաւի միոյ,
հանդեռաւ սակաւիկ մի • և սկսաւ հար-
ցանել և քննել զքաղաքն, և զքաղաքին
գնացքն, և զթագաւորն :

Եւ պառաւն ասէ թէ՛ այս քաղաքիս
թագաւորն դուստր մի ունի խիստ ան

նըման և գեղեցիկ և իմաստուն՝ որ չիկայ
 իւր նման. որչափ 'ի տարիք է հասեր՝ նա
 իննսուն և ինն թիւորի որդի է սպաներ:
 Բսէ մանուկն . ինչ պատճառի համար
 սպանանէ: Բսէ պառաւն. որդեակ կատէ.
 Թէ՛ նմ գիտ յաղթէ իմաստութե՛ Էս զնա
 առնեմ ինձ սոյր . և Թէ Էս յաղթեմ զնա՝
 սպանանեմ զինքն: Աւայդ պատճառովդ
 յաղթէ զթագաւորաց որդիքն և սպանա
 նէ . և զգլուխն՝ իւր չարտախին վր կու
 տընէ: Աւ իւր չարտախն 'ի վր Էմ՝ քա
 ղաբին կու նայի. և ունի թախտ ոսկի ա
 կամբ և մարդարտով շարած . անդ կու
 նստի և հայի առ մարդիկ 'ի դաՖէսէն 'ի
 վայր . որ մարդ զինքն չկարեր տեսանել:
 Աւ ունի պառաւ մի թարգմանող, որ նա
 խօսի 'ի հետ մարդոյ որ առ ինքն մտանեն:
 Բսէց մանուկն զայն խօսքերն 'ի պառա
 ւէն՝ և գիշերն 'ի բուն քուն չեղաւ:
 Երբ լուսացաւ գնաց 'ի բողանիքն . հա
 գաւ զիւր ոսկեկար հանդերձն. և անու
 շահոտեցաւ մշկով և վարդէ ջրով: Աւ
 գնաց 'ի թագաւորի դըստրոջ դուռն . և
 ուղեց հրաման 'ի մօտ առ թագուհին մը
 տանել: Աւ մարդիքն՝ որ 'ի դուռն էին՝
 խրատ տուին մանկանն , Թէ պատրաստ

Ինչ մանուկն արեւի իմ դ-ա
Եւ զի որ նա զիս ահա ընդ
անի և եւ զիս զիս ընդ
Եւ որ նա զիս ընդ զիս
և եւ զիս ընդ զիս ընդ

աղջիկն արեւի ընդ զիս
արեւի ընդ զիս ընդ զիս
արեւի ընդ զիս ընդ զիս
Ինչ մանուկն արեւի ընդ զիս
արեւի ընդ զիս ընդ զիս
Ինչ աղջիկն ընդ զիս
բաւ որ զիս և զիս ընդ զիս
և մեռան և զիս ընդ զիս
զիս արեւի ընդ զիս

Ինչ անհոգիս ապաւնէ և ապ
Ի զառն իւր իւր իւր իւր
Ի ինչ ապա իւր իւր իւր
ապաւնէ և ապաւնէ
Ինչ ապաւնէ և ապաւնէ
Ի իւր իւր իւր իւր

Ինչ ապաւնէ և ապաւնէ
Ինչ ապաւնէ և ապաւնէ

Ինչ ապաւնէ և ապաւնէ
Ինչ ապաւնէ և ապաւնէ

Ինչ ապաւնէ և ապաւնէ
Ինչ ապաւնէ և ապաւնէ

Ինչ ապաւնէ և ապաւնէ
Ինչ ապաւնէ և ապաւնէ

Բսէ աղջիկն . այն ինչ է , որ քանի աղ-
րի , ճանձիւ կու շատանայ և աղրի :

Բսէ մանուկն . գայլ ագռաւն է . զի
յորժամ կու բերէ զձագն՝ սպիտակ է
մինչև ֆօրն , և մայրն կու փախչի . և ե-
րեք աւուրն յետոյ կու սեանայ , և մայրն
գայլ առ ձագն իւր :

Բսէ աղջիկն . այն ինչ էր , որ քանի ողջ
էր , յերդ ու գարի կուտէր . և երբ մե-
ռաւ՝ մարդոյ միս և արիւն կերաւ :

Բսէ մանուկն այդ այն է , որ սամսոն
մանուկն իշոյ չէնկէ մի էառ ՚ի ձեռն , և
այնով հազար մարդ սպանեց :

Բսէ աղջիկն . այն ինչ ծառ էր , որ ճիւղ
և տերև էր , միս և արիւն դարձաւ :

Բսէ մանուկն . այդ մովսիսի գաւազանն
էր . որ քանի ծառ էր՝ ճիւղ և տերև ու-
նէր . երբ որ օձ դարձաւ՝ միս և արիւն եղև :

Բսէ աղջիկն . այն ինչ երկու հակառակ
են , որ զերար կու սիրեն :

Բսէ մանուկն . գիշերն ու ցորեկն է :

Բսէ աղջիկն . այն ո՞վ էր , որ ՚ի մամն մերձե-
ցաւ . նա մամն սասաց թէ՝ ես կոյս եմ :

Բսէ մանուկն . արեւի մարմինն էր , որ ՚ի
հողն բերին . հողն սասաց թէ՝ ես կոյս եմ :

Բսէ աղջիկն . այն ո՞րն էր , որ ժե տարի

Թագաւորեաց, երբ ժողմտաւ՝ նա հիւ
ւանդացաւ, երբ լմտաւ՝ նա մեռաւ,
և դարձեալ ողջացաւ:

Լսէ մանուկն, այդ լուսինն է:

Լսէ աղջիկն, ինչ գերեզման էր, որ շար
ժուէն և գնայուն եղև:

Լսէ մանուկն, յունան մարդարէն էր,
որ ձուկն կլաւ, շարժուէն և գնայուն եղև:

Լսէ աղջիկն, այն ով էր, որ ջուր և կե-
րակուր տարաւ քաղցելոց, նա զկերա-
կուրն թողին, զտանօղն կերան:

Լսէ մանուկն, դանիէլ մարդարէն էր,
որ առիւծոցն տարան, զդանիէլ թողին,
ու զտանօղն կերան:

Լսէ աղջիկն, այն ով էր, որ մեռաւ, ոչ
մարմինն ՚ի հող մտաւ, և ոչ հոգին առ
ւած գնաց:

Լսէ մանուկն, զովտոյ կիներն էր, որ աղ
դարձաւ, ոչ մարմինն ՚ի հող մտաւ, և ոչ
հոգին առ ւած գնաց:

Լսէ աղջիկն, այն ինչ ծառ է, որ ունի
ժք ճիւղ, և ամէն ճիւղ լտերև, և պը
տուղ նր ունի ու սպիտակ:

Լսէ մանուկն, ծառն՝ տարին է, Ժք
ճիւղն՝ ամիսն է, տերևն՝ լօրն է, պտուղն
սև ու սպիտակ՝ տիւ և գիշերն է:

Լսէ աղջիկն • այն ո՞րն էր, որ կուքար-
կոծէին • ոչ մարդ էր՝ ոչ քաջ էր՝ և ոչ
հրեշտակ, և խօսեցաւ զէտ մարդ:

Լսէ մանուկն • երեմիա մարգարէին վէմն
էր, որ կուքարկոծէին, խօսեցաւ զէտ
մարդ, իբր թէ ինքն է երեմիա մրդօրէն:

Լսէ աղջիկն • զինչ էր այն՝ որ խրատ
էտ ժողովուրդեանն • ոչ քաջ էր, ոչ հրեշ-
տակ, և ոչ ադամայ որդի, և խօսեցաւ
զէտ մարդ:

Լսէ մանուկն • մըռջիմն է, որ ան յի-
շեաց ՚ի գիրն և ասաց • գնացէք ՚ի ձեր
դարձարքն մտէք • սողումօն ժողովք է ա-
րեք՝ որ ՚ի հոտ չերթայք:

Լսէ աղջիկն • այն ով էր, որ էլ չի առա-
քեաց ան • ոչ քաջ էր, ոչ հրեշտակ, և
ոչ ադամայ որդի:

Լսէ մանուկն • գայլ ագռաւն էր, որ է-
կաւ առ ադամ, երբ կայէն զաբել սպա-
նեց, և ադամ չգիտէր, թէ զինչ առնէր •
եկին երկու ագռաւ, և մէկն զմէկն ըս-
պանեց ու թաղեց • ապա ադամ ուսաւ,
և փորեց զգետինն, և թաղեց զաբել:

Լսէ աղջիկն թէ՛ արի՛ էլ ու գնա՛ • այսօր
խաղիսեցար ՚ի ձեռացս • վախ կուտայր
մանկանն:

Լսէ մանուկն . թէ այն ձծն՝ որ փրկեաց
զիւ այսօր՝ կարօղէ , որ ՚ի վաղիւն այլ
փրկէ . և ելաւ ու գնաց խնդալով :

Երբամ տեսան՝ ձմբն զարմացան զնր
ապրիլն . զի անկից ՚ի զատ սլ մարդ չէր
ապրեր մինչև ՚ի սա :

Դնաց մանուկն ՚ի յիւր իջևանքն . և տե
սաւ , զի կուլայր պառաւն դառնապէս :

Եւ պառաւն երբ տեսաւ զմանուկն՝
խիստ ուրախացաւ և սասաց . որդեակ դու
բարով եկիր . այսօր նոր ծնար՝ ՚ի մօրէդ .
ես վախեցայ , թէ զքեզ այլ կու սպա
նանէ . և քո խղճուն ես մեռանէի :

Լսէ մանուկն թէ՝ ձծ փրկէ՝ զիս ՚ի նմանէ :

Սաղիւն երբ լուսացաւ՝ գնաց մանուկն
ի դղւոն թագուհւոյն , ետուր բարե և
սասաց թէ՝ գիշերս բարւով լուսացւ . քեզ
Եւ նորա դրին ոսկի աթոռ , և մանուկն
նստաւ :

Լսէ սաղիւն . այն ով էր , որ մէկն զմէկն
սպանեց . մեռնօղն ՚ի դժոխքն գնաց , և
սպանօղն ՚ի յարքայու թի :

Լսէ մանուկն . զամէքէ , որ զկայէն
սպան . կայէն ՚ի դժոխքն գնաց , և զա
մէք յարքայու թի :

Լսէ սաղիւն . այն որն էր , որ բռն
չէր

Ճերմակ էր, նա սև դարձաւ :

Լսէ մանուկն . նոյեայ որդին է . երբ
որ զանէծքն ընկալաւ՝ նա սեպցաւ :

Լսէ աղ" . այն ով էին, որ կերան և խմեցին
և մեռան, և չէր ծներ զիւրեանքն մայր :

Լսէ մանուկն . ադամ և եւայ էր :

Լսէ աղ" . այն ով էր, որ էգն յորձէն
ծնաւ :

Լսէ ման" . եւայ է՝ որ ծնաւ յադամայ :

Լսէ աղ" . ով է այն, որ ՚ի գայլոյ բերանն
դրին՝ նա չկերաւ :

Լսէ մանուկն . յովսէփ գեղեցիկն է :

Լսէ աղ" . այն ինչ տեղ է, որ քանի Տս
լատեղծեր է ԹԺ, նա արեգակն ՚ի վր
չէ՛ դիպեր :

Լսէ մանուկն . այն ծովու յատակն է,
որ մովսէս պատառեաց :

Լսէ աղ" . այն ինչ երկուք է, որ քանի
սաղրի կու մեծանայ :

Լսէ մանուկն . չկայ մեծ քան զձուկն ՚ի
ծովին, և զօձն ՚ի ցամաքին :

Լսէ աղ" . այն ինչ Է սիրելի են, որ զե
րար կու առնն :

Լսէ մանուկն . հոգին և մարմինն է :

Լսէ աղ" . այն ինչ է, որ զմարդ հարուստ
կանէ, ու դառնայ աղքատ կանէ :

Լսէ մանուկն . ապրշուով ճըճին է , և
իւր խելքն :

Լսէ աղ" . այն ինչ արիւն է հալալ ուտելոյ :
Լսէ մանուկն . այդ ձկանն է :

Լսէ աղ" . այն ի՞նչ էր , ո՛չ կերաւ ո՛չ
խմեց ՚ի կենդանութեն . երբ մեռաւ՝ կե-
րակուր կերաւ հող՝ և խմեց ջուր :

Լսէ մանուկն . մովսիսի գաւաղանն էր .
որ քանի ծառ էր՝ կերակուր ո՛չ ուտէր .
երբ կտրեցաւ ծառէն և օձ դարձաւ՝
նա կերակուր կերաւ զհոյն , և խմեց
զջուրն , և կտրեց զծովն :

Լսէ աղ" . տուն մի կայ մէջն ոսկի և դուռն
արծաթ . երբ որ պատն խողի՝ նա ամէն
Նա ՚ի վր գայ , չեն կարեր շինել :

Լսէ մանուկն . այդ հաւկիթն է . երբ որ
կոտրի՝ այլ չի շինուի :

Լսէ աղ" . արի՛ ել ու գնա՛ . այսօր այլ զեր
ծար ՚ի ձեռացս . վաղի՛ն տամ քեզ յայն
կթխայէն , որ մէկ այլ ընկերացդ տուի :

Լսէ մանուկն . ան ողորմած է , և ելաւ
գնաց խնդալով :

Երբ լուսացաւ՝ գնաց ՚ի դարոպատն ՚ի
դուռն թագուհւոյն . երեւ բարեւ թէ՛
գիշերս բարով լուսացաւ քեզ :

Եւ հրամայեաց աղ" , որ դըին զոսկի ա-
թոռն , և նստաւ մանուկն :

Լսէ աղջիկն • ո՞վ է այն՝ որ կուգրուով
լսելով, և կուգարնէ իւրովն, նա չունի
ձեռք և ոչ ոտք •

Լսէ մանուկն • այդ ձուկն է •

Լսէ աղ՝, ո՞վ է այն, որ կերակուր ու
տէ մինչ մեռեալ ՚ի տապանն էր, և եղև
տապանն կենդանւոյ •

Լսէ մանուկն • յոր երանելին էր • որ
քանի ցաւագնեալ էր՝ նա մեռեալ էր և
կերակուր ուտէր, և յետոյ առաւ զիւր
գեղեցկութիւն կրկին •

Լսէ աղ՝ • այն ո՞վ էր, որ խրատ ետ մար
դոյն • ոչ քաջ էր, ոչ մարդ, և ոչ հրեշտակ •

Լսէ մանուկն • բարդամայ էն է • ասաց
թէ՝ դարձի՛ր յետս, և մի՛ երթար անի
ծել զիւր •

Լսէ աղ՝ • ո՞վ էին, որ երկու խապարբեր
ուղարկեցին • ոչ քաջ էր՝ ոչ մարդ, և ոչ
հրեշտակ •

Լսէ մանուկն • ագուաւն ու աղաւնին էր,
որ նայ ուղարկեց խապար բերելու •

Լսէ աղ՝ • ո՞վ որ էին այնք իկ, որ մե
ռան և կացին ըմա՛հ և ըկէնք դճտարի •

Լսէ մանուկն • է՛ մանկուհին էին, որ
փախեան ՚ի թագաւորէն, և ննջեցին ՚ի
յայրն • և յետ դճտարւոյ յարեան •

Լսէ աղ" . ով որ էին , որ երբ յեգիպտոս
մտան , հէ էին . և երբ ելան , ցճռ եղան :
Լսէ մանուկն . յակօք նաճապետի որ
դիքն էին :

Լսէ աղ" . անբուսն անծընին բարձին ,
էանդադարին երդօքն սնցուցին :

Լսէ մանուկն . անբուսն՝ աղն է . անծին՝
ջորին է . անդադար՝ ջուրն է . երդիք՝
կամուրջն է :

Լսէ աղ" . այն ինչ է , որ անծ ետ , վաղվէն
եղաւ ցանեց զցանն . և յամէն պահու եր
թայր և ասէր՝ մեծացիր այ հրամանաւն .
և զինչ տարին որ կու մեծանայր՝ նա ա
մէն սահաթ մէկ մէկ տարու չափ մեծա
ցաւ . ի մէկ օրն . և ի մէկ այլ օրն արար
զինչ որ իւրեան պիտոյ էր :

Լսէ մանուկն . այդ այն ծառն է՝ որ
տնկեցին ի յայգին կիպարի . զի ան ա
ռաքեաց ձեռօքն գաբրիէլի հրեշտակին
տու նոյ և ասէ . տար ցանէ զայդ՝ որ լինի
ծառ . և կտրէ և տապան շինէ . մհւտ ի
ներս դու և որդիքն քո , կանայք որդւոց
քոց և կին քո ընդ նս . և արարին այնպէս՝
և տարեցան անքն :

Լսէ աղ" . երեք բան ինչ էր՝ որ խօսե
ցան , որ յայս ծառի :

Լսէ մանուկն . երեք բանքն այս է . ա-
ծուիլն է՝ որ խուփ չունի . ա երկինքն է՝ որ
սիւն չունի . ա հաւն է՝ որ կաթ չունի .
և մէկ այլ մարդոյն ձեռացն մէջն է՝ որ
մազ չունի :

Այս ճուղապէս այլվի վախեցաւ աղջիկն
ի կրտսրձէն և ասէ . այլվի դու մէկ աւելի
ասացիր : Եւ ասաց արի ել ու գնա . այ-
սօր այլ զերծար՝ ի ձեռանէս . վաղն հաս-
ցնեմ զքեզ քո ընկերացն :

Լսէ մանուկն . յաճեմ ապաւինէր ,
ինքն ողորմած է , ողորմի ինձ :

Եւ աւ խնդալով և գնաց ուրախուք ՚ի
յիւր իջեանքն :

Երբ վաղիւն լուսացաւ՝ նա եկու ՚ի
դուռն Թագուհւոյն բարե ետ :

Եւ ասէ աղջիկն Թէ՝ գիշերս երբ բա-
րով լուսացաւ և քեզ . և դրին զոսկի ա-
թուռն և նստաւ :

Լսէ մանուկն . հրամայեա՛ մեծ Թա-
գուհի , այլ ինչ կու հրամես :

Լսէ աղ՝ . հիմի հրամանքն քո է :

Լսէ մանուկն . ո՞վ է այն՝ որ հարուստ
էր աղքատացաւ , և յիւր աղքատուէն
հագաւ զիւր հայրն , ու հեծաւ զիւր
մայրն . և գնաց որ զիւր ապրանքն դատա-

նէր՝ նա մահն հասաւ՝ ի վր, առաւ զմահն՝ ի
ձիոյն վր. խմեց մահոյն ջուր՝ և խմցոյց իւր
ձիոյն. ինքն այլ ապրեցաւ՝ և ձին այլ:
Եւ աղջիկն շէարաց խօսիլ, զի ոչ գի-
տէր: Եւսա ասաց ընդ մանկանն. այ-
սօր գնա, վաղիւն տամ զայդ պատաս-
խանիդ. այդ դժար զբոց է:

Եւ մանուկն ելեալ գնաց ի յիւր օ-
թեւանքն:

Եւ աղջիկն ընդ իւր Թարգման պա-
ռաւն թէ՛ գնա՝ ի շուկայն, և առ սպիտակ
հաց, և գէր սագ մի. և հաւ խորոված. և
զփորն լեց շաքրով. և երկու աման անուշ-
գինի խիստ ուժով լինի: Անացին ծա-
ռայքն, և կատարեցին զկամքն նորո:

Եւ երբ դառն քուն եղան անքն, աղջիկն
հագաւ զիւր օսկէկսր հալաւն և անու-
շահոտեցաւ: Եւ ք գեղեցիկ աղջիկ այլ
ի հետ իւրն առաւ: Եւ ծառայիցն հրա-
մայեաց, որ բարձին զկերակուրն անուշա-
համ և զլմայելին. և գնացին յիջևան ման-
կանն, և զարկին զդուռն:

Եւսէ մանուկն, ով ես դու:

Եւեն ծառայքն. պարօն գիտէնաւ, որ
աղջիկ եմք ի դարպասէ Թագաւորի. և
զինչ լուսինն արեգական սիրոյ տէր է և
մեք

մեք. քեզին սիրոյ տէր եմք, այն պատճառին
համար կտրեմք տեսանել զքեզ:
Ըսէ մանուկն՝ գնա՛ ՚ի զատ. անձ գի-
տէ, որ նա չի մտանէր առիս. և ես ոչ
գիտեմ զնա:

Եւ նորա աղաչանօք պնդեցին զերես-
ներն՝ թէ ոչ երթամք ՚ի դրանէս, մինչև
տեսանեմք զքեզ:

Եւ մանուկն եթող մտանել ՚ի ներս:

Եւ մտեալ աղջիկն, եբաց զերեսն:

Եւ երբ տեսաւ մանուկն զերեսն աղջկան՝
վաղեցաւ ՚ի սիրոյն:

Եւ աղջիկն նստաւ, և նստոյց ընդ իւր
զմանուկն:

Ըսէ աղջիկն ցմանուկն, ունի՛ս կերակուր
ինչ ուտելոյ, բեր որ ուտեմք. և անուշա-
համ գինի՛ որ խմեմք և անուշաոնամք:

Օ ճայնն փոխէր էր աղջիկն, որ մանուկն
չէր կարէր ճանաչել զնա:

Ըսէ մանուկն. անձ գիտէ՛ որ չունիմ ինչ
ի ժամուս յայսմիկ, զի չգիտէի զձեր
գալն առիս, որ պատրաստէի ձեզ կերա-
կուր լաւ:

Ըսէ աղջիկն ծառայիցն իւրոց. բերէք
զինչ որ ունիմք ուտելոյ. և բերին զրին
սեղան զսնազան անուշ կերակրով, և

նստուն անուշ 'ի խումմ . և ամպակ գինւոյ
տրբուցին զմանուկն . և աղջիկն անուշ
զրոյց տայր , և ժղեցնէր զմանուկն :

Լսէ մանուկն . հրամայէ որ պառկիմք :
Լսէ աղջիկն մանկանն , թէ զիս կուղես
նա պատմէ զայն խօսքն , ինչ որ երեկ
թագաւորի դստերն ասացիր :

Լսէ մանուկն . չունիմ կարողութի ա-
սելոյ . զի կու վախեմ , թէ մեռանիմ այլ
բան հարցուր որ ասեմ :

Եւ երգում աւ յսօծ , թէ զայն բանն մինչ
եւ լսեմ 'ի քէն՝ ոչ կատարեմ զկամսքո .
և սկսու խաղալ ընդ նմա :

Եւ մանուկն բորբոքեցաւ 'ի խիստ սի-
րոյն , և յաղթեցաւ 'ի գինւոյն . և ասէ
ցաղջիկն՝ արի , որ պառկիմք :

Եւ լաւ աղ , և եհան զշարէշապիքն՝ և եղ-
'ի մնաքն 'ի գլխոյն ներքե . և սկսաց խա-
ղալ 'ի հետ մանկանն :

Եւ մանուկն յաղջկան սիրոյն և 'ի գինւոյն
թմրեցաւ , և մեկնեաց զխօսքն ,
և աղջկանն չկարաց առնել ինչ :

Եւ աղջիկն խնդաց 'ի միտքն . սահեցաւ
յանկողնոյն , և ելաւ գնաց խնդալով .
և շարէշապիկին պէտ չարաւ . և խիստ
ուրախացաւ թէ՝ ուսայ զհանելուկն . և

ինձ իրք մի չկարաց անել. և ընդ լուսա-
նալն՝ սպանանել տամ զինքն:

Լա մանուկն ՚ի վաղվնէն զարթեալ, և
խելքն ՚ի վրան եկաւ, նա իմացաւ՝ որ
զինքն խաբած էր, խիստ տրտմեցաւ. յի-
տոյ տեսաւ զհալաւ աղջկանն՝ որ մոռացեր
էր, և շատ ուրախացաւ, և հառ աչակն:
Լա ելեալ գնաց ՚ի դարպասն, ետ բարե,
և նստաւ յոսկի աթոռն:

Իմացաւ մանուկն՝ որ թգլորին դուստրն
էր, որ իրիկունն մօտն էր գնացեր:

Լա աղջիկն ուղարկեց խապար հօրն և
մօրն և իշխանացն, և եկին միաբան:

Լա մանուկն յօտն ելաւ, ծուռն էած
թագաւորին և նստաւ:

Լա աղջիկն թէ՛ ասեմ զերեկեան բանն,
որ յիս հարցար, և սկսեալ տառց զամէնն
կարգաւ, որ իրիկունն լսեր էր:

Լա ամենեքեան զարմացան ընդ գիտու-
թիւնն աղջկանն:

Լա մանուկն ընդ թագաւորն առաջի
ամ իշխանացն:

Տիեզերակալ թագաւոր՝ քո դուստրն
ինձ երեք օր բան հարցաւ, և ես պատաս-
խանի տուի. ես այլ իւրմէն բան մի հար-
ցանեմ. եթէ գիտենայ՝ նա զիս յաղթ ալ

է • և թէ ոչ ես եմ յաղթեր զնա :

Լսէ թագաւորն • այսօր հաւան եմք :

Եւ վեպ կացին ամ իշխանքն՝ որ այլաւ
ւելի ասուլիս չառնին :

Լսէ մանուկն առ աղջիկն թէ՛ որն է այն
թռչունն • որ կալայ զինքն և զինեցի •
և զփետուրն պահեցի • զինքն խորովեցի
և դրի առ աջևս թէ ուտեմ • և այն թռչ-
ունն՝ ի հետն ունէր այլ ցեղ թռչունք
ներ • ապա իւր փետուրն էր գեղեցկ
որպէս զոսկի՝ նա յանկարծակի թռաւ
և գնաց • թէ չէք հաւատար նա զփե-
տուրն բերեմ որ տեսնուք :

Աղջիկն երբ որ զայն լսեց՝ խիստ վախե-
ցաւ • գիտէր որ զիւր խաղարն կու տայր :

Լսէ՛ այդ ինչ գիծար զըոյց է • չեմ կա-
րեր գիտնալ • գիտեմ որ յաղթեցեր զնա •
ուղէ՛ զինչ որ կուզես • տամ քեզ :

Լսէ՛ մանուկն • այլ իրք չուզեմ քան
զքեզ աւելի :

Եւ իշխանքն վեպեցին և հաւանեցան :

Պատկեցին և արարին է որ հարսանիք :

Եւ ետ թագաւորն զկէսն թագաւո-
րու թեան և զկէս գանձին • և որքան աշ-
խարհ ունէր ամենեցուն տիրեց :

Այս ուղարկեց շատ մարդիկք և շատ

գանձս առ այն թագաւորին , որ հայրն
և մայրն՝ի քովն էին , և եբեր զիւր ծնօղքն
ի մօտ իւրն :

Եւ տեսեալ զմիմեանս ուրախացան , և
գոհացան զոյ :

Եւ զսպարնջական պառաւն՝ տարաւ ի
դարպասն և արար իւրն մեծ :

Եւ թագաւորն յետ մահոճան իւրոյ՝ ա-
մենայն գանձին և հեծելին և աշխարհին
տէր կացոյց զմանուկն :

Եւ քսի մարդասիրին փառք յաւիտեանս
յաւիտենից
Ըմէն :



Ապր և պատմութիւն Ընդհանրոյ
ճիշտութիւն :



ՅՐ ՄԻ ԼՐ ԴՐԼ

զաքն ըստամպօլ մեծատուն
յոյժ և իշխան մեծ , և հրօ-
մանատու բազում գաւառի . և եր ա-
նունն նր եփրեմիանոս . և կնոջն աննա :
Եւ եր եփրեմիանոս մեծ սիրելի ի յոյս
թագաւորին իւրոյ : Սորա էին հասեալ
ի

'ի մերձ ծերուէ, և ոչ ունէին զաւակ 'ի
 վր երկրի, որ ժառանգէր զինչս նց. և
 էին կարի տրտում և անմխիթար՝ վն ժա-
 ռանգուէ: Տիւ և գիշեր հանապազ տ-
 զաչէին զանձ վն զուակի: Եւ յաւուր
 միուս կինն աննա՝ բազում աղախնեօք և
 ծառայիւք գնաց 'ի մեծ յեկեղեցին 'ի
 սբն սոփիա, և կայր յաղօթս առ տր. և
 բարեխօսուէ սբ անձանին և ան սբցն՝
 հայցէր 'ի քսէ ժառանգ բարի: Եւ յետ
 աղօթիցն բազում ողորմութիս առնէր
 աղքատաց և կարօտելոց, և քահանայիցն
 անցուն, և ելեալ գնայր 'ի տուն իւր:
 Եւ 'ի գնալն՝ 'ի ճանապարհին հանդիպե-
 ցաւ մին աղքատ խելձ և ողորմելի և ա-
 սաց. տիկին՝ տուր ինձ ողորմութի 'ի քո
 մէկ որդւոյդ արեուն: Եւ տիկինն հիա-
 ցեալ 'ի միտս իւր, ասաց թէ, վայ ինձ՝ զի
 ես անժառանգ եմ, և դա՛ ինձ երանի տայ
 վն որդւոյ. արտասուէաց և ելաց. և
 հանեալ ետուր նմա ողորմութի, և էանց
 գնաց 'ի տուն իւր: Եւ 'ի գիշերին յայնմիկ
 երեկ 'ի տեսլանն մին ծեր, և աւետեաց
 զաննայ և ասաց. ի՞նչ դու՝ ասա՛ կատա-
 րեցաւ ինդրո՞ւնձ քո առաջի այ: Բայց
 զայդ արծաթ ապաստ դարպասն՝ որ անթիւ

ոսկւով և արծաթով է զարդարել տացես
 զնա ողորմուի աղքատաց և կարօտելոց :
 Եւ ընդ առաւօտն ելեալ կոչեաց զերի-
 ցունս և զքահանայս , և արար մատաղս
 մեծ և ընդունելութիս : Եւ պատմեաց
 զտեսիլն իւր՝ առն իւրում Եփրեմիանոսի :
 Իսկ նա հչ կամէր տալ , այլ դժուարա-
 պէս ետ . քանզի սիրէր զդարպասն զայն ,
 որ ՚ի Ե Ծ Լ Բ լիտր յոսկւոյ էր շինեալ . և
 յայսկոյս և այնկոյս մարգարտով շարեալ
 և զարդարեալ : Եւ չորս բազայ ԺԺ լիտր
 արծաթոյ՝ էր թռուցեալ արծուանման :
 Եւ մի այլ զթևս իւր տարածել ՚ի վայել
 չութի անկողնոյ իւրոյ . և էր Լ Բ լիտր ար-
 ծաթոյ : Եւ առեալ զայս կինն նր , կոչեաց
 զոսկերիչս և արար զնա դրամս և դահե-
 կանս . և քարոզ կարդաց և ասաց Ժողովել
 զմմ . քահանայան , որ ընդ իւր իշխանութն
 կային . և զմմ աղքատս և զխեղս և զկարս
 և զկոյրս , և պահել զնս ՚ի հրոտից ամիսն
 բոլոր մինչև յելս ամսոյն : Եւ առեալ
 ընդ իւր դճխէ քահանայս . և իջեալ ՚ի
 վանսն հսկեցին զգիշերն մինչև ցառա-
 ւօտն . և պատարագ մատուցին վս որդէ
 Ժնուէ նր . և նա ետ նց է է դահեկանս :
 Եւ յետ երէք ամսոց գիտաց կինն զյղուի

Իւր. և ետ աւետիս առ այրն իւր և յետ
 ինն ամսոց ծնաւ կինն՝ ի ծերուէ իւրում
 արու զաւակ։ Եւ յարուցեալ այրն՝ ար
 ձակեաց զհրաւիրակս ընդ ամ իշխանութիս
 իւր, կոչել զքահանայս և զեպիսկոպո
 սունս և զիշխանս։ Եւ արար մեծ ընդ ու
 նելուի, և մըկրտեաց զմանուկն, և եդին
 զանունն նր ալեքսիանոս։ Եւ իբրեւ զար
 գացաւ մանուկն՝ ետ զնա հայրն յուսումն
 գրոց։ Եւ էր պատանին առատամիտ և ա
 ռատաճեալ քան զհայրն իւր, և էր գե
 ղեցիկ յոյժ, և ձայն նր՝ էր քաղցր իբրեւ
 զքնարի։ Եւ իբրեւ եղև պատանին ժր
 ամաց՝ եղև հայրն արջառս և ոչխարս բա
 զումս վն նր։ Եւ էր հսկայաձև և ըն
 թերցող ամային նր գրոց, հին և նոր կտա
 կարանացն։ Սինչև էհաս լուր նր յա
 պարանս Թագաւորին։ Եւ յաւուր միում
 ասէ Թագաւորն ցեփրեմիանոս, ամ ետ
 պտուղ որովայն իւրում որոյ լուր նր էհաս
 առիս, և է իմ դուստր զոր դու ճանաչես,
 արդ՝ տուր զնա ինձ ի փեսայութի։ Սակի և
 արծաթ իմ նմա եղեցի, և յետ մահուն
 իմոյ՝ ժառանգէ զաթոռն իմ։
 Եւ ել եփրեմիանոս յերեսաց Թագաւո
 րին, և գնայր Թմբկօք և պարուք ի տուն
 իւր.

իւր : Իբրեւ լուսաւ ալիքսիանոս զգա-
 լուստ հօրն իւրոյ, յարեալ ընդ առաջն
 երկիրեպագ նմա և ասաց. հայր իմ ալեգք
 ծաղկեալ՝ զն է քեզ : Պատասխանի եա
 հայրն նր և ասէ, խնդամ և ուրախ եմ
 վնքո . զի թագաւորն խոստացաւ փե-
 սայացուցանել զքեզ : Պատասխանի եա
 ալիքսիանոս և ասէ, գրեալ է ՚ի նբ աւե-
 տարանն, թէ որ դառնայ ընդ դէմ ծնո-
 ղացն իւրոյ՝ տրտմութիւնն ՚ի դժոխս :
 Իսկ այց դու անարգեալ լիցիս յերեսաց ի-
 մոց, զի յոյժ խղեցին բանք քո զսիրտ իմ :
 Եւ իբրեւ լուսաւ եփրեմիանոս՝ դարձաւ
 տրտում, և անկաւ առաջի թագաւորին
 և ասէ . վայ է ինձ այսօր՝ զի որդին իմ ար-
 համարհեաց զհրամանն թագաւորիդ և
 զբանս իմ : Եւ թագաւորն ցեփրեմիա-
 նոս . մի հոգար զայդ . ես՝ լինի որ դար-
 ձուցանեմ զնա յայնպիսի խորհրդոյն :
 Եւ հրամայեաց թագաւորն կոչել զա-
 լիքսիանոս : Եւ գնացեալ գտին զալիքսի-
 անոս, որ ընթեռնայր զսաղմոսարանս՝ զոր
 ունէք ՚ի ձեռին իւրում : Եւ պատանին՝
 կոչէ զքեզ թագաւորն : Եւ յարուցեալ
 գնաց ալիքսիանոս զհետ նր յապարանս
 թագաւորին : Եւ թագաւորն ցալիքսիա-
 նոս .

նոս • հրդեհակ՝ զամուսնուէն պիղծ հա-
 մարիս : Պատասխանի ետ ալիքսիանոս և
 ասէ • ոչ թէ զամուսնուէն պիղծ համա-
 րիմ, այլ դրեալ է ՚ի սբ աւետարանին,
 թէ որ ոչ թողու զհայր՝ կամ զմայր՝ կամ
 զկին՝ կամ զորդիս՝ կամ զազգականս՝ և
 ոչ առնու զխաջնիւր և գայ զկին իմ, չէ՛
 ինձ արժանի : Ասկի և արծաթ կերակու-
 է ժանկոյ • և հանդերձ փափուկ ցեցոյ է
 կերակուր : Յայնժամ կոչեաց թագաւորն
 զերկոտասան իշխանս տանուտէրս՝ որք
 էին խրատատու թագաւորուէ իւրոյ • և
 ասէ ցնս՝ զինչ արարից, քանզի ոչ կա-
 րացի դարձուցանել զալիքսիանոս այնպի-
 սի խորհրդոյն : Պատասխանի ետուն իշ-
 խանքն և ասին • ոչ թէ բանիւ նր վարի
 թագաւորուիս մեր, այլ հրամայեա՛ ար-
 կանել ՚ի սնեեակ : Եւ թագաւորն հրա-
 մայեաց արձակել զալիքսիանոս • և առա-
 քեաց հրաւիրեալս ընդ ամ իշխանութիս
 իւր, ժողովել զամսն գալ ՚ի հարսանիս :
 Եւ իբրեւ գնացին քահանայքն կոչել զա-
 լիքսիանոս, զի պատկեսցեն ընդ դասեր
 թագաւորին : Ասաց ալիքսիանոս ընդդէմ
 քահանայիցն • մի դնէք ինձ պատկ թառա-
 մելի, զի զանթառամն շահեցայց :

Պատասխանի ետուն քահանայքն և ա-
 սեն • որդեակ՝ թէպէտ ՚ի թագաւորէն ոչ
 երկնչեա , այլ ՚ի մէնջ պատկառեա • և նա
 լուռ եղև • և տարել պատկեցին ընդ դըս-
 տեր թագաւորին • և արարին ժբօր հար-
 տանիս : Եւ տապա առել թագաւորն զձե-
 ռանէ մանկան և աղջկան՝ եարկ զնս ՚ի
 սենեակ և փակեց ՚ի վրնց զեօթն դուռն ,
 եւ յարուցեալ զմանուկն շիջոց զկան-
 թեղսն • և զմոմեղէնսն , և ասէ ցաղձիկն
 քոյր՝ պարտ է ինձ և քեզ յաղօթս կալ և
 ապա ննջել ՚ի միասին : Եւ ելեալ կացին
 յաղօթս և ննջեցին սրբութիւն : Եւ յետ ժբ-
 աւուրն անցանելոյ՝ ասէ աղձիկն ցաղքսիա
 նոս • ընդէր ոչ յայտնեցեր զքեզ հօր և
 մօր քոյ • զի բազում դեղատու բժիշկք
 կան ՚ի քաղաքիս : Եւ ցնա աղքսիանոս •
 սահմանէ՝ զի այր մարդոյն համարձակ է
 քան զկինն • պարտ է ինձ երեք անգամ
 խօսիլ , և քեզ ոչ ապա պատասխանի :
 Եւ յարուցեալ եկաց յաղօթս և ասաց
 այսպէս • Եւ աբրահամու իսահակայ և
 յակոբայ • որ փրկեցեր զերիս մանկուան
 ՚ի հրոյն բորբոքելոյ , փրկեա և զիս այս
 քաղան կնոջէս • զի մարմին կնոջ ոպ հուր
 է , և ես ոպ խոտ առաջի հրոյ • կամ ՚ի

յայրուսն առաջի սորա • զի կին՝ ընտանի
գազան է չար , և ոչ տայ հանգչել մար-
դոյ • և լռեալ ննջեցին : Եւ յարուցեալ
առաւօտուէն ալիքսիանոս ասէ ցաղձիկն՝
արի կացցուք յաղօթս : Եւ աղձիկն ցա-
լիքսիանոս • ընդէր ոչ խօսիս ընդիս և ոչ
բանիւ մըխիթարես զիս :

Յայնժամ ալիքսիանոս ետ զմատանին
ոսկի ՚ի նա և ասէ • քոյր՝ առ զսա և պա-
հեա ՚ի քեզ յիշելիք • մինչ ես երթայց ՚ի
դուռն եկեղեցւոյն յաղօթս , և սուրբ
գամ կատարեմ զկամս քո : Եւ բացեալ
զդրուսնսն , ելեալ դնաց մինչև յանկելա-
նոցն • և տեսեալ զաղքատիկ մի՝ որ ունէր
նա մաղեղէն մի զանձամբն իւրով • ետ
նմա զծիրանին՝ և հառ զմաղեղէն նր և
ազաւ ինքն : Եւ էր գին ծիրանւոյն երեք
հարիւր դահեկան : Եւ աղքատիկն թա-
քոյց զայն : Եւ առեալ ալիքսիանոս այլ
կարկոտուէն կաաւ մի , հարկ զգլխոյն
և ծածկեաց զերեսն իւր : Ի բրե հանց
պահ մի գիշերոյն՝ իմացաւ կինն զխոր-
հուրդս նր • ճիչ և աղաղակ բարձել լայր :
Եւ յարուցեալ դռնապանն ետես զդ-
րուսնսն բացեալ • և վառեցին ջահս և ըն-
թացան ՚ի յորոնել : Եւ ՚ի յորոնելն առ ոտն

Կոխէին զնա . և նա ասէր՝ մի՛ նեղէք զնա .
 Թէպէտ աղքատ եմ, այլ արարած եմ:
 Եւ իբրեւ էջ առ եզր ծովուն եգիտ նաւ
 մի որ երթայր յեէմ: և ասէ ցնաւավարն .
 հրդեակ՝ տար զնա յեէմ, և ես յաղօթս
 առնեմ վս. քո: Եւ նաւավարն . աղքատ
 տիկ ընդէր ծածկեա զերեսդ քո և ոչ
 բանաս: Եւ նա ասէ, զի խստակրօն վարը
 դասպետի աշակերտ եմ . և նա պատճի-
 րեալ է ինձ Թէ՛ մի հայիր ՚ի մարդ և ոչ
 յ՛ձ, և մի՛ բանար զերեսդ: Եւ մտեալ ՚ի
 նաւ հասին յարապօլիս . և անտի ՚ի կիպ-
 րոս . և անտի յեէմ . և յեէմէ ՚ի Լեառն
 սինա՝ զոր տը խօսեցաւ ընդ մովսէսի:
 Եւ արար անդ զնշան խաչին ՚ի վր նր և
 ասէ . սա եղիցի ինձ գերեզման և տուն
 յարկի . և եկաց անդ ալիքսիանոս ամս
 Լի՛ . և էր կերակուր նր ՚ի ծայրից ծա-
 ռոց և ՚ի խոտոց . և ըմպելի նր ջուր անձ-
 րեաց: Եւ ասպա ստնյ ընկէց ՚ի սիրտ նր
 զկարօտութի և զգուժ ծնողացն, և այնու
 նեղէր զնա: Եւ յարուցեալ էջ առ եզր
 ծովուն, և եգիտ նաւ մի՛ որ երթայր յեէմ:
 և ասէ ցնաւավարն՝ տար զնա յեէմ, և ես
 վս. քո աղօթս առնեմ: Եւ առեալ զնա
 նաւեցին, Եւ իմացեալ դիւանցն յարուցին

հողմ և մըրիկ 'ի ծովուն, և սկսաւ ակելո
 ծիլ նսաւն, և ոչ կարացին յաղծել:
 Յայնժամ եկին է դեք չարագոյն քան
 զառաջինն, և ասն ցմբմանա մեք դորա
 համբերութիւն գիտեմք. զի սորա զօրութիւն
 առաւել է քան զյորդայն. այլ զայս առ
 նեմք դմա չարութիւն յաթուցանեմք հողմն
 սաստիկ 'ի վր ծովուն, և տանիմք զդա 'ի
 դուռն տան հօր իւրոյ. զի տեսանելով
 զաղէտս ծնողացն իւրոց՝ տայցէ ծանօ
 թութիւն: Աւ հանին հողմն սաստիկ 'ի վր
 ծովուն, և տարեալ ընկեցին զնաւն 'ի
 դուռն տան հօր իւրոյ: Իբրեւ գիտաց ա
 լիքսիանոս, թէ սանյի էր գործն՝ սուէ.
 երթամ 'ի դուռն տան հօր իմոյ, և անդ
 կոխեցից զգլուխ սանյի: Աւ իբրեւ ել առ
 եղը ծովուն՝ ետես զեփրեմիանոս զհայրն
 իւր նստեալ 'ի վր ջորւոց, զի երթացր 'ի
 բաղանիս. և ընթացեալ ընդ առաջ երկիր
 եպագ նմա և ասէ. օտար յերկրէ եկեալ
 եմ վն անոճան քոյ. արդ՝ որ 'ի փշրանաց
 սեղանոյ քոյ անկանի՝ բաւական է ինձ կե
 րակուր. և որ յաղիկոյն քում կաթի՝ բա
 ւական է ինձ ըմպելի: Ասէ եփրեմիանոս
 ցեղբիայոս ծառայ իւր. որդեակ՝ տար
 զդա յանկեւանոցն մեր: Իբրեւ տարաւ

զնա յանկեւանոցն՝ ճիչ և աղաղակ բարձին
 աղքատքն նմ և ասեն. թէ դա աստ գայ՝
 մեք նմքն ելանեմք. իսկ եղբիայոս. աղ
 քատիկ՝ վնքո զնմ աղքատքն՝ ոչ կարեմ
 հանել աստի. իսկ ալիքսիանոս. աղաչեմ
 զքեզ՝ տար զիս մինչև յերրորդ դուռն.
 Եւ եղբիայոս տարեալ զնա ասէ ցդուռնա
 պանն. թոյլ տուր սմա բնակիլ յայսմ տե
 ղուջս. և եկաց անդ աւուրս իսկ. իսկ յետ
 լաւութենա՝ ասէ դուռնապանն. աղքատիկ՝
 արի և գնա աստի. ք և դ անգամ վարեաց
 զնա և ասէ՝ ել և գնա աստի. քանզի տի
 կինն մեր սովորուի ունի գալ ընդ այս և
 երթայ ՚ի ծովեզրն լալ զորդին իւր ալիք
 սիանոս զտէրն մեր. Եւ նա ասէր թէ՝ ես
 աստ մեռանիմ, և ոչ գնամ այլ տեղի.
 Եւ յետ սակաւ ինչ աւուրց գայր տիկինն,
 և առաջի նր ծառայք. և ծառայիցն լըր
 բեալք՝ առեալ զհերաց նր քարշէին զնա
 ՚ի վր երեսաց իւրոց. Եւ նա ձայնէր և
 ասէր. տիկին բարի մի տար զիս այդպէս
 առնել. թէպէտ և աղքատ եմ, այլ նոյ ա
 ղարած եմ. Եւ նա սաստէր աղջկանցն և
 ասէր. թոյլ տուք դմա բնակիլ յայդմ
 տեղուջդ պանդխտութե. Եւ ընդ աղքա
 տիկն նայելով ասէր տիկինն. աչքերն իմ

արևբսիանոսին կու Նմանի : Աւ ելեալ է
 կաց և սկսաւ լալ ընդդէմ ծովուն և ա-
 սէր . ջուրք՝ որ ՚ի ծովդ էք , մի թէ կլայք
 զորդին իմ զարբսիանոս , ցուցէք ինձ զնա ,
 զի նա էր իմ յետին և առաջին մըխի-
 թարանքն : () Ի ցաւին արեք իմ և գա-
 լարին . և հեծեծանօք ողբայ սիրտ իմ
 անդադար : Աւետաբեր հովիկ . մի թէ
 խապար ունիք և կամ զհոտն իմ արեքսիտ
 նոսին . զի տուրք էր նա ինձ յայ , և խնդր
 ունի ՚ի սրբասէր քահանայից : Աւ զայս
 ամլսէր արեքսիանոս և գալարէր արեք նր՝
 և խորովէր լեարդն , և ոչ տայր ծանօ-
 թուի յահէ ամենակալին այ . զոր ասէ ՚ի
 նր աւետարանին թէ՝ որ ոչ թողու ըզ-
 հայր՝ կամ զմայր՝ կամ զկին՝ կամ զագա-
 րակս վս անուան իմոյ , չէ ինձ արժանի .
 և եկցի՚ի դուռն տան հօր իւրոյ Ժք տարի :
 Աւ ապա հայեցաւ ամբի տառապանս նր ,
 և առաքեաց զհրեշտակապետն գաբրիէլ
 առնել զհօգի նր : Իբրեւ եկն գաբրիէլ ,
 ետ Նմա ողջոյն և ասէ . եկ արեքսիանոս
 մարդդ այ՝ և հանդիր յուրախուիս երկ-
 նից՝ ՚ի վերինն եկմի՚ի բնակուիս հրեշա-
 կաց . զոր պատմէ պօղոս թէ՝ զոր ական ոչ
 ետես՝ և ունկն ոչ լուսաւ՝ և ՚ի սիրտ մար-

դոյ ոչ անկաւ, զայն պատրաստեաց ամ-
սիրելեաց իւրոց: Եւ նա ասաց հրեշտա-
կին՝ ներել սակաւ իկ մի, մինչև գրեացէ
զվարս անձին իւրոյ: Եւ յարուցեալ էառ
քարտէզ և մուրճի բաղանեաց, և նստեալ
գրեաց այսպէս:

Եւ եմ ալիքս իմանոս որդին ձեր. հայր իմ
եփրեմիանոս. և մայր իմ աննա. և կին
իմ մարգարիտ: Ողջոյն թագաւորիդ և
քահանայից քաղաքիդ միաբան ամցն:
Սիւլայր հայր իմ ծերացեալ. այլ մսի-
թարեա՞ն ամբ: Յիշեա՞ զի դու զայս կեանքս
խնդրէիր, և ես զերկնային: Եւ առ զեր-
կաթն. և առ ի զոսկին փոխարէն՝ ի տնէ:
Սիւլայր մայր իմ և մի տրտմիր. մըխի-
թարէ զքեզ քս: Յիշեա՞ զի դու գայիր
և աղջկուհիքն օուաջի քո և հասեալ նց՝ ի
վր իմ, քարշէին զհեբոցս ՚ի վր երեսաց
իմոց, և ես լայի՝ ոչ զայն՝ որ զիս քոր-
շէին, այլ զայն՝ որ լայիր դու և աղիողորմ
կսկծանօք հառաջէիր. և իմ զնս հայե-
ցեալ՝ գալարէր աղիքս, և ոչ իշխէի տալ
ծանօթուի յահէն ան: Սիւլայր և դու
կին իմ մարգարիտ. զի ահաւասիկ պատ-
րաստեցի ինձ և քեզ ճանապարհ, որ տու-
նի ՚ի կեանսն յաւիտեանից: Եւ ծալեալ

զթուղթն եդ 'ի մէջ ձեռին իւրում և խը
 փեաց . և նոյն ժամայն աւանդեաց զհո-
 դին իւր 'ի փառս աս : Եւ 'ի ջին ժբ հրեշ-
 տակք 'ի ձե մարմնաւորաց և յայտնեցին
 քաղաքին և ասացին . արիք գնացէք 'ի
 դուռն եփրեմիանոսի՝ և գտէք զմարդն
 աս վախճանել : Եւ 'ի մէջ գիշերին դղրդե-
 ցաւ քաղաքն ամ . և վառեցին ջահս և մո-
 մեղէնս՝ և գնացին գտին որպէս հրեշտակքն
 ասացին : Եւ արկին 'ի վր նր դիպակս
 ալատուականս . և տեսին զի թուղթ ինչ
 գոյր 'ի ձեռին նր . և կամեցան բազումք
 առնուլ զնա , և ոչ կարացին հանել 'ի ձե-
 ռաց երանելոյն : Եւ մատուցեալ յառաջ
 քահանայ մի իմաստուն և ասէ . ոչ է
 պարտ առնուլ ումեք զթուղթն , այլ մի-
 այն նա՝ որ այսչափ ժամանակս կերակ-
 րեալ է զդա : Եւ ուղարկեցին խնդիր
 եփրեմիանոսի . և իբրեւ եկն՝ երկիրեպագ-
 նմա և ասէ . մեղայ քեզ սբ աղքատիկ .
 զի ոչ գիտէի թէ այսպս սբ էիր . և մեկ-
 նեալ զձեռն , և առեալ զթուղթն , եբաց
 և սկսաւ ընթեռնուլ :

Եւ եր գրեալ այսպէս :

Եւ եւ ալեքսիանոս որդին ձեր . հայր իմ
 եփրեմիանոս . և մայր իմ աննա . և կին

իմ մարգարիտ, Նա իբրև լուսաւ իսկոյն
 ձգեաց զթուղթն ի ձեռաց իւրոց, և ան-
 կաւ ի վր մեռեալ մարմնոյն, և յինքն ամ-
 փոփեալ գոչէր և լայր, և ոչ կարէին հա-
 նել ի գրկաց նր զերիս աւուրս, և ե-
 կեալ մայր նր և կինն՝ ոչ կարոցին մտա-
 նել առ նա մի ամբօխին: Յայնժամ բե-
 րին դանձաւ բազում և ցանեցին շուրջ
 զամբօխիւն. և քակեցաւ ամբօխն զկնի
 դանձին, և ապա կարացին մտանել առ
 ալիքսիանոս մարդն այ: Նա անկեալ մայրն
 ի վր նր. և հանեալ զըստինսն, եղ ի վր
 երեսաց մանկանն և ասէ. որդեակ իմ,
 թէ կենդանի ես՝ խօսեալ ընդ տառապել
 մօրքոյ, և դնէր զերեսն ի վր սրտին և
 հեղոյր զարտասուան. և ձայն բարձեալ
 լայր դառնապս՝ և ողբայր աղեողորմյոյժ:
 Նա եկեալ կինն նր՝ ընկեց զմատանին և
 ասէ. արդ՝ այս է սբ գալուստդ սիրելի
 իմ ալիքսիանոս, մինչև յերբ տասնամ զսի-
 շելքս քո: Նա ո՞ կարէ պատմել գրով զկո-
 ծումն և զողբումն նց՝ բոլոր քաղաքաւն
 առ հասարակ: Նա յետ բազում լալոյն
 տարեալ թաղեցին զերանելին նահատակն
 քնի զսբն ալիքսիանոս, և շինեցին եկե-
 ղեցի ի վր նր: Նա կացեալք հայր և մայր

նր կենդանի ըամ զկնի փոխման նբյն
 ծառայելով և սպասաւորելով նբ գերեզ
 մանի նր . և յետ այնորիկ հանգեան խա
 ղաղութք իբն : Իսկ նբն արեքսիանոս
 փոխեցաւ իբն ի հրոսից ամայ ի ը ի
 փառս նյ հօր ամէն :

Բարեխօսութք կամաւոր արքատացելոյն
 վնքո , և օտարացելոյն ի մարդկային ծա
 նօթութէ , քն անձ տո՛ւր և մեզ ատել
 զկենցաղոյս զբաղմունս , և մերձիլ ի նբդ
 նբց և ընդ անցնի փափագելիդ ,
 Ամէն :

Փփփփփփփփփփփփփփփփփփփփփփփփփփփփփ
 Պատուելի Տէր Զուսէան . և Որդւոյ
 նորին Ստեփաննոսին :



Թո՛ւականութէ արգիս հայոց մե
 ծաց , զճէ ամին , յերկիրն ընը
 տունեաց ի գաւառն տաբայ ի
 գօղայ քաղաքն , որ ասի արտամետ մերձ
 յամիրամակերտ մեծ գղեկին վանայ :
 Եւ քահանայ ոմն՝ մեծ արգի և մեծա
 տուն , զարգ տցեալ ան առաք ինութք ,
 անուն նր ստեփաննոս , Եւ էր յոյժ պար
 կեշտ և ամօթխած , արքատասէր և ողոր
 թի մած :

մած • հիւրընկալ և մարդասէր • առատա-
 ձեռն և ամենաբաշխ • քաղցեւոց կերակ-
 րիչ, և մերկացեւոց զգեցուցիչ • և յայլ
 ամբարեգործութիւն՝ ժիր և արի: Եւսե՛ր
 պաշտօնս ան՝ և ժամակարգութիւն անբե-
 կեղեցւոյ, անձանձիր՝ աղօթասէր • և զի
 կինն նր ամուլ էր՝ և հչ ծնանէր • վս որոյ
 միշտ հայցէր տալ նմա պտուղ օրհնութե-
 և ժառանգ սեփական: Եւսե որ զկամս
 երկիւղածաց սուսէ ան, լուաւ աղօթից
 նր, և ետ ան արու զաւակ: Եւ յօր մը
 կըրտուէն անուանեցին զնա յուսիկ • և ե-
 ամաց լեալ տղայն՝ հայրն սկսաւ գրել
 ՚ի տախտակի, և ուսուցանել մանկանն
 զգիրս անձային • զի էր յոյժ հանդարտ՝
 շնորհալի՝ և առատամիտ • երկարագի՝ և
 քաղցրաձայն • յոյժ հեղ՝ և խոնարհ ծը-
 նողացն • և քաղցր՝ և սիրուն յաչս անցւն:
 Եւ յորժամ եղե մանուկն յուսիկ ժգ-
 ամաց՝ ծնօղքն ետուն զնա ՚ի քեռին իւր
 առ մեծ վարդապետն և խստակրօն ճրգ-
 նաւորն՝ անանիա ՚ի մեծահռչակ աթոռն
 վարագայ • զի ՚ի նմանէ կատարեալ ուսցի
 զհին և զնոր կտակարանս անձային ան գը-
 րոց • և կացեալ անդ առ վարդապետն
 ամս ք: Եւ զի յոյժ հմուտ և տեղեակ ամ-

մոռանալէ մեղօք, Կնա՛ ուրացօղ լինի քի,
 և ատելի ամ Խբցն աց. Ճշմարտութե ացժմ
 ասեմ քեզ զխորհուրդն իմ. զե ես ուխտ
 եղեալ եմ ընդ աց սրբութե և անարատութե
 պահել զկուսութիւն իմ մինչև ՚ի մահ:
 () Ի թէ ամոռանութե ասպականեցից զկու
 սութիւնքս՝ լինիմ ուխտազանց և ուրա
 ցօղ: Եւ արդիկն. եթէ ամոռանութիւն ա
 նօրէնութի և ասպականութի է, ասպա՛ զխորդ
 ՚ի Խբ եկեղեցի՝ աց հրամանաւ, և ճեռամբ
 քահանայից, խաչիւ և աւետարանաւ դը
 նեն պսակ ՚ի գլուխ փեսային և հորսին՝
 և լինին մարմին մի ըստ հրամանի աց: Եւ
 մանուկն յուսիկ, ծանիր՝ քոյր, զի պսակն
 զոր քահանայքն դնեն ՚ի վր գլխոց մերոց՝
 ացն մարմնաւոր է և ասպականացու. և լ
 մեռանիլ մարմնոյն՝ անցանին ընդ նմա ամ
 փառք և մեծութե և վայելչութե Տիս:
 Իսկ ացն կենաց պսակն և փառքն և ու
 ըստութե Խբցն, անանցանելի և յաւի
 տենական է. և իսկոյն լոյս ամային շնոր
 հացն ծագեաց ՚ի սիրտ աղկանն: Եւ ա
 սէ ց յուսիկ, արդ՝ գիցութե ուխտ առաջի
 աց ծածուկ ՚ի մարդկանէ, զի ՚ի միասին
 կացցութե աստ ՚ի ասն հօր քում. և պա
 հեցցութե անարատ սրբութե զկուսութիւն

մեք՝ ունի զհոգևոր եղբայր ըստ հաճոյից
 կամացն նոյն։ Եւ զայս լուծեալ պատանոյն՝
 ասէ։ Եւր նա մեր պահեսցէ զմեզ յուխ-
 տին մերում՝ զոր ուխտեցաք՝ և փրկեսցէ
 յամորոգայթից հոգևոյ և մարմնոյ։ Եւ
 ապա՝ ի ծունկս անկէլ արտասուօք և բա-
 զում պաղատանօք՝ յանձնեցին նոյն զին-
 քեանս։ Եւ զինի աղօթիցն առանձնացել
 դատ ի միմեանց ննջեցին։ Եւ յորժամ հա-
 լին զգիշերային ժամն, յայնժամ յարու-
 ցեալ մանուկն յուսիկ հոգևոր սիրով մը
 խիթարէց զաղջիկն։ Եւ յորդորեաց ջերմ
 սիրով և երկիւղիւն կալ յաղօթս առ նա՝
 Եւ ինքն ելեալ ի տանէն ուրախուլք գը-
 նաց յեկեղեցին՝ ի ժամ աղօթիցն։ Եւ այն-
 պէս ասիւն և երկիւղիւն նոյն՝ կացին և
 մնացին ի միասին անարատ սրբութիւն՝ զամս
 ԺԳ անյայտ ի մարդկանէ։ Բայց միայն
 ծածկագիտին նոյն յայտնի էր։ Եւ ապա
 քահանայն ստեփաննոս՝ խորհեցաւ ձեռ-
 նադրել զորդին իւր քահանայ։ Վնորոյ
 կոչեալ զանանիս վարդապետն, և հան-
 դէս մեծ արարեալ բազմութիւն եպիսկո-
 պոսաց՝ վարդապետաց՝ քահանայից, որք
 նմին կամեցան, և ձեռնադրեցին զյուսիկ
 քահանայ։ Եւ արարին ուրախութիւն մեծ

Հոգևոր և մարմնաւոր զաւուրս է :
 Եւ յետ երկուց ամաց 'ի Թոճին զՃՀԵ
 ամի Եբ. քահանայն ստեփաննոս փոխեցաւ
 առ. քմ : Եւ Եբ. քահանայն տր յուսիկ՝ օր
 աւուր կրթէր զանձն իւր պահօք և ա
 ղօթիւք, մաքուր սրբութիւն, և ամառաքի
 նութիւն : Եւ յետ Ժամանակաց ինչ՝ եղև
 գալ զօրացն Թաթարաց յարևելս 'ի գե
 լեւ զԾա հայոց : Եւ գերեալ զբաղումն
 'ի գաւառէն տոսբայ և յըռշտունեաց՝
 և դարձան 'ի տեղիս իւրեանց բաղում
 աւարաւ : Եւ ընդ բաղմաց գերեւոցն՝
 գերեցաւ և անուանեալ կինն յուսիկ. քա
 հանային 'ի գիւղաքաղաքէն արաամետոյ .
 և տարեալ 'ի շահաստան քաղաքն Թավրէզ
 վաճառեցին զնա կնոջ միոյ բողաւագի ,
 որ է պոռնկախառնիչ : Եւ կինն այն բո
 ղաւագ՝ էր հաւատովն քրիստոնեայ .
 իբրև գիտաց իրիցկինն Թէ՝ բողաւագն
 քրիստոնեայ է : Եւ զայն զնա և ասաց
 Թէ՝ ես իրիցկին եմ պարկեշտութիւն կացեալ
 և տնմերձ 'ի խառնակութիւն անօրինաց :
 Օ ի այն Թաթարն՝ որ զիս գերեաց՝ յա
 ռաջին օրն հիւանդացաւ, և ան իմ պա
 հեաց զիս ամփորձ 'ի մեղաց, վա որոյ՝ ա
 ղաչեմ զքեզ տիկին, ոչ ապա զիս 'ի գործ

մեղաց . զի գիտեմ կերպաս նկարել . այս
 է՝ ապրշուժ բանցնել . և այնու . քեզ տուա
 լել վաստակ առնեմ , և ՚ի մեղաց զատ մը
 նսմ . զի կին քահանայի եմ սրբուք կե
 ցեսոյ՝ և գարշիմ ՚ի խառնակուէ անօրինաց :
 () այս իբրև լուաւ բողաւագն ՚ի կնոջէ
 իրիցուն , արար ըստ կամաց նր : Եւ է
 րէցն յուսիկ՝ ել ՚ի խնդիր ամուսնոյն իւ
 րոյ . և գնացեալ եգիտ անդ ՚ի շահաստան
 քաղաքն թավրէզ . և կացեալ առաջի բո
 ղաւագին ՚ի կերպ մուրացողի : Եւ հար
 ցեալ ցնա բողաւագն ասէ . ի՞նչ մարդ
 ես . և նա ասէ , էրէց եմ և գերոյ տէր :
 Եւ կինն այն եցոյց նմա զիւր ամուսինն ,
 և ՚ի խօսիլն իրիցուն ընդ կնոջ իւրոյ , տե
 սանէք բողաւագն , զի շունչ քահանային
 բոցածաւալ իբրև զլոյս ելանէր , և դար
 ձեալ մտանէր ՚ի բերանն իւր նշան անմե
 ղուէ նց : Եւ կինն բողաւագ՝ հարցեալ
 և գիտաց թէ՝ դեռեւս տղայ ոչ է եղեալ
 նց : () այնժամ ազգամամբ խնամոցն այ ա
 սաց բողաւագն ցերէցն թէ՝ ՚ի քեզանէ
 իրաց մի խնդիր ունիմ , դու զայն ինձ
 տուր՝ և ես զկինդ քո տաց քեզ ձրի :
 Եւ էրէցն . զի՛նչ է խնդիր քո տիկին .
 և նա ասաց , քեզ որդի տալոց է անձ . և

այն քահանայ լինելոց է : Օ այս հայցեմ
'ի քէն տո՛ւք հոգւոյ իմոյ զառաջին պա-
տարագն որդւոյ քոյ 'ի քաւուի ե'ի թո-
ղուի բազում մեղաց իմոց : Ասէ էրէցն .
եղևցի ըստ բանի քում . ե զխնդրուածս
սրտի քո՝ ար կատարեսցէ : Ասէ բողա-
ւագն . ահա կին քո անսիրտ 'ի չարեաց , ե
անմերձ 'ի յանօրինաց : Աւ ահա այլ ես
ե՛մ դեկան ձեզ 'ի պէտս շինուե , երթայք
ողջուք ե խաղաղուք : Աւ առեալ էրէցն
յուսիկ զկինն իւր՝ ե եկեալ 'ի գիւղն իւ-
րեանց արտամետ՝ արարին շինուի իբրեւ
զամս ք . ե յաւարտ շինուեցն ամի , ասէ
էրէցն ցամուսինն իւր . դու ինքնին գի-
տես՝ զի ամ շինուիս մեր զորս արարաք ,
ե ամ կահք ե կարասիք մեր՝ զոր այժմ
ունիմք , այս ամ 'ի պարգևաց ընչից բո-
ղաւագին է՝ զոր շնորհեաց մեզ , ե հաւա-
տով խնդրեաց . իբր թէ՝ 'ի մէնջ եղելոյ
որդւոյ առաջին պատարագն նր 'ի քաւուի
ե'ի թողուի մեղաց իւրոց . ե զի մեք ուխ-
տեցաք առաջի աս , զի սրբուք պահեսցուք
զկուսուածիս մեր մինչև 'ի մահս մեր . ե
ուստի՞ ծնանիցիս դու որդի՝ որ այն լի-
նիցի քահանայ . ե զխնդրուածս տիկնոջն
այնորիկ կատարեսցէ : Ասէ իրիցկինն .

տէր՝ համարադ ընդ իս ասես թէ՝ առանց
 հրամանին այ տերև մի՛ի ծառոց ոչ անկա-
 նի, արդ՝ զոր ինչ հրաման ան են՝ օրհնեալ
 եղիցի յաւիտեան: Եւ քահանայն յու-
 սիկ. ես երթայց՝ի սբ եկեղեցին՝ և անդ՝ի
 առնէ և ՚ի գիշերի աղօթիւք պաշտմամբ
 և պատարագօք աղաչեցից զմեր անձ. և
 դու՛ի տանքում՝ի սննեկի աղօթեալ միշտ
 ջերմ արտասուածօք, թերևս մորդ ասէրն ան-
 յայտնեացէ մեզ զհաճոյս կամաց իւրոց:
 Եւ ՚ի վրայս մուխտի անցին աւուրք իբ-
 րև երեսուն, յաղդմանէն այ եկն նո՛ւի-
 րակ՝ի սբ եկմայ վարդապետ մի ստեփան-
 նոս անուան, յոյժ առաքինի և ճշգնադ
 գեաց, զգաստ և պարկեշտ յամ ճանա-
 պարհս անային՝ յոյժ ծերացեալ ալեօք,
 գայ՝ի քաղաքն արտամետ, և կացեալ անդ
 զաւուրս ինչ, Եւ ՚ի կիրակի գիշերի՝ զկնի
 առանձնական աղօթիցն, տեսանէր տեսիլ
 երազոյ, զի էր մեր յուսիկ քահանայն զար-
 դարեալ սպիտակ և պայծառ քահանայա-
 կան զգեստիւ, և խաչ գաւազանն ոսկիա-
 ղօծ՝ ականակուռ ընդ ելուզեալ մտրգար-
 անօք՝ ծաղկեալ շուշանօք յաջոյ ձեռին
 նր, և յահեակ ձեռին սբ աւետարան:
 Եւ ՚ի գլուխ գաւազանին՝ ետես բուսել

Կանաչ տառադարձ տերևով և մեծավայել
 լուչ վարդ մի՝ բոլորազարդ ծիրանածա-
 ւալ և կարմրափայլ՝ ուն զհուր ՚ի վառ և
 զարհուրեալ ՚ի տեսնենէն զարթեալ ։
 Եւ զկնի արձակման առաւօտեան ժա-
 մուհն՝ վարդապետն այն , կոչեաց առան-
 ձին առ ինքն զոր յուսիկ քահանայն և
 տարեալ յաւանդատունն , և երդմամբ
 էհարց զնա վն վարուց և առաքինուէ նր ։
 Իսկ նա՝ յառաջ հչ կամեցաւ յայտնել նր
 մա բան ինչ՝ մինչ որ ընդ բանիւ արար ըզ-
 նա վրդնայն և ապա քահանայն յուսիկ ,
 սկսաւ պատմել նմա խոստովանութար զամ
 մի ըստ միով ։ Եւ վարդապետն ստե-
 փաննոս՝ հիացեալ տսէ ։ օրհնեալ է նա՝
 որ տայ զօրութի և համբերութի սիրողաց
 իւրոց ։ Եւ ապա յետ հոգևորական մը
 խիթարութեն , տսէ վարդապետն ցտէր
 յուսիկ ։ Գիտես , որդեակ՝ զի ՚ի սկզբանէ
 զնախնիքն մեր՝ արու և էգ ստեղծեաց ,
 զի ամուսնուք աճեացին և լցցեն զերկիր ։
 ուն և առաքեալն պօղոս տսէ ։ պատճառն
 է ամուսնութի ։ վն պատուիրանադրութե
 նն ես տամ ձեզ վերստին հրաման ամուս-
 նութե ձերոց ։ Ապա յետ աւուրց ինչ ,
 յղացաւ կինն նր յուսկայ և ետ նա՝ նն

զուսակ արու • զաղաւնին ամբիծ զսբն
 ստեփաննոս, որ կրթեալ վարժեցաւ ՚ի կը
 րօնս ւած պաշտուէ : Եւ ջրթափեալ է հաս
 ՚ի գիտուի բարւոյ և չարի • սկսաւ հե
 տելիլ բարեաց, և խորշիլ ՚ի չարեաց պար
 կեշտ վարուք և ուղիղ գնացիւք • կրթէր
 զսնձն իւր ՚ի պահս և յաղօթս սրբուք •
 հեռանալով ՚ի լիտի և յանմիտ բարուց
 կանանց ՚ի տիա տղայութե, և ՚ի հասակն
 մանկուէ • զկատարելոցն ունէր զինքեան
 զգիտութիս • խոհեմ և իմաստուն • ժուժ
 կալ և համբերօղ ուսումնասէր և ողոր
 մած • հլու և հպատակ հրամանաց ծնո
 ղացն • հեղ և հստաւարտ առ ամսն : Եւ է
 ղև յաւուր միում գնալ նմա ՚ի ջաղացն
 տանիլ ցորեանն ՚ի տանէ իւրենց ՚ի գիւղն
 յանգղ, առ ՚ի աղալ յաղօրիսն : Եւ ղն էր
 յաւուրսն յայնոսիկ սղուի հացի • և աղ
 քատքն յոյժ տառապեին • և ետես, ղն
 բազում աղքատք հաւաքել էին ՚ի դուռն
 ջաղացին : Եւ ինքն բարեանունդ պատա
 նին ստեփաննոս՝ բաժանեց զամ ցորեանն
 աղքատաց կո՛ւց կո՛ւց, և մնաց խորգն
 դատարկ : Եւ պատեալ ՚ի մարդկանէ ելից
 զայն մանր աւաղով, և գերմակ մոխրով
 և ասաց ոմանց օգնել ինքեան՝ և բառ

նալ գրաստուն իւրոյ . և բարձեալ զէջն՝
 եբեր յարտամետ, վարեաց զէջն՝ ի բակն
 իւրեանց . և ինքն փախուցեալ գաղտա-
 բար անկաւ ի ճանապարհ , և գնաց ի
 բերկրի : Իսկ երէցն յուսիկ՝ առեւ զբեռն
 ի յիշոյն , և տարաւ ի տունն . և մայրն
 բացեալ զբեռն՝ համն ալիւր , և արար խը-
 մոր . և հասուցեալ զհացն՝ ստաց իրիցուն .
 եւ ի դուրս , և տես զտղայն՝ և ասա , որ
 գայ հաց ուտէ , զի քաղցեալ է . զի կար-
 ծէին թէ՛ ընդ տղայսն գեղջին՝ ի խաղէ .
 և կամ թէ աշխատեալ ի ճանապարհին՝ և
 ննջեալ է ուրեք յորմի տակ , և կամ ի
 տանիս : Եւ ելեալ յուսիկն շրջեցաւ ընդ
 գիւղն բոլոր՝ և ոչ եգիտ : Եւ մայրն յոյժ
 տագնապէր մտօքն թէ՛ զինչ եղև տղայն :
 Եւ յերեկոյին հասեալ՝ առաւել հոգային
 ծնողքն , զի փնջ ի յայն մնային՝ թէ ուր
 և իցէ , երեկոյին հասել ի տունն գայցեր .
 և զգիշերն ամ անքուն կացեալ ծնողքն՝
 հոգային զտղայն : Եւ մանաւանդ թէ՛
 առաւել ևս մայրն ըստ մայրական գթոյն
 ազէկիզեալ լայր դառնապէս . որոյ և է
 սովորուի մօր հոգալ զտղայս . վայ՝ թէ
 քաղցեալ է . և եղծկ թէ ծարուի է .
 ո՛հ թէ զինչ պատահեցաւ նմա . ուր է՝

Եւ կամ զեանրդ կեսայ : Եւ այնպէս զգի-
 շերն ամասուէկի զեալ լացին դառնապէս
 հայրն և մայրն : Եւ ի վաղեւն գնացին
 աստ և անդ , ի գիւղ և ի քաղաք , գնաց
 հայրն ի յոստան՝ և մայրն ի վան , հարցին
 և ոչ գտին , դարձան ի տունս իւրեանց՝ և
 լային անմըխիթար տրտմութե զցայգ և
 զցերեկ : Եւ ապա յետ Ժ աւուր հանդի-
 պեալ ոմն ի ծանօթից նց , և ետես զնս ի
 լաց տխուր դիմօք : Եւ հարցեալ գիտաց
 զպատճառն , և ասաց թէ՝ զստեփաննոսն
 ես տեսի այս ինչ օր ի գիւղն կոչանի , և
 ասացի թէ՝ ի՞նչ բանի եկեալ ես աստ .
 և նա ասաց թէ՝ հայրն իմ յուղարկեաց
 զիս երթալ ի բերկրի ի պէտս այս ինչ
 բանի : Եւ նոքա ուրախացեալ օրհնեցին
 զայրն և զճանապարհն նորին : Եւ յա-
 բուցեալ հայրն ար յուսիկ գնաց ի բերկ-
 րի , և ել ի վանս արգելոն , և ետես զտը-
 ղայն , և խնդուք լցեալ ասաց . որդեակ՝
 զի՛նչ գործեցեր լ մեզ , մայրն քո՝ և ես՝
 տառապել լալոտ աչօք՝ և որոնեալ խընդ-
 րեցաք զքեզ ի վան և յոստան՝ և ի գիւղն
 ամ : Եւ ապա ասաց թէ՝ մայրն քոյ հաց
 հասոցց՝ և ես ելեալ շրջեցայ ընդ գիւղն
 ամ , և ոչ գտի զքեզ : Եւ ասաց ստեփանն

նոս թէ՛ ուստի՞ արար մայրն իմ զհացն :
 Լսէ երէցն • յալիւրէն՝ զոր դու բերիր
 ՚ի ջաղացէն : Լսէ ստեփաննոս թէ՛ այն
 ալիւր երբ էր : Եւ հայրն ասէր • որդեակ՝
 ցորեան տարար՚ի ջաղացն՝ և ալիւր բերիր •
 զի արդ չէր ալիւր : Եւ ասպա հաւատար
 մացաւ բանն ՚ի սիրան ստեփաննոսին • և
 ասէ ցհայրն • Թո՛յ յորժամ հասի ես՚ի ջա
 ղացն , տեսի անդ բազում աղքատք՝ որք
 հայցէին յինէն ողորմուի • և ես ետու նոյ
 կո՛ւց կո՛ւց զցորեանն անձ , և մնաց խորդքն
 դատարկ : Լսաւ Թարս իմացայ , և լցի զնոյն
 մանր աւազով և գերմակ մոխրով • և բար
 ձեալ իշոյն՝ բերեալ ՚ի գիւղն՝ արարի զգը
 րաստն բեռամբն ՚ի բաւն մեր , և ես փա
 խեայ • զի վախեցայ ՚ի քէն և՛ի մօրէն իմ
 մէ , թէ ծեծէիք զիս , և կամ տրտնջէիք
 գինէն • վստայնորիկ փախեայ և եկի աստ :
 Եւ այնժամ երէցն յուսիկ՝ անկաւ յերկիր՝
 և արտասուո՛ւք գոհանացր զայն • և ասպա
 ուրախուլ լցեալ և ասէ • օրհնեալ է Թո՛յ ,
 որդեակ՝ որ ՚ի ձեռն քոյ արար զայդ սքան
 չելիսդ : Եւ արդ՝ արի՛ որդեակ՝ զի երթի
 ցուք ՚ի տունս մեր տա մայրն քոյ • զի և
 նա յոյժ աագնաւդի վստայն • և՛ի տեսանէն
 զքեզ՝ ուրախացի ՚ի վր քո : Լսէ ստե

փաննոս • մի՛ արասցէ նա՜, որ այլ ես՛ի յայս
 վանացս ելանեմ • աստ կեցայց՝ որքան եմ
 կենդանի • և աստ մեռայց և թաղեցայց •
 Լա՛ ՚ի շատ ողորկէն և ՚ի ստիպէն հայրն
 զորդին թէ՛ եկ, որ երթամք՛ի տունն մեր •
 գան ժողովին միաբանքն ուխտին՝ և ասեն
 ցնա • որդի, երթ գնա՛ ընդ հօրն քու • և
 տես զմայրն քոյ • և յետ աւուրց ինչ դար
 ձեալ դու եկ աստ ՚ի վանս առ մեզ •
 Լա՛ նա ոչ լուաւ նց, և ոչ հաւանեցաւ
 գնալ ընդ հօրն իւրում • Լա՛ իբրեւ ոչ կա
 րացին հաւանեցւցնել զաղայն, ապա ասեն
 միաբանքն ուխտին ցհայր մանկանն • Տը
 յուսիկ • արդ՝ արի՛ դու՛ և երթ գնա՛ ՚ի
 տուն քոյ՝ և առել զմայր աղայիդ բերցես
 աստ • զի և նա տեսցէ զաղայն իւր •
 Լա՛ այնպս մնաց ստեփաննոս ՚ի նոյն վանքն
 արգելան • և վարժեալ նա՛յին գրոց գի
 տուե՛ եղև • աբեղայ • Լա՛ հայրն ասաց նմա
 զգերիլն մօրն և զաղատիլն, և զխնդիրն
 բողաւադին • Լա՛ նա ՚ի պտրագին սկսաւ
 յիշել զբիբին, յայնժամ տեսիլ ահեղ և
 զարմանալի երևեցաւ նմա • քանզի ամիշուի
 կալաւ զնա • և տեսանէր զինքն յեզր ա
 րեան ծովու մի • և կինն այն բիբի ՚ի մէջ
 արեան ծովու • Լա՛ որքան նորնծայ քա

հանապազօրէն պատարագին ասէր՝
 կինն այն ի դուռս գայր յարեան ծովէն .
 և ելեալ արտաքս՝ եղաւ ի ցամաքն անաղտ,
 և մոքուր յարեան ծովէն . և թէ պատա-
 րագ ի չափ յամեցաւ, և ապա արձակեաց
 զպատարագն, լաւ ի հարցանել ծերոցն ըզ-
 պատճառ յամենալոյն, ապա ասաց նա ըզ-
 տեսիլն՝ զոր ետես . և որք լոճանն՝ ուրա-
 խացեալ փառս ետուն այ . լաւ ի վաղիւն
 հարկիւ աղաչեցին զնա ստեպ՝ և հոյցեին
 ի նմանէ պատարագ մատուցանել . և նա
 ոչ էառ յամեն . այլ այն մին պատարա-
 գաւն եկաց զմեժամանակս կենաց իւ-
 րոց՝ ասելով թէ՝ արեան ծովուն . ոչ եմ
 կարող ընդդէմ կալ . և կացեալ ի նոյն
 վանս արգելան . և անդ վարժեալ եղև
 վարդապետ ճշմարտունէն . լաւ յերկարել
 ի բազում աւուրս բարի և տաք ինասեր
 վարուք ի հաճոյս կամացն այ . և եղև ի
 վրդովմանց ժամանակաց և յասպատակ-
 մանէ հինից պատերազմաց այլազգաց,
 ելանել անջ վարդապետին ատեփաննոսի՝
 յերկրէն տարբերունոյ՝ ի անմենատա-
 նէն արգելանաց . լաւ գնացեալ ի ան-
 լեառն՝ որ կոչի խաչ գլուխ : Սբ անու-
 քեալն հայոց թաղէոս, և յետ նց ան-

Գրիգոր լուսաւորիչն մեր՝ խաչ էին գրող
 մեալ մատամբն՝ ի գլուխ լերինն . և օծեալ
 լերինն ՚ի վր կարծր վիմին յանապատն
 Խաչակայ պարթևի հայոց հայրա-
 պետին . ուր բազում ճգնաւորք և խստա-
 կրթօն միանձուռք բնակէին անդ : Արոց էր
 սուաջնորդ՝ սբ վարդապետն գրիգոր վե-
 կայասէրն՝ հրեղէն լեզուէն . որ էր այր կո-
 րովամիտ և բանիբուն , վարժեալ ՚ի գիրս
 Թաւրիս հին և նոր կտակարանացն : Եւ
 գնացեալ անդ ՚ի յանապատն Խաչակայ
 կայ՝ սբ վարդապետն ստեփաննոս՝ և անդ
 անտանելի և խստակրօն ճգնութեմ կատա-
 րէր Թաւրիս վարս իւր : Եւ քանզի ոչ
 Թաւրիս քաղաք՝ որ ՚ի վր լերինն կայցէ . և
 ոչ լուցանէն ճրագ՝ և դնեն ընդ գրոճա-
 նաւ , այլ՝ ՚ի վր աշտանակի , զի Թաւրիս
 ՚ի տան Թիս իցեն , զլոյսն տեսցին : Եւ
 Ելունէր համբաւ ճգնուէ վարուց նր ընդ
 Թաւրիս շրջակայ գաւառն և յԹաւ հեռաւոր
 տեղիս . և գային առնա բազում գիւն-
 հարք և ախտաժէտք և պէս պէս ցաւա-
 րաբք . և աղօթիւք սբ վարդապետին՝
 Թաւրիս ըստ հաւատոց իւրեանց անոճամբն
 քիւն գտանէին զթշկուի և զառողջուի
 հոգւոց և մարմնոց . և ուրախութեմ դառ-

նային 'ի տեղիս իւրեանց՝ և փառաւորե-
 լով զքս : Եւ այնքան տարածեցաւ համ-
 բաւ սքանչելեաց նր ընդ ամերկիր , մինչ
 զի այլազգիքն և մահմետականքն ևս ա-
 մենեքեան լոճել զարմանային : Եւ ոմանք
 'ի նոցանէ հայհոյեին զնա . սուտ և խա-
 բեբայ կարծեին զնա՝ ասելով թէ , այս
 պիտի հրաշագործուի և քարամաթ՝ մի-
 այն նոյն գործ , և ոչ հողեղէն մարդոյ :
 Եւ մի ոմն 'ի յանհաւատ յանօրինացն ,
 չարագործ և ժանդաբարոյ , որոյ անունն
 էր իւսիւֆ . 'ի բերդէն յամկոյ , արճեա-
 տիւ՝ մտադործ , որ էր զսասայ ըստ չար
 բարուց իւրոյ . կամեցաւ նենգութիւն
 ձել զքս վարդապետն . և զամ հրաշագոր-
 ծութիս՝ և զբարի համբաւն սըտել և
 քամահել : Եւ ելեալ գնաց 'ի վանքն յե-
 րերնայ՝ յանսոյատն յբոյն իսահակայ .
 զինքն քրիստոնեայ ասելով , զի լաւ գի-
 տէր զլեզու հայոց , և ասէր 'ի մտի իւրում
 թէ՝ հողեւոր բժշկուի և օգտուի ոչ կա-
 րեմ իմանալ և տեղանել . այլ՝ կամիմ մտը-
 մնալան ինչ կերպիւ՝ փորձել զսքանչելեց
 համբաւ քրիստոնէից : Եւ դնէր 'ի մտի
 իւր զկոճն՝ զոր 'ի վր նր կտորէր զփսն 'ի
 խանութն , հայր իւր անուննեաց զկոճն՝

և ասէր թէ, 'ի չոր փայտս այս երևեսցի
 նշան ինչ, ապա հաւատամ թէ՝ ճշմարիտ
 է հաւատք իստոնէից՝ և համբաւ սքան
 չեւեացն քի և սիրողաց իւրոց։ Եւ մոռել
 առ սբ վարդապետն ստեփաննոս իբրև
 զքրիստոնեայ, երկրպագութի մատուցա
 նէր, և հայցէր բաժին աղօթից նր. տայր
 մարմնական ինչ պարգևս եկեղեցւոյն և
 վարդապետին. և քրծնելով աղաչէր, և
 կեղծաւորութեամբ ասէր, աղաչեմ զքեզ՝ յի
 շեւ զհայրն իմ յարժանաւոր աղօթս քո՝ ի
 ժամ սբ պատարագին։ Եւ սբ վարդապե
 տըն ասէ ցնա. զի՞նչ է անուն հօրքոյ.
 Եւ նա ասէ կոճիկ է անուն հօրիմոյ, ար
 հոգեոր, Եւ այն գիշերն, զի էր կիրակի՝
 և յարուէ տօն արդունի, սբ վարդապետն
 ստեփաննոս՝ յառաձնական աղօթս իւր՝
 զոր 'ի գիշերի մատուցնէր, արտասուեալ
 հառաչ պաղատանօք հայցէր յայ ողորմու
 թի՝ և բժշկութի՝ և պայծառութի կոճկին.
 Եւ 'ի վաղիւն ելել մնագործն 'ի վանացն՝
 համբուրեաց զվրդնդտն և գնաց 'ի տուն
 իւր։ Եւ իբրև էհաս մերձ խանութին՝
 էառ զհոտ անուշուռ. և բացել զդուռն
 խանութին, ետես զկոճն, զի կանաչացել
 էր ազգի ազգի տերևով. և ուղեշս ար

Ժակեալ՝ որ ոչ էր տեսեալ ական մարդոյ :
 Լա ապա հոգոց հանեալ՝ և արտասուճա-
 հոս ողբովք երանի՛ տայր քրիստոնէիցն և
 իւրեանց հաւատոցն : Լա ընթացեալ ՚ի
 տունն առ ընտանիսն և յամբնակչացն ,
 պատմեաց զմեծ և զարմանալի հրաշն . որ
 և ամբն եկեալ տեսին զսքանչելիսն , և հի-
 ացեալ փառս ետուն ձյ , և երկբայեցան ՚ի
 հաւատոցն իւրեանց : Լա ապա մտադործն
 իւսիւֆ առեալ զկոճն այնպիսի կանա-
 չացեալ շքեղութեալ ՚ի վր գլխոյ իւրոյ .
 և ամ ընտանեօքն և ազգականօքն գնացին
 առ սբ վարդապետն ստեփաննոս ՚ի վանքն
 էրերնայ . անկան առ ռոս նր , և հայցէին
 զներողութի և զթողութի յոնցանաց . և ա-
 սէր թէ՛ հայր սբ՝ ես խաբէութեալ փորձեցի
 զքեզ . և ապա խնդրեաց զմկրտութի :
 Լա սբ վարդապետն մրկրտեաց զնա ամ
 ընտանեօքն և ազգականօքն՝ յաղբիւր ա-
 նապատին սբյն սահակայ , զոր ականերև
 տեսին ամբն , լոյս սաստիկ իջեալ յերկնից
 ՚ի ժամ սբ մրկրտութե վկայ սքանչելեացն
 ձյ . և եղև ուրախութի և ցնծութի մեծ ամ
 քրիստոնէից : Լա ապա սբ վարդապետն
 ստեփաննոս եմուտ ՚ի տաճար սբյն սահա-
 կայ , և արտասուճալից պաղատանօք խնդ-

րեաց յնայ, զի այնու Կանանչացեալ Կո
 ճիւն, բազում ցաւոց առողջութի եղեցի:
 Եւ Լս ժբ ազգի զանազան ախտից ա
 ռողջութի լեցի. և մանաւանդ թէ Կատա
 ղեալ շանց և այլ նմ գազանաց՝ որք խա
 ծատեն զմարդիկ. Եւ աւանջացաւոց՝
 և առամեացաւոց՝ բերանացաւոց՝ գլխա
 ցաւոց՝ փորացաւոց՝ ի ծաղկաբերութի Կա
 նանց՝ ի ջեմ ցաւոց՝ ի դիւսաարսուռ
 դողմանց՝ ի յախտից չար բորոտութեց՝ և
 յնմ հիւանդութեց. որք հաւատով դի
 մեալ գան՝ հեռուորաց և մերձաւորաց՝
 առցին զառողջութի իւրաքանչիւր ցաւոցն:
 Եւ զկնի աղօթիցն՝ ապա ետես նք վար
 դապետն, զի ձեղունք տաճարին բացան.
 և յերկնից սաստիկ լոյս փայլատակեալ
 եմուտ ի տաճարն. և ընդ լուսոյն բազ
 մութիք դօրաց հրեշտակաց՝ և ի միջն նոցին
 ահեղտկերպ և զոճարթատեսիլ երիտա
 սարդ մի՝ նստեալ ի վր չորեքկերպեան ա
 թոռոց, զոր երեքսրբեան քաղցրօճայն
 բարբառով բերեալ եղին ի վր նք սե
 ղանոյն. Եւ նա ինքն քն ձայնեալ առ նք
 վարդապետն ստեփաննոս՝ և քաղցր բար
 բառով ասաց. Կատարեսցին խնդրոճածք
 քո՝ զոր հայցեցերն՝ և զոր հայցեսդ, ով

սիրելի իմ. և ապա ամփոփեցաւ տեսիլն :
Եւ յայնմ օրէ մինչև ցոյսօր և առ յա-
պայ՝ հաւատացեալք և անհաւատք, որք
'ի հեռաւորաց և 'ի մերձաւորաց դիմեալ՝
գան հաւատով և յուսով յուխտն 'ի վանքն
սբին սահակայ, առնուեն զկատարեալ ա-
ռողջութի հոգւոց և մարմնոց, և զփարա-
տումն ամ ցաւոց՝ շնորհօքն քի և աղօ-
թիւք նոր յուսկայ որդւոյն ստեփաննոս
վարդապետին : Եւ 'ի յաւուրս աղուհա-
ցիցն՝ զկնի աօնի սբյ լուսաւորչին՝ 'ի կի-
րակէի առաւօտուն, զկնի գիշերացին
ժամուն՝ սբ վարդապետն ստեփաննոս՝
գնաց առանձին յարեւելեան կողմն տաճա-
րին. և լը իւրում սովորուէն, 'ի ծունկս
անկեալ արութսոճաբողիս աչօք աղօթէր
առ ամ տարածմամբ ձեռաց մինչև ցեր-
բորդ ժամ աւուրն : Եւ ետես զքս մե-
ծաւ փառօք իջեալ 'ի վերայ բարձր դը-
ղեկին ամկոյ բերդի եկեղեցւոյն, զոր յա-
ռաջագոյն շինեալ էր սբ առաքեալն թա-
դէոս. և եկաց մնաց անդ իւրե ժամ մի՝
'ի տեսութի մըխիթարուէ սբ վարդապե-
տին, և ապա վերացաւ յերկինս : Եւ յետ
անցանելոյ ամաց երկոտասանից, յամսեան
մայիսի ժե՝ յաւուր համբարձման փրկ-

չին մերոյ յետ սբյ պատարագին, ելեալ սբ
վրդ Կարսն ստեփաննոս՝ և գնաց ՚ի լեառն
խաչ դուռի, ուր սբ առաքեալն Թադէ-
ոս, և յետ նր՝ սբն գրիգոր խաչ դրոշմեալ
օծեցին, զոր յառաջագոյն յիշեցաք:
Եւ զի աղդմամբ սբ հոգւոյն՝ յառաջա-
գոյն գիտաց զվախճանն իւր. և անդ ՚ի լե-
ռինն առաջի սբ խաչացն՝ զծուռնկան ՚ի վր-
ապառաժ վիմի միոյ եդեւ՝ յորում հետք
նշանացն և տեղիքն յայտնապէս երևին
տեսիլ սքանչելեաց առն Կարս սբ վարդապե-
տին ստեփաննոսի: Եւ անդ բազկատա-
րած մաղթանօք և յորդահոս արաասու՛ով
հայցել յԵյրզն առաքեսցէ նմա զհրեշտակ
բարի և խաղաղուէ՝ որ քաղցրուք աւան-
դեսցէ զհոգի իւր. և անխռով խաղա-
ղուք անցուցէ ընդ դասս օդային այսոցն
չարուէ, որք են ՚ի ներքոյ երկնից: Եւ Կար-
մանաւանդ խնդրէր զպէս պէս հայց-
ու՛ածս վն Կարմն. Նի խաղաղուէ. քրիս-
տոնէից անդորրուէ. եկեղեցեաց հաս-
տատուէ. հայրապետաց ուղղափառուէ.
վարդապետաց անձանձիր քարոզուծի.
քահանայից սրբուէ. կրօնաւորաց արի-
ուծի. այդեստանեսոյց պապաբերուէ.
պատրիզաց առաւելուէ. խաչանց և ա-

նախնոց անսխալ ծննդականութիւն . տնայ
 շինութիւն . արանց խոհեմութիւն . կանանց սլաք
 կեշտութիւն . երիտասարդաց ողջախոհութիւն .
 կուսից զգաստութիւն , տղայոց պահպա
 նութիւն . բարեաց լիութիւն . աղ
 բերաց յոլովութիւն . ծովու խաղաղութիւն . ամ
 ոյց քաղցրութիւն . անձրեաց յորդութիւն . գե
 տոց հանդարտութիւն . թագաւորաց հաշ
 տութիւն . բռնաւորաց խաղաղութիւն . սողնոց և
 անմիտասակար գեռնոց՝ և թիւնաբեր ճը
 ճեաց վերացումն . հիւանդաց առողջութիւն .
 տկարացելոց զօրութիւն . գլորելոց կանգնու
 մըն . նեղելոց անդորրութիւն . և անվերա
 ւորելոց փարատումն և առողջութիւն . վե
 ղաւորաց գարձ և սուպշխարութիւն . ննջե
 ցելոց հանգիստ և ողորմութիւն , և երկնից
 արքայութիւն . Նա սուպ յետ աղօթիցն ետես
 ՚ի վր ծովուն յարեմտեան՝ ի հիւսիսոյ կող
 մանէ ամոք լուսափայլ . և ՚ի վր ամպոյն տի
 րամայր նբ անծածինն , որ ունէր ՚ի գիրկն
 իւր զորդին միածին լուսափայլ դիմօք .
 և ի հրեշտակք եղեւ պսակ լուսաճաճանչ
 և աստղափայլ ՚ի վր գլխոյ տիրամայր նբ
 անծածնին . Նա ձայն եղև ՚ի լուսափայլ
 նբ մանկանէն սու նբ վարդապետն՝ որ
 ասէր . կատարեսցին անխնդրուածք քո ,

զորս յառճագոյն խնդրեցեր. և զոր այժմ
 խնդրես՝ որք հաւատով աղաչին զես՝ ա-
 պաւինելով՝ ի բարեխօսութիւնքո՝ ես կատա-
 րեցից զամ խնդիրս նց. և դու եկ և
 վայելեա՛ զանսպառ ուրախութիւնս, զոր
 պատրաստեցեր դուքեզ՝ քոյին անտանե-
 լի ճգնութիւնք: Եւ յետ աւետաւոր քաղցր
 բարբառոյն Եսսիւն վերացաւ. և ինքն մե-
 ծաւ գոհութիւն փառաւորելով զքս եջ՝ ի
 լեռնէն՝ և հմուտ՝ ի տաճարն սբ. և անդ
 գոհացողական և սրտահառաչ պառա-
 տանս վեր առաքէր առ ամենասբ երրոր-
 դութին, միջնորդ և բարեխօս ունելով
 զերանուհի կոյսն մարիամ: Եւ յետ համ-
 բարձմանն, ի նոյն կիրակէին հրամայեաց
 միում աշակերտացն իւրոց՝ որ էր յոյժ
 խստակրօն և ճգնադգեաց արեղայ, զի
 հսկմամբ մատուցանիցէ զսբ պնդագն:
 Եւ ինքն հաղորդեցաւ ի կենդանաւորս սբ
 մարմնոյ և յարեանէ որդւոյն սոյ: Եւ ան-
 կաւ ի մահիձս յաւուր քշաթի. և պայ-
 ծառացան երեսք նր որոնս անուանակցին
 իւրոց ստեփաննոսի նախավկային. և բու-
 ղում խրատս ոգէշահս՝ և բանս մըխիթա-
 րականս խօսէր առ ամեղբարսն, որք ի
 կարգաւորաց և յճականաց և յամգաւա-

Լազ Գային և ընդունէին ՚ի նմանէ զօրհ
 նուի՝ և զառողջուի պէս պէս ցաւոց իւ
 րեանց՝ և ուրախուէր դառնային։ Եւ հա
 սեալ ՚ի շաբաթ օր կիրակմաի երեկոյին՝ ՚ի
 մեծի հրաշափառ տօնի գալստեան հո
 գւոյն Խըյ՝ հրամայեաց եղբարցն բառնու
 զինքն՝ և մոլծանել յեկեղեցին ՚ի տաճար
 Խըյն սահակայ։ Եւ պատուիրեաց պաշ
 տօնէիցն ամցն՝ զի յերեկօրեայ մինչև ցա
 ռաւօտն՝ զգիշերապաշտօն կարգ ժա
 մուցն հսկմամբ կատարեսցեն։ Եւ յոր
 ժամ հասին յիւղաբերից աւետարան՝ մտին
 ՚ի տաճար քհնայքն, և սարկաւագունքն,
 զի զգեցցեն հանդերձս՝ և ընթեռնուցուն
 զիւղաբերից Խը աւետարանն։ Եւ տեսին
 զԽը վարդապետն ստեփաննոս՝ ՚ի ծունկս
 անկեալ՝ և զբազուկս յերկինս տարածել,
 և այնպս աւանդել զհոգին իւր առ Խծ։
 Եւ նորա ոչ ումեք յայտնեցին զայն, մին
 չև ցարձակել ժամուն և հոտ անուշ
 բուրեաց ՚ի քիմն ամցն և յետ արձակման
 պատարագին, սպա ազգ արարեալ Խմ
 եղբարցն, որք ձայն բարձեալ յոյժ ող
 բալի սգով և մորմոքմամբ արարին կոծ
 մեծ ՚ի վր նր։ Եւ ապա պատեցին զնա
 մաքուր կտաւօք ըստ օրինի, բայց զմա

զեղէնն՝ որ ոչ էր փոխեալ երբէք, ոչ հա-
 նին յանձնէն ըստ հրամանի Եբայ . և զսցն
 օր թողին՝ի տաճարին անդ՝ի պատիւ մեծի
 կիրակէի . Եւ յաւուր ք շաբթի զկնի Եբայ
 պատարագին՝ զարդարեցին փոքրիկ սայլ
 մի . և իջուցեալ զԵբ մաքուր մարմինն ե-
 դին ի վր սայլին, զի տարցնն ի վանքն ար-
 գելան՝ և անդ ամփոփեցնն, ուն և հրա-
 մայեալ էր նց յառաջագոյն . Եւ իսկոյն
 տեսին, զի բազումք աստի և անտի՝ արք
 և կանայք խաժատեալք ի կատաղեալ
 շանց և վիրաւորեալք . որք և ինքեանք
 ևս ատամովքն իւրեանց խաժատէին զին
 քեանս և վիրաւորէին . որք եկեալ անկան
 առաջի սայլին, ուր էր եդեալ Եբ մար-
 մինն . Եւ տեսին յանկարծակի, զի թա-
 փեցան ի բերանոց նց ուն զձագս մկանց՝
 և առժամայն սատակեցան . և անդէն ա-
 րարեալ փոսս՝ և արկին ի ներքս և ծածկե-
 ցին հողով . և ամ խաժատեալքն և վիրա-
 ւորեալքն բժշկեցան ի ցաւոցն, և առող-
 ջացան ի հիւանդուէց իւրենց . Եւ ապա
 լծեալ զլուծս եզանց՝ վառել լապտերօք
 և անուշահոտ խնկօք տարեալ ի վանքն
 արգելան . և անդ ժողովեալ բազում ե-
 պիսկապոսք և վարդապետք և անթիւ

քահանայք և ժողովուրդք . և մեծաւ
 պատուով եղին 'ի գիր հանգստեան ,
 Եւ շինեցին 'ի վր' սբ մարմնոյն մատուռ
 վայելուչ . որ մինչև ցայսօր և առ յայսօր
 առնէ բազում ցաւոց , և սղգի սղգի
 ակտաւածէտաց բժշկուին . և մանաւանդ
 կատարէալ շանց' և գայլոց , և ամչար
 գազանաց խածատելոց . որք 'ի հեռաւո
 րաց և 'ի մերձաւորաց' հաւատացեալք և
 այլաղգիք' հաւատով և յուսով դիմեալ
 գան յուխտ 'ի սբ գերեզման և յաղօթա
 տեղ սբյն' առնուն զկատարեալ բժշկու
 թիւնն , աղօթիւք և բարեխօսութե
 փաննոսի սբ վարդապետին' ար յուսկայ
 որդւոյն : Եւ արդ' զմի զօրուի և սբան
 չեւագործուի շնորհէն ամի' այս ք սբ մե
 ծատանքս . քի տնապատն սբյն իսահակայ ,
 և վանքն արգելանից' 'ի փառս ամենազօր
 արուեստ : Եւ զի սբ վարդապետս այս ըս
 տեփաննոս' 'ի մանկուէ իւրմէ եր յոյժ
 պահեցօղ . այնքան' մինչ զի յաւուրս քա
 ռասնորդաց սղուհացից պահոց , ժք օրն
 միանգամ ճաշակէր հաց . և զայն ևս ոչ
 յագ , այլ' հոգեպահ մի : Եւ յաւուրս
 չորեք շաբթի և ուրբաթի' և զամարունի
 շաբաթան տնսո՛ւաղ անցուցանէր , և եր

յոյժ ժողովակալ. աղօթասէր և արտասու
 ունեղ. լուսկաց և խորհրդական. անձան
 ձիր ուսուցանող. և յանդիմանիչ ստաճա
 կաց. քաղցրախօս՝ դժած՝ և առատա
 ձեռն. երկայնամիտ և ողորմած, լի՝ ամ
 շնորհօքն ասի։ Արդ յիշատակն օրհնութի
 եղիցի. և աղօթիւք նորին Տէր Զ Բ. Բ.
 Լ. Ժ. Բ. ամի մեզ ողորմեսցի,
 Լ. մէն։

Լ. անդ արեւմտիս և օգոստոսի՝ առաջեւ յա
 ւաճնոց։

Լ. Լաճ մեզ հայիլ պիտի, յայն արեւն՝
 որ լոյս կու ծագէ. շատ կայ ՚ի յա
 րեւ նման, ՚ի պճղին վերայ կու վաղէ։
 Վիտուռն մարդն յարեւ նըման. խօսքըն
 զէտ արեւ կու ծագէ. անգէտ մարդն օ
 ձու նըման, հանապաղ զմարդն կու խոցէ։
 Սարդ կայ որ ռ. աժէ, ռ. կայ որ մէկ մի
 չաժէ. այն մարդն որ ռ. աժէ, յանգէտին
 քով փող մի չաժէ։ Բազուն ՚ի յանտառ
 մարին, թէպէտ բու՝ թէպէտ բազայ է.
 Ճոհարն ՚ի ծովին միջին, թէպէտ քար՝ թէպէտ
 Ճոհար է։ Խելօքն ՚ի յանգէտն ՚ի մօտ, միտք
 արէ՝ թէ ինչ նման է. ճրագն ՚ի առաջև
 կուքին, կու վառի՝ ինքըն չըգիտէ։

Խելօքն է 'ի ծով նրման, որ քանի չափեն
 նա տանի. անգէտն է 'ի տիկ նրման, չափմ
 յաւել լնուէն՝ կու պատուի: Ա. շխարհս 'ի
 տօլասոյ նրման, որ 'ի վեր չ'ի վայր թաւա
 լի. վերինն այլ 'ի վայր դառնայ, և վարինն
 'ի վեր թաւալի: Ա. շխարհս է կանաչ մար
 գեր, մեք 'ի մէջն եմք կաքճու ձագեր.
 գըրօղն այլ բազայ եղեր, կու կրէ մէկ 'ի
 մէկ դար 'ի վեր: Ս. անկտիք երբ 'ի հաց
 նստիք, ձենեցէք աղքատք ձեզ ընկեր.
 մեռնիք չ'ի անգէնն երթայք, կու նստիք
 քանց մէկ այլ 'ի վեր: Ս. արդն որ յօտար
 տեղ երթայ, շատ մի խելք նորա պիտե
 նայ. ամէն մարդոյ ցած կենայ, ապա իւր
 բանն լինենայ: Շ. ստ թագաւորաց մե
 ծաց, չ'իմաստուէն արանց լըսեցի. թէ ան
 չափ չկշտանայ մարդն, յաստընւորէս՝
 մինչ որ մեռանի: Տանին գերեզման դը
 նին, և հողով իւր աչքն լըցճի. ապու փո
 շխմանի չտսէ, թէ հերիք է՝ չայլ չկպիտի:
 Ա. յս որ հետ ինձ արի, չէ՛ արեր ագամայ
 որդի, որ շուշամոսկի ունէի, 'ի գետինն
 'ի վայր վաթեցի: Հազար ձի վազան բե
 րի, վազցուցի չայլ ոչ հասուցի. ինչ
 շահ իմ յետին խելացն, երբ առջի անունն
 տւրեցի: Ս. էկ մարդ մի ճոհար ունէր

'ի խելաց պահել չկարաց . զինչ խելքն 'ի
 վր եկաւ , նա գընաց ճոհարն 'ի ձեռաց :
 Վնաց ինքն 'ի վայր նստաւ , և ողորմուկ
 ու խիստ շատ ելաց . նր լացն այլ ինչ չահ
 է , երբ գնաց ճոհարն 'ի ձեռաց : Աւանդ
 ու Երեւան , թինչ խելօք անխելացայ .
 քան զկաթն յիստակ էի : քան զգարնան
 ջուր պղտորեցայ : Արած մարդարիտ
 էի , յանարժան տեղիք վաթեցայ . քան
 զսապապ 'ի ծալն էի , նա տըկո՛ւկ տըկո՛ւկ
 քակեցայ : Աւ մարդ ես նր ասեմ , որ
 բանայ զբերանն ճամով . հանց գոյն լե-
 զուն գին չունի , թէ լնուոն տուոն մի ճո-
 հարով : Ա՛՛՛՛ երբ զձա արար , ըզհողն ու
 ջուրն ու զօդն հըրով : մըթխալ մի աւել
 չարար , այլ կըշուեց զամէնն չափով :
 Ա եղուն է գործիք բանի , արդարոյն զինչ
 խալիս ոսկի . մարդոյն է մէկ փերթ արել ,
 և օձինն է թ ճըղի : Հանց մարդ որ թ խօ-
 սի , զմէկն քաղցր ու զմէկն լեղի . եղբայր
 է օձին եղեալ . և զնր անէծքն ընդունի :
 Աստի՛ն ճիւղն երբ չոր լինի , ո՛վ մընայ
 թէ իսկի ծաղկի . ճերմակ մազն որ սև
 ներկին ո՛վ ասէ թէ իսկի թափի : Աայց
 մարդ մեղաւոր և սև , ես գիտեմ որ կու-
 ու պիտակի . անձ մէկ բանիկ կուղէ , որ ասէ
 այ ու քաւի :

Handwritten text in a vertical column on the right margin, likely a title or reference.

1	2	3	4
5	6	7	8
9	10	11	12
13	14	15	16
17	18	19	20
21	22	23	24
25	26	27	28
29	30	31	32
33	34	35	36
37	38	39	40
41	42	43	44
45	46	47	48
49	50	51	52
53	54	55	56
57	58	59	60
61	62	63	64
65	66	67	68
69	70	71	72
73	74	75	76
77	78	79	80
81	82	83	84
85	86	87	88
89	90	91	92
93	94	95	96
97	98	99	100

2

3

S

Handwritten mark or character at the bottom center.

175

նիս՝ շուտով ողջանայ. զոր կորուսեալ էս՝
գտանես. Եւրասիամու վիճակն է օ

(Դ)

Վնաս մի ինչ հարցաներ՝ զի բազում նե-
ղութի ունիս. և տրտմութի կայ առաջի
քո. և վիշտք մահու տրտմեցուցին զքեզ.
և եհասի վրքո նեղութի մեծ. չկայր քեզ
օգնական և ոչ սիրելի. զի ՚ի հայրենական
Ժառանգութեն զրկեցար. և այժմ տարա
կուսեալ ես վն կենացդ. Լքդ աղաչեա՝
զմեծ և ուխտ կատարեա՝ նմա. որ կործա-
նե զթշնամինքո. և հանէ զքեզ ՚ի նեղութե-
ի լոյս. և քո սրտի կամքն ՚ի բարին կա-
տարի. ՚ի ջրէ պատրաստ կաց. յուսանու
վիճակն է օ

(Դ)

Վու հով սիրելի՝ վն այդ բանիդ հարցա-
նես և հոգաս հանապազ. մեծ փրկե-
զքեզ և հանէ յմմ նեղութե զանձնքո. և
յանկարծակի ՚ի տեղաց մի ըզգակիս՝ ուս-
տի ակն ոչ ունիս. և բանայ քեզ մեծ դու-
ռնն բարի. ՚ի ճանապարհ երթաս և բա-
րով գաս. և թշնամինքո յամօթ լինի.
հեռաւոր ունիս՝ տեսանես. վիշտք մահու
տրտմեցուցին զքեզ՝ բայց մոռանա՝ զե-
փոխիլ կամիս՝ ՚ի տեղով ՚ի տեղ. սա-

Համբերէ և ապա փոխեաց . և բարի դռա-
նէս . մեծանաս և ուրախ լինիս . յուսա-
սուած որ չմնասիս . դսնիէլն վիճակն է :

(Լ.)

Լարանի է քեզ հիւսիսեւելի՝ զի ամ է քեզ
օգնական . բայց դու շատ ես դատել և
չեղաւ քեզ հանգստութի . և չեղաւ քեզ
օգնական . հչ եղբայր և հչ սիրելի : Այ
դալիս ծովու կու ծփաս . և քո կենացդ
հանգիստ չես գտաներ . հիւսիսեւելի տուր
փառս ասի՝ զի ուրախութի հասանի քեզ յայ
և առողջութի . թէ փոխիս՝ ի տեղացդ բարոյ
հանգիստիս . և ամ դժուարութի՝ ի բարին
դառնայ . ի յաւագաց պատրաստ կաց .
որոգայթ կու ցուցանէ , ի յընկերտաց
և ի մատնողաց պատրաստ կացիր . սբ գրի
գորի վիճակն է :

(Օ.)

Օարմացեալ եմ հիւսիսեւելի՝ զի երկմտեալ
եմ . և ի թշնամեաց ստանիս . և խորհիս
մի մեծանալոյ . և հչ խորհիս առնել զաղա-
չանս ասի . աղօթից ծուլ կու կենաս . վս
այնորիկ եկն՝ ի վր. քո նեղութի մեծ . և թըշ-
նամին քո զօրացաւ ի վր. քո : Վնա աղա-
ծ և ուխտ կատարեալ նրմա՝ զի
զքեզ յամ նեղութի . և ապա տիս

յորոգայթէ . վաճառ ունիս՝ սիրով շա-
հիս . մատթէոսի վիճակն է .

(Լ)

|| Վայր՝ առնուա զոր խորհիս և ուրախ
լինիս . և ազատիս ՚ի չարէ . գընա՛ գո-
հացիր զայ . բայց մարդ մի կայ որ մտօք
չար կու խորհի քեզ . բայց անձ հանէ զքեզ
յամ՝ նեղուէ և որոգայթէ . զի դու բա-
րի ես և անձ բարի առաջնորդէ քեզ . զինչ
՚ի ձեռքդ բան բռնես՝ յաջողէ քեզ ան-
զոր ցանկաս՝ տեսանես . զոր կորուսել ես՝
գտանես . թէ հիւանդ ունիս՝ ողջանայ .
թէ տուն շինես կամ հողագործուի առ-
նես՝ բարի գայ և ըզակով կատարի .
՚ի կախարդ կանանց պատրաստ կայ .
մովսէսի վիճակն է .

(Բ)

|| Վմարդ՝ ժամանակ դժուարուէ եկն
՚ի վր քո . և տրամեցար յաղգականաց
քոց և ՚ի բարեկամաց . և ազգն քո նեն-
գաւոր եղին քեզ . և եղև աւերումն տան
քո . և շրջեցար դու ՚ի վր երկրի . Վա՛յր
հացիր զայ . զի գալոց է քեզ ուրախու-
մեծ . և զով ուզես տեսանես . թէ ՚ի ճա-
նապարհ երթաս՝ բարով դառնաս . զինչ
բան առնես՝ յաջողէ քեզ անձ . զուխան

զոր խոստացեր էս ան կատարէ . թէ վա-
ճառ առնես՝ շահիս . ապա սրտհեշտ կա-
ցիր . սեթայ վիճակն է :

(Թ .)

Այս առաջեցար ի բարին . զոր ունէիր՝
զըկեցար . ոչ կայր քեզ օգնական . ոչ եղ-
բայր և ոչ սիրելի : Այդ աղաքեան զանա-
փրկէ զքեզ և հանէ ի նեղուէ զանձն քո .
Բայց դու անլուրդ ես . և աղօթից ծու-
կու կենաս . վս այնորիկ եկն ի վրքո նե-
ղութին . և դու շրջեցար յօտար երկիր՝
բայց ոչ փնասեցար : Այա թէ ոչ դառնաս
ի կամս ան , գայ ի վրքո նեղութի . և լինի
յափշտակուամն ընչից քոց և աւերուամն
տանքո . և ամբասն զինչ որ բռնես՝ ոչ յա-
ջողի . և զով ուղես՝ ոչ տեսանես զոր կո-
րուսեալ էս՝ ոչ գտանես : Այլ թէ դառ-
նաս ի կամս ան , նա փակած դուռ մի
բացուի քեզ և յաւելու ըզալկն քո :
Ինչ աղօթք արա՛ առ ան . և ուխտ կատա-
րէ . որ այլ չի գործես զչարիս . և ազատիս
ի տանջանացդ . ան գրիգորի վիճակն է :

(Ժ .)

Այն ինչ ի ձեռք բան բռնես , յաջողե-
քեզ ան . և արա՛ զխորհուրդ սիրտ քո :
Բեախա տուր անձինքո՛ղի ուրախանալ

կամիս 'ի բանդ որ բռնել ես: 'ի ձեռաց
 քոց ելանէ ողորմուի. և բազումք կերել
 ցին զվաստակս ձեռաց քոց: Այլ հիշան
 դացար շոտ՝ որ 'ի մահ գնացեր. և ան
 եհան զքեզ 'ի նեղութենէ և ապրեցոյց:
 'ի հեռաւոր տեղաց մի ուստի ակն ոչ
 ունիս՝ բարի գալոց է քեզ. և տրամուի
 քո՝ ուրախուի փոխարկի. զի դու բարի
 ես՝ և անձ բարի առաջնորդ է քեզ. և զա
 ւակ մի շնորհաւոր լինի քեզ: Ապց 'ի սի
 րելեաց բախտ ոչ ունիս. վս այնորիկ պատ
 րաստ կացիր՝ զի 'ի զուր լեզու անկանիս
 և տուգանք տաս: 'ի նա՛ աղաչեա՛ զանձ և
 ուխտ կատարեա՛ նմա. զի ողորմութի նր
 եկեսցէ 'ի վր քո. թէ 'ի ճանապարհ եր
 թաս՝ բարով գաս՝ և բարւոյ հասանիս.
 սողովմնի վիճակն է:

(Ի)

[['ի վայր՝ ապաւինեալ ես 'ի խորհուրդ քո
 և մոռանաս զուխտն անց. զի տրամուի
 քո՝ ուրախութի փոխարկի. 'ի հեռաւոր
 տեղաց՝ ձայն աւետեաց լսես. կամ հեռա
 ւոր մարդ տեսանես. և յայ առողջութի
 գտանես. և դարման ոսկերաց քոց ոչ պա
 կասի. բայց ծնողաց քոց դիմադարձ մի
 լինիր. նա զինչ որ ուզես յայ՝ տայ

102 *Handwritten text in a cursive script, likely a historical document or manuscript. The text is written in a dark ink on aged paper. The first line begins with a large, bold initial '102'. The script is dense and flowing, characteristic of 17th or 18th-century handwriting. The text appears to be a list or a series of entries, possibly related to a collection or inventory. The final line is partially cut off.*

My dear friend
I have now received your letter
and am very glad to hear
of your recovery. I hope
you will be able to go
home soon.

I am very sorry to hear
that you are still in the
hospital. I hope you will
be able to go home soon.
I am very glad to hear
of your recovery. I hope
you will be able to go
home soon.

(x)

[illegible]

Սիւսայր՝ նենգաւոր տեսանեմ զքեզ .
 արդ ՚ի չարդ յիմարեալ ես և ընկերոջդ
 չար առնես . և ամենեցուն մնաս խորհիս :
 Ի նկեա՞ զնենգուի ՚ի մօաց քոց . և ընկե-
 րոջդ չար մի խորհիր . որ չանկանիս ՚ի մեծ
 նեղութի . և պատուհասս գայ ՚ի վր քո :
Սչ խնդացիր ՚ի ծնողաց և հչ ՚ի զաւակաց .
 և ամբասն զինչ որ առնես՝ հչ յաջողի քեզ :
Ըղաւ թէ դառնաս ՚ի կամս ւայ՝ և ընկե-
 րոջդ և ամէն մարդոյ նենգուի՝ հչ առ-
 նես , նա ծագէ ամ զողորմութի իւր ՚ի վր
 քո և հչ լինի պակասումն ընչից քոց . և
 մեծաւ պատւով վախճանիս . յաբեթայ
 վիճակն է :

Սիւմարդ՝ աւետիս տամ քեզ . զի կա-
 տարեցաւ վիճակս քո ՚ի բարին . և դու
 խորհուրդ ունիս ՚ի սիրտըդ . հչ կարես
 բռնել և հչ թողուլ . մի վախեր գնա՛ ա-
 րա . զի խորհուրդ քո ՚ի բարին կատարե-
 ցաւ : **Ս**պ լուսինն որ զխաւար գիշերն լու-
 սաւորէ՝ այնպէս լուսաւորի խորհուրդ
 քո որ բռնել ես . և հասանէ քեզ լուղակ
 ՚ի յայ . և ումցանկաս հասանիս . և յա-
 ւագաց բարի գտանես . և աւետեաց ձայն

լսես և խնդաս. գնա՛ աղաչեա՛ զնձ. որ խոր
տակէ գքո թշնամին . սբ գրիգորի
վիճակն է :

(Ն)

Ս՛վ մարդ՝ ահա՛ ՚ի նինգուլ տեսանեմ
զքեզ . զի մեծամեծ փաթերակ կայ ա
ռաջի քո . և ՚ի նեղուլ անկանիս : Եւ ազումք
խորհնքեզ չարիք և դու ոչ իմանաս զկո
րուստ անձին քո . և զի ոչ առնես զկամս
այ՝ վս այնորիկ եկն՝ ՚ի վր քո նեղուլ . զինչ
խորհուրդ ունիս ոչ կատարի . թէ՛ ՚ի ճա
նադարհ երթաս՝ ոչ լինի քեզ բարի :

Եւ թէ դառնաս ՚ի կամս այ և զուխտն
զոր խոստացեր ես կատարես , նա փա
կած դուռ մի բացուի քեզ . և յաւելու
լուզակն քո :

(Ը)

Ս՛վ մարդ՝ բազում բարիս կու տեսանեմ
առաջի քո . առնուս պարգևս՝ ՚ի մեծամե
ծաց . ուրախանաս և բարոյ հանդիպիս .
խնդաս ՚ի զաւակէ ՚ի կնոջ քումմէ . և
լինիս յիշատակ ծնողաց քոց : Եւ զինչ որ
խնդրես ՚ի յայ՝ առնուս . զոր կորուսեալ
ես՝ գտանես . թէ հեռաւոր ունիս՝ գայ
որ տեսանես . թէ հիւանդ ունիս՝ ողջա
նայ . և օր քան զօր աղէկ լինի քեզ :

(1)

[[Վ մարդ՝ պարտ է քեզ յամժամ գոհանալ զայն, զի թէպէտ տրամեցար, բայց դարձեալ ուրախանաս և շնորհն այն հասանէ՝ ի վր. քո: Եւ պատրաստ կաց ի յանօրինաց և ի դազանաց. զի փաթորակ կայ առաջի քոյ. բայց պարգև և շնորհ ի յայն առնուա. և յորդոց խնդաս. և լինիս ցանկալի ամենեցուն. և ոչ լինի պակասուան ընչից քոց: Թէ փոխիս ի տեղովէ ի տեղ՝ բարոյ հանդիպիս. ձայն աւետեաց լսես. և հեռաւոր մարդ տեսանես. քո մահն ի բարի օր լինի. և երազն որ տեսերես բարի է. աբրահամով վիճակն է:

(2)

[[Վ մարդ՝ փառաւորիս յամենեցունց. և առնուա բարի իշխանուի. որ թշնամին քո յամօթ լինի. և յօտար երկիր գնաս. և առնուա պարգևա. և յամժամ ժողարութիւն յազատիս. և զով ուզես՝ բարով տեսանես. և ում ցանկաս հասանիս: Եւ պատրաստ կաց ի դազանաց և ի բարձր տեղաց. ի կախարդաց և ի պնտերես կնոջէ՝ որ շատք է փաթորակեր: Քնա՛ աղաչեա՛ զամ. և ուխտ կատարեա՛ նմա. որ ազատիս ի շատ չարէ. և բանայ քեզ ար ամ. դուռն բարի

Լ ըռ զակաց . սեթայ վիճակն է :

(Գ)

Պարգև բարեաց տացէ քեզ ան . չարն
հեռացաւ և բարին մօտեցաւ կամօքն
այ : Եւ դու ես իմաստուն որ խրատ տաս
անցուն . բայց պահեա՛ զանձն քո 'ի չար
կամաց . և զոր ինչ գործեա և բան որ բռն
եա 'ի բարին առաջնորդէ քեզ ան ան .
բայց 'ի սիրելեաց բախտ ոչ ունիս : Եւ ան
ապաւինէ որ կործանէ զքո թշնամին . և
հանէ զքեզ յամ որդայթէ . և լինիս
ցանկալի ամենեցուն . և ոչ լինի պակաս
սուսն ընչեց քոց . և զինչ խորհիս՝ կատար
րի 'ի բարին . մոխսեսի վիճակն է :

(Զ)

Վմարդ՝ մեծ էիր և խոնարհեցար .
զմտաւ անեա և ոչ կարեա կալ 'ի վր մէկ
խորհրդի . դու մի տրամիր՝ գալոց է քեզ
ուրախուի մեծ՝ ուստի ակն ոչ ունիս . զի
դու բարի ես՝ և ան բարի առաջնորդէ
քեզ : Փոխանակ տրամուէ՛ ուրախուի
լինի քեզ . բարի և շնորհ 'ի յայ առնուս .
Դնա՛ արա՛ զխորհուրդ քո . թէ վաճառ
առնեա՛ շահիս . թէ 'ի ճանապարհ երթաս՝
բարով գաս . այլ 'ի վր բախտիդ քննուի
առնեա և հարցանեա . ան բանայ քեզ

զգո՞ւմն բարոյ . և յաւելիւ ընդակնքո .
մատթէոսի վիճակն է :

(Ռ.)

|| Վ մարդ՝ սասանեցար յ զգաց և՛ի յա-
նօրինաց . հասաւ ՚ի վճ. քոյ տրտմուի .
և եղև աւերուամն տանքո՛րի բարեկամաց
քոց . և խորհուրդքո հանապազ ՚ի կո-
րուստ ելանէ : || Վ այր՝ մի՛ հոգար վնայդ
բանիդ զի շուտ գայ ՚ի վճ. քո բարին . և
տօր տօ՛հ հանէ զքեզ ՚ի խաւարէ՛ի լոյս . և
քո մուրատին հասանիս : || . Եւ պատրաստ
կաց՛ի յընկերացդ՝ զի բախտ ոչ ունիս .
և կայ մարդ մի չարակն՝ որ մտօքն չար կու
խորհի քեզ . ՚ի կախարդաց պատրաստ
կաց . աղամաց վիճակն է :

(Ս.)

|| Վ մարդ՝ վտան կենացքոց ընդէր հար-
ցանես . զինչ յիմարեալ ես և չար խոր-
հիս . և ամենեցուն մնաս առնես . ՚ի տե-
ղովէ ՚ի տեղ փոխիս՝ և ուրեք ոչ հաստա-
տիս . զոր կորուսեալ ես ոչ գտանես :
|| Ինկեա՛ զնենգուի ՚ի մտացքոց . ընկե-
րով և ամէն մարդոյ չար մի՛ խորհի .
թէ չլսես՝ փաթերակիս . գնա՛ աղաչեա՛
զմօ՛ որ աղատիս ՚ի շատ
չարէ :

(Ա)

Ո՛վ սիրելի՛ տոբար փառաւայ. զի գալոց է
քեզ ուրախո ի ուստի ական ոչ ունիս։
Եւ ի քո վաստակէն շատ մարդ կերիցէ.
և զաւակ մի խնդա միտ տեսանես. և տայ
քեզ անձ առողջութի։ Եւ պատրաստ կաց
ի բոլորերես մարդոյ մի և ի չարակն կնո
ջէ. որ մտօքն չար կու խորհին քեզ. պատ
րաստ կաց ի նոցանէ որ չանկանիս ի փոր
ձութի. և զինչ բան բռնես՝ ի բարին ա
ռաջնորդէ քեզ օր ան օր. ի հեռաւոր տե
ղաց ձայն աւետեաց լսես. կամ հեռաւոր
մարդ տեսանես. գնա արա զխորհուրդ քո։

(Տ)

Ո՛վ մարդ՝ ուրախութի մատուցանեմ
քեզ. զի դու վախել ես և տարակու
սեալ. զրաքախտ ես. զոր կուտաս՝ կովով
կու թափես. ումբարի կառնես՝ նա քեզ
չար կառնէ։ Եւ յաղութից և աղաչա
նաց դու մի՛ դադարիր. գալոց է քեզ ու
րախութի ուստի ական ոչ ունիս. հեռաւոր
ունիս գայ. թէ աղքատ ես՝ հարստանաս.
թէ հիւանդ ունիս՝ ողջանայ. թէ երազ
եա տեսեր բարի է. զուկասու վիճակն է։

(Բ)

Ո՛վ մարդ՝ ցնծութի և ուրախութի տամ
քեզ.

ՍԻ

192

քեզ.

քեզ • զի դու բարի ես և անբարի ա-
 ռաջնորդէ քեզ • և ում ցանկաս՝ հասանիս •
 բայց թշնամիքն քո շատ են • այլ դու մի
 վախեր ՚ի նցնէ՝ զի անէ քեզ օգնական •
 բայց և ՚ի կնոջէ բախտ ոչ ունիս • Պատ-
 րաստ կաց որ ՚ի զնտան չի մտանես • իրաւի
 տուգանք տաս • այլ իբք զոր կորաւ քեզ՝
 դտանես • ի ճանապարհ կամիս երթալ
 և երկու միտ ես • գնա և մի վախեր • ընդ
 որ երթաս՝ բարով դաս • զինչ բան որ բըռ-
 նես՝ յաջողէ քեզ ան • և զինչ խորհուրդ
 որ ունիս՝ ան ՚ի բարին կատարէ • և օրքսն
 զօր աղէկ լինիս • մարկոսի վեճակն է •

(3)

Ո՛վ քրդ՝ բազում բարիս կու տեսանեմ
 առաջն քո • առնուս պարգևս ՚ի մեծա-
 մեծաց • ուրիանաս և բարւոյ հանդիպիս •
 Խնդաս ՚ի զաւակէ և ՚ի կնոջէ քումմէ •
 և լինիս բարի յիշատակ ծնողաց քոց • թէ
 փոխիս ՚ի տեղացի՝ ոչ հաստատիս • զի
 անբեան նենգաւորք են քեզ • Եւ ՚ի մար-
 դոյ բախտ ոչ ունիս • այլ քո բարին ՚ի յայ-
 է • և տայքեզ ան զիւր հղորմունն անչափ •
 և յամ դժուարութե ազատիս • և երազն
 որ տեսեր ես՝ ՚ի բարին կատարի •

(Ի)

Այլ մարդ՝ չարն հեռացաւ ի քէն և բա-
րին մօտեցաւ . այլ սասանեցար ի յաղ-
գաց և անօրինաց . և աղգն քո նենգաւոր
եղին քեզ : Պատրաստ կացիր ի թշնամեաց
քոց . զի կայ մարդ մի չարակն և կին մի
կախարդ՝ որ մտօքն չար կու խորհին քեզ .
և ի յընկերտացդ փաթերակ կայ առաջի
քո . դժոտան ունիս կամ ճանապարհ կամ
վաճառ՝ համբերէ . աբրահամու վիճակն է :

(Թ)

Նզգամ մարդոյ մի լինիր սիրելի որ չի
փաթերակիս . և ի ձեռացդ քո իւր է
կորել . մի տրտմիր՝ ի քեզ դառնայ :

Ընչ խորհուրդ ունիս կատարէ ան-
բայց սակաւ մի համբերէ . զի պիղծ մարդ
մի կայ՝ որ մտօքն չար կու խորհի քեզ .
թէ պատրաստ կենաս իւրմէն՝ նա ազա-
տիս ի չարէն : Կամէր դալ ի վր քո տըրտ-
մութի՝ բայց ան խափանեաց . և բազում
ուրախութի կայ առաջի քո : Եւ ման ես
աբրահամու . որ ան զինքն սիրեաց և ի
տրտմութե ազատեաց . նոյնպէս և դու ա-
զատիս յամչարէ . սահակայ վիճակն է :

(Բ)

Այլ այր՝ տեսանեմ զքեզ որ մէկ մի կու

յաղթէ քեզ • և լեզուով և արտոմն չար
 կու խորհի քեզ • կամ հորմի կու փորէ
 քեզ • այլ ոչ կարէ մնաս առնել քեզ •
 Ղանա ուխտ կատարէ այ՝ որ շատ չարէ
 փրկեցար • զի հասեալ էր քեզ նեղութի
 մեծ • այլ անդ դարձոյց զչարն 'ի գլուխն
 իւր • Եւման ես դու իսահակայ • որ հայր
 իւր կամէր զենուլ զնա • այլ անդ օգնեաց
 նմա և փրկեաց զնա • և բազում մեծ ուե
 և փառաց հասաւ • նոյնպս և դու ուրա
 խանաս կամօքն այ • սբ յակոբայ
 վիճակն է •



Այսոցիկ ամենեցուն գիտօղն է ան
 ճշմարիտ • զի մարդ ոչ է տեսող սրտից
 և ապագայից • այլ անդ • Աւստի զոր ինչ
 տսն և գրեն իմաստասէրք • թէական
 կարծեօք են • Այս որոյ նմա միայնոյ այ՝
 գիտողին գաղտնեաց և յայտնողին ծած
 կութից՝ փառք 'ի յամարարածոց 'ի յա
 լիտեանս յաւիտենից
 Ըմեն •

Խոյ

Յուշ

Երկուս

Խեղդեալին

Ընդ-ծ

Կոյս

Կռն

Կարէ՛ճ

Ընդ-շնուս

Ընդ-շնուս

Տրտն

Չուին

Նրա

Ըրէ-դաւին

Ընդ-սաբէր

Փայլածո

Ընդ-սինն

Երկուս

Ընդ-սինն

✱ Խոյն :

Ո՛վ մարդ՝ լոյսն ահագինն փառաց և շառաւիղն աննոճաղ, ծագեացի 'ի վր քո ուր արեգակն 'ի վր արարածոց, նոյն պէս և դու 'ի բանս քո ուրախանաս : Այլ ուխտ ես դրեր կատարեա . և Ծր լցուսցէ զինդ-րո՛ւածս քո, ապա երազ ես տեսեր և զարհուրեր՝ մի՛ վախենար երազն 'ի բարին եղև :

✱ Յո-ւն :

Ո՛վ մարդ՝ լուսաւորի խորհուրդ սրտիդ, յամժամ արտուամեա . մի՛ վախեր՝ զե չարն հեռացաւ 'ի քէն և բարին մօտեցաւ . և զոր խորհել ես շուտով տայ քեզ անձ զիւր ողորմութիւն :

✱ Երեւոյրն :

Ո՛վ մարդ՝ զինչ որ խորհել ես՝ կատարի աատուծով . զի շատ բարուի կայ յայդ խորհուրդդ, զի դու բարի ես՝ և հարամն քեզ չի դար . առ ժամն արտուամեա և 'ի ցնորի կաս . մի՛ ցնորիր՝ զի շատ բարուի կայ առաջի քո, և զինչ խորհել ես՝ 'ի բարին կատարի անձ :

✱ ԽԵԿԷՊԻՆՆ ։

|| 'վ մարդ՝ զոր ինչ խորհել ես 'ի սերտդ՝
վախիւր 'ի դմանէ որ չի վաթերակիս .
զիքո բանդ 'ի վերայ չի գար . պատրաստ
կացիր 'ի չար կամաց . զի ընդ քեզ ուտեն
և ըմպեն և քեզ չար կու խորհին ։

✱ ԼԷԻԾՆ ։

|| 'վ մարդ՝ տայ քեզ ամ զիւր ողորմուին .
ցանկուի սրտիքո կատարի . և 'ի մօտ ա-
ւուրս՝ ձայն աւետեաց լսես և ուրախա-
նաս . բայց 'ի կռճոյ պատրաստ կացիր . և
զոր ուղես՝ տեսանես կամօքն ար ։

✱ ԿՊԿՆ ։

|| 'վ մարդ՝ զլոյսն անըսպառ ծաղեսցէ
ամ 'ի վերայ քո . և ողորմութիւն իւր
յաջողեսցէ քեզ զոր դու կամիս . այլե-
րազ ես տեսեր և զարհուրեր . մի՛ վախեր
զի թէ արտ պատերազմն ահագին է , բայց
նշան բարւոյ է . ըռզակ գալոց է քեզ
ուստի ակն ոչ ունիս . և այլ զինչ խորհել
ես՝ կատարի . թէ հիւանդ ունիս ողջա-
նայ . և պատուհասն 'ի քէն հեռանայ կա-
մաւն ար . այս աւուրքս որ 'ի վր քո գա-
լոց է՝ լաւ է քան զառաջինան ։

✱ ԿՂԻՆՆ ։

|| 'վ մարդ՝ զինչ որ խորհեցար մի՛ վախեր
այն

այնպէս ուրախանաս որպէս պիտոյ է քեզ,
բայց զխորհուրդդ ամէն մարդոյ մի ա-
սեր. զի քո վիճակն 'ի կշիռն է. և ամէն
բան քեզ յաջող է. յիշոցաց պատրաստ
կացիր և յամ Ժամադոթք արա. զի ամէն
չար'ի քէն հեռանայ և 'ի հոգոց ազատիս.
Թէ 'ի ճանապարհ երթաս՝ բարով գաս.
և Թէ վաճառ ունիս՝ բարով շահիս.

✽ Կարե՛մն :

Ո՛վ մարդ՝ դիտացիր որ կարճի Թիւնով
կամի հարցանել զքեզ մարդ մի. պատ-
րաստ կացիր 'ի նմանէ և յայդ խորհրդոյդ
հեռացիր՝ որ պահէ զքեզ ան. Թէ չէ
յետոյ սպաշաւես. և Թէ համբերես սա-
կաւիկ մի, զինչ որ կամք ունիս կատարի:

✽ Լ'դէղնա-որն :

Ո՛վ մարդ՝ Ժամանակս ըզորդեցաւ քեզ.
և քո սրտին խորհուրդն 'ի բարին կատա-
րեցաւ. արա՛ զինչ որ կամիս և խնդաս 'ի
բանս քո. և տայ քեզ ան՝ զխնդրուածս
քո. մի՛ արտորոսը սակաւ մի համբերէ.
և ուստի ակն ոչ ունիս՝ ուրախանաս.
Թէ տուն շինես՝ յաջողէ քեզ ան. և 'ի
նեղուէ տղատիս. Թէ հեռաւոր ունիս՝
տեսնուա. բայց 'ի լեզուէդ պատրաստ
կացիր:

✠ ԼճԵՂՋԻ-ԴՆ ։

Ո՛վ մարդ՝ յիշեա՛ զի՛մ ի բանս քո և նա
հանէ զքեզ ի տրամուկէ զի տրամուկի
հասանէ քեզ ի սիրելեաց քոց . կասես երբ
ճար լինի ինձ կամ յաջողուի . և կու ցու
ցանէ թէ հիշանդանաս՝ բայց շուտով
ողջանաս . թէ հեռաւոր ունիս դայ . և
կատարի խնդիրքդ ի բարին ։

✠ ՏՐՀՈՒՆ ։

Ո՛վ մարդ՝ բարուի շատ ունէիր և յա
մենէն զրկեցար . պանդըխտեցար և
չար դիպեցաւ քեզ . կըռի՛ւ սիրելեացդ՝
հետ քեզ եղեն . և զէտ նաւի վրձովուն
երերման կաս . և կամիս քո կենացդ հան
գիստ գտանել՝ և ճար չես գըտաներ . ո՛վ
մարդ մի՛ տրտմիր՝ զի տրամուկի քո յու
րախուի փոխի . և զոր խորհիս՝ կատարի
կամաւն ւոյ ։

✠ ԶԿՆՆ ։

Ո՛վ մարդ՝ հեռաւոր տեսնուս . կամ ձայն
աւետեաց լսես և խնդաս . զի դիժարն
քո անցաւ և բարին մօտեցաւ . այլ թէ
խոստումն ունիս կատարէ՛ . և յիշոցաց
պատրաստ կացիր . և որպէ՛ կապեալքն որ
արձակին՝ և փակել դուռն որ բացուի .
այնպէս բանալոց է քեզ ի՛մ զդուռն ո
ղորմութի ։

✱ Հրապհ ։

|| Վ մարդ՝ նման ես դու հովուին որ փա-
խեալ ՚ի ցրտոյն և եմուտ ՚ի յայրն . և
ոչխարաց հոգս ոչ տարաւ . երեկ գայլն
և արար գէշ . նոյնպէս և դու ՚ի բարւոյն
հեռանաս և երթաս զհետ չար խորհրդ-
ոցն . պատրաստ կացի նմանէ և ՚ի նենգա-
ւոր մարդոյ . և յայդ խորհրդոյդ հեռա-
ցիր . զի չար խօսք կան հետ քեզ . այլ
բանդ որ ՚ի մտիդ է՝ քեզ չար է . ահա ա-
սացի քեզ զամբ ։

✱ Աբեգաղին ։

|| Վ մարդ՝ ոնց տրեգական որ լուսաւորէ
զարարածս , այնպէս լուսաւորի խորհուրդ-
քո . զոր կամիս՝ կատարելոց է քեզ անձ ըզ
բարին . բայց ՚ի թուխ բոլոր երես միդյ մի
պատրաստ կացիր . զի սրտովն նենգէ ըզ
քեզ . և լեզուովն քաղցր խօսի ընդ քեզ .
բայց դու ՚ի բանի մի վր հոգս ունիս՝ և
հետ մտիդ քննուի կաս . մի վախեր՝ շու-
տով լուսաւորի խորհուրդ սրտի քո ։

✱ Աւաբերն ։

|| Վ մարդ՝ ՚ի հետ չար մարդոյ ՚ի շուրջ
մի գար . ապա թէ ոչ լսես փաթերակիս
՚ի նմանէ . և ՚ի քո լեզուէդ պատրաստ կա-
ցիր . և յամէն մարդոյ քաղցր խօսք մի
խա

խտբիր • զի կամին կորուսանել զքեզ •
սակաւ մի համբերէ • թէ չէ յետոյ ասպա
շաւեա • շատ բարու թիւն կայ առաջիքո •
կորուսան գտանի • և զինչ որ առնես
յաջողէ քեզ ամ •

✱ Փայլածոսն •

Սվ մարդ՝ ի հեռաւոր տեղեաց ձայն ա
ւետեաց լսես և խնդիր քո կատարի • և
ուխտն զոր դրել ես կատարէ ամ • չարն
հեռանայ ի քէն և բարին մօտենայ քեզ •
զինչ բան որ ունիս՝ արա՛ համարձակ • զի
քո կամքն լինի և ուրախանաս ամ •

✱ Ի հասինն •

Սվ մարդ՝ ցօղ ողորմուէն այ անպակաս
լիցի ի քէն • և ար ամ հաստատեսցէ ըզ
սիրտ քո • զոր ինչ խորհել ես՝ արա՛ և մի
վտխեր • զի շատ բարու ի կայ առաջիքո • և
ի հեռաւոր տեղաց ձայն աւետեաց լսես
ի մօտ աւուրս և ուրախանաս • և զինչ սրբ
տովդ ուզես՝ աչօքդ տեսանես և խնդաս •

✱ Ի քեանն •

Սվ մարդ՝ ընդէր անիրաւ ջանաս և ի
զուր աշխատիս • զի դժուրին է բանդ և
անհաստատ գործդ • զի խորհուրդդ այդ
որ ի սրտիդ է ոչ է պատշաճ ժամանակիս •
իոխանակ բարւոյ՝ չոր հանդիպի քեզ • և

Թէ չլսես խրատու՝ վաթերակլիս Ժամանակ մի համբեր տուր սըրտիդ . և դժոյսդ առ անձ կալ հաստատուն և մի՛ վախեր . զի Թշնամին քո գլորի՝ և դու կանգնիս կամաւն ան :

✱ I Պատգամ :

[[Վմարդ՝ վիճակս ՚ի բարին ելաւ քեզ . այս զաղարու վիճակն է որ երեքօրեայ մեռեալն յաթեալ . (ատ աւուրք էր որ քո վիճակն ՚ի պրծէն ելած էր . և դու ՚ի տըրտմութե կաս՝ զէրդ նաւ երեքալով ՚ի վրծովուն . մի՛ վախեր՝ շուտով ելանես ՚ի նեղութէդ : Այլ խոստովմն զոր ունիս կատարէ . և յիշոցաց պատրանստ կաց . և զաղօթս հասարակաց կատարես՝ որ ելանես ՚ի նեղութէդ . և ՚ի մեծ մարդու մի բարի լինի քեզ :



Ան՝բեյն ընկերացոյ, պարտիս իմանալ ցանկէն
 առիւն, ինչ զի նա ի Բէջնաբարտիս պղնձէ
 Ժաղարիս ։

Պատմութի պղնձէ քաղաքին ։	3
Պատմութի փահլուլ Թագաւորին	48
Պատմութի նուշրավան Թագաւորին	61
Պատմութի խիկարայ իմաստանոյ	71
Պատմութի աղջկան և մանկան	106
Պատմութի ալեքսիանոսի	129
Պատմութի տէր յուսկան , և որդւոյն	144
Ստեփաննոսին	172
Խորատք ասացեալ յառաջնոց	176
Տղայոց զբօնելք	Լ 197



ՅԵԶԱԳԱՆԻՍԻԱՆ ՏԿՈՂԷ

ԵՆՈՐՀԻՇ և ՈՂՈՐՄՈՒԼԷՆ ԿԵՆԱԿԱՐՈՂԻՆ և ԿԵՆԱՂՈՐԻՆ՝ ՀօՐ և ՈՐԴԼՈՅ և ՀՈԳԼՈՅՆ ԽԵՅ, և ԲԱՐԵԽՈՍՈՒԼԷ ԲՐԱԳԱՀԱՍ ՎԼԿԱՅԻՆ ՍԷՅ ՄԵԾԻՆ ՍԻՆԱՍԱՅ, յանկ ելեալ աւարտեցաւ տպումն պատմութեան գլբոյս, որ կոչի՝

ՊՊՆԶԻ ՔԼՊԼՔ

ԲՐԴ՝ ՈՎ ԲԱՐԵՄԻՍ ԸՆԹԵՐԿՈՂՔ ՍՈՐԻՆ, ՚ի հանդիպին ձեր սոյնոյ գլբկանս, յիշեմք ՚ի քսյոյսն մեր բնաւիցս, զՏԵՐԱԳՈՒ ՊՕՂՈՍԱ՝ հանդերձ բարեջան և բազմաշխատ որդւովք իմովք ԼԾԱՄՈՒՐԻՇ՝ գէորգաւ և գալստի՛, որք շարեցին զգիրս կապարեայս:

ՅԻՇԵՄՔ և զՎԶԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻՍ՝ ըզբալո՛ւնցի տիրատուրի որդի զտիրացու ՕՎԷԱՐՆ, և զՀԵՐՎԱՆԳԻ ԽՐ հարապետի որդի զաճցւ պօղոսն, և դուք յիշեալ լի նիջեք՝ յայ մերմէ:

ԼԾԱՆ:





